

3976

1881

491.99-8  
U - 22

010  
2002

491.99-8  
LP - 22

Printed in Turkey

Մ ՆՈՐ 68

# ՀԱՅԹԵՐՑԱՐԱՆ

ՅՈՒՆԵՑ

Ս. ՄԱՄՈՒՏՅԱՆ

ԵՐԱՐՈՐԴ ՏԻՊ



ԶՄԻՒՐՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՎՐԱՐԾ ՏԻՏԵԼԱՆ

— 1881 —

## Ն ԱԽԱԲԱՆ

Ա. ՏՊԱ.Դ. ԹՈՒԹԵԱՆ

Յաղկոցի աշակերտ մը ոչ միայն կարդալ, զրել ու հաշուել այլ եւ բնական ու ընտանի բաներու վրայ թիշ շատ ծանօթութիւն կրնայ ստանալ եւ դիտելու ու դատելու կարողութիւնը մշակել, եթէ միայն այս նպատակին յարմար եղանակ, դասատետր չ դասատու գտնուին։ Դժբաղջաբար շատ տեղ այս երեք միշտոցներէ ալ զուրկ են մեր զարոցներն եւ արդի կրթութեան ընթացքով շատ մը պարզ ու ստվորական իրեր որ ծանօթ են բամիխուն մտքի՝ անծանօթ կ'մնան աշակերտին, որ շատ շատ անոնց անոնմը կ'սորվի առանց հասկընալու թէ; այդ անուան տակն ի՞նչ կայ։ Շատի այս տեսակ սկզբնական գիտելիք տղօց աւանդելու լաւագոյն զրգինն ու միջոցն է ընթերցարանի մը մէջ ամփոփել, այնպէս որ ծանօթութիւնները կարգաներկայանան միշտ ի նկատի ունենալով մանկան մտաւոր կարողութեան աստիճանը։

Այս պակասը գմէ ըստ մասին լեցընելու համար այս ընթերցութեանը պատրաստելու փորձ մ'ըրի, որ զինաւորապէս բնական եւ ընկերական իրերու լոկ արդարութիւն երեւոյթները կ'բացատրէ։ Այլ եւ այլ դասազրեր եւ յատկապէս օրինակ առի դարձեալ Զէմպըրսի Կրթութեան ընթերցութիւն մէկ զործը զոր տեղ տեղ համառօտեցի եւ խոթին մասերը զուրս զեցի, դասատուին Խողով զժուարիմաստ ու մութ կէտերը պարզելու, մանաւոր օրինակներով, եւ աշակերտին հետարրբութիւնը շարժելու։

Այս դասազիրքն երկուրի բամենեցի։ Ա. մասը՝ Պարու Հայութականութեանեւ եւ Պարու Հայութեան կը պարունակէ Հայութական կիրեւ ընթերցանութեան եւ մտածութեան վարժութիւն։ Բ. մասն ընտանի Գէտելէտ կ'պարունակէ դարձեալ Հայութական, որ աշակերտին միշտը զարգացընելու կ'օգնէ։

( 665 /  
40 )

16 699 - 58

# ՀԱՅԹԵՐՑԵԲԵՆ

## ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

Ա.

ՊԱՐՁ ՆԱԽԱԳԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Տղայ | Կին | Կենդանի | Շուն | Թռչուն  
Մարդ | Ձուկ | Որդ | Ջի | Մոռկ

Տղան դպրոց կերթայ — Այս գիրքը կը կարդայ — Այս մարդը զի՞ր կը դրէ — Կինը կար կը կարէ — Այս կենդանին խոտ կուտէ — Ջին կը վազէ — Շունը պոջ կօրէ — Եղբայրա թռչուն մը բռնեց — Շատ ձուկեր կան ծովուն մէջ — Ճանճը կը թռի — Որդը կը սողայ — Կատուն կերաւ մուկը:

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Դաշտան ու լեռ, լուսակ ու աղբյուր պայմանագիր  
Հանուն ունի մաս անհանդաւ ու անհանգ ու ուն  
աշխարհագրական բարձրավագ բարձր անդ  
գումառար, փափառ գույնու մասնակուն ունի մաս մաս, ինչ  
ուն ուն ուն ուն գորգառակ: Ճիշճար տառակ է  
Այս հար ընթերցաւիս Ա. տպագրութիւնն արդէն սպառած  
ինելով՝ այլ եւ այլ կողմերէ եղած խնդիրքը կ'յորդորեն զիս  
ժողովութեաւ ծեռնարկելու:

Ուրիշ դասագրեանց նայելով՝ Կար ընթերցաւիս (2000 օրինակ) այսրան կարծ ժամանակի մէջ սպառումն ապացոյց մ'ու միայն անոր օգտակարութեան՝ որով ազգային դպրոցներու մէջ զգալի պակաս մը կ'լեցընէ, այլ եւ անոր ամսութեան և դասագրեանց տրուած կարեւորութեան:

Աւելորդ համարեցի առ այժմ՝ նոր տպագրութեան առջիւնիթերու եւ ոմի մասին փոփոխութիւններ ներմուծել, միայն զրբոյկիս Ա. մասն աւելի մեծ տառերով տպել տալ արժան դասեցի ընթերցանութեան դիւրութեան համար:

Հ յոմվար 1881  
Զմիտրիս.

Մ.

Անտանիք | Տուն | Քաղաք | Եկեղեցի  
Մարդիկ | Պալատ | Դիւլ | Դպրոց

Ամեն ժիր մարդիկ կաշխատին — Մեր ընտանիքը գիւղն է . տունը մինակ ծառան մնաց — Թագաւորին պալատը շատ փառաւոր է — Այս քաղքին փողոցները միշտ աղտոտ են — Խմ բարեկամն գիւղը կը նստի — Ամեն օր դըպրոց կերթամ — Աիրակի օրերը հայրս զիս եկեղեցի կը տանի :

—

Անուն | Հայր | Հայրենիք | Աստուած  
Մակդիր | Մայր | Օտար | Խելք

Խմ հօրս անունը Գրիգոր է , մականունը Աէֆերեան — Մայրս առունը կերակուր կեփէ — Հայրս շուկայ գնաց — Մեր հայրենիքը Հայտատան կը ըստի — Մենք օտար երկիր կապրինք — Աստուած կը պաշտպանէ աղաքը — Խր խելքը դլուխը չէ :

Ամառ | Զմեռ | Աշուն | Արօր  
Դաշտ | Լեռ | Գարուն | Պտուղ  
Մշակ | Ծառ | Ծաղիկ | Ցորեն

Ամառ շատ տաք կընէ այս տեղ — Դաշտը խոտը կը չորսայ — Լեռին վրայ ծառեր կան — Մշակը կը հերկէ երկիրը — Զին արօրին կապած է — Գարունը հասաւ . օդը բաց է — Մեր պարտէզն աղւոր ծաղիկներ ունինք — Պղծիկ եղբայրս հայ չուտեր , պառւղ կը սիրէ — Խրբ աշունը գայ օդը կը զովանայ — Ցորեննէն ալիւր ու . հայ կը շնին :

—

Անտառ | Բոյս | Զիւն | Խնձոր  
Փայտ | Ծաղիկ | Ծուք | Տանձ  
Որսորդ | Տերև | Բուն | Մալոր

Երկրագործն անտառը գնաց որ փայտ կտրէ ու վառէ . շունն ալ հետը տարաւ — Որսորդը հրաշանով թռչուն մը սպաննեց — Ես դաշտ

պիտի երթամ հոտաւէտ բոյսեր ժողվելու — Ա-  
մեն ծաղիկ փուշ չունի. ես մանիշակը կը սի-  
րեմ — Զմեռը հասաւ. ծառերուն տերեւները  
կը թափին, ճիւղերը հովէն կը շարժին, անձիւ-  
ները կըսկսին — Ես ինձոր մը պիտի ուտեմ.  
եղայրս տանձ մը — Քըցրս իր սալորն այս աղ-  
քատ աղջին տուաւ:

<b>Հող</b>	<b>Ապակի</b>	<b>Ոսկի</b>	<b>Թիթեղ</b>
<b>Քար</b>	<b>Կաւ</b>	<b>Արծաթ</b>	<b>Կապար</b>
<b>Ճայռ</b>	<b>Կիր</b>	<b>Պղինձ</b>	<b>Անագ</b>
<b>Ածուխ</b>	<b>Աղեւս</b>	<b>Երկաթ</b>	<b>Մետաղ</b>

Քար մ'առի ու ծովը նետեցի — Այս հողը  
բարակ է. ժայռը կարծր — Պաղ կայ. վառա-  
րանն ածուխ նետէ — Բրուտը փարջերը կաւէ  
կը շնէ, որ տեսակ մը հող է — Մեր փուռն  
աղիւսով շնուռած է — Մեր պատուհանին ա-  
պակիները հովէն կորեցան — Ոսկին սուղ է.  
արծաթը ճերմակ — Երկաթը շատ կը դրծա-  
ծուի — Պղինձը, թիթեղը, կապարը, անագը  
մետաղ են:


յուր, որ նց ուժեց Ե անհայտ հաջու ու մայիս  
ու պատրի ախունաք նարան

<b>Գոր</b>	<b>Աղբիւր</b>	<b>Կաւ</b>	<b>Վարաւ</b>
<b>Առուակ</b>	<b>Գետ</b>	<b>Եզր</b>	<b>Արևելք</b>
<b>Հեղուկ</b>	<b>Օռով</b>	<b>Շոգենաւ</b>	<b>Լաւագ</b>

Գորը հեղուկ է — Այս առուակին ջուրը  
մաքուր ու ըմպելի է — Եղայրս կոյժն առաւ  
աղբիւրը գնաց որ ջուր բերէ — Գետն՝ որ մեր  
թաղէն կանցնի, չըլցաւ — Օռովուն եղը կե-  
ցած եմ. նաւեր կը տեսնեմ, մէկ քանին նաւա-  
հանգիստը կը մտնեն, մէկ քանին կը մեկնին —  
Առաւօտուն աեսայ արեն որ արևելքէն կելնէր  
— Շոգենաւին քիթը գէս ի հարաւ դարձած  
է:

Տղայք պարտաւոր են բարի ու հնագանդ բլ-  
լալ: Երուանդ աշխատասէր ու խելացի աղա-  
մ'է: Տարւոյն առաջին ամիսը յունվար կըսուի:   
Փետրվար՝ տարւոյն երկորդ ամիսն է: Այս ա-  
ռաւօտ բաւական աղեկ սորվեր էիր դասդ: Փա-  
փաք չունիմ խաղալու. կուզեմ կարդալ: Հայրս  
հիւանդ է, տխուր եմ: Զեզի աղւոր պատու-

թիւն մը պիտի պատմեմ: Շողեկառքն օրը չորս  
անդամ՝ Պուռնօվլա կ'երթայ:



Ուրախ եմ որ կրնամ կարդալ: Արդաշածս  
կը հասկրնամ: Օդտակար բաներ կ'ու զեմ սոր-  
մել: Տարին քանի՞ ամիս է: Եմիսը քանի՞ օր:  
Ճառվուն ծուրն աղի է: Խնչ է կղզի: Ով շե-  
նեց այս սեղանը: Ասկին ինչո՞ւ համար տուղ է:  
Եստղերն ի՞նչ են:

Ժ

Վարդապետը քարոզ կուտայ. քահանան պա-  
տարագ կ'ընէ. դասատուն դաս կուտայ. բժիշկը  
հիւանդը կը նայի. վերաբոյժը վէրքը կը դարմա-  
նէ. նկարիչը պատկեր կը քաշէ. երաժիշտը կ'եր-  
դէ. դարբինը բանալին շնչեց. հիւսնը սեղանը նո-  
րոգեց. դրաշարն այս գրքին տառերը շարեց.  
Դրքածախը գիրքերը ծախեց. վաճառականն ապ-  
րանքներն աժան տուաւ:

## ԺԱ

Եկանջը կը լէ. աչքը կը տեսնէ. ձեռքը կը  
բռնէ. ակռաները կը փշեն: Շունը կը խածնէ.  
մեղուն կը կծէ. ձուկը կը լազայ. թռչունը կը  
թռի. օձը կը սողայ. մարդ կը քալէ. գորտը կը  
ցատկէ. այծերը կ'ոստոստեն: Ամանկիկը կուլայ:  
Ժամացոյցը կը զարնէ: Զուլը կը հոսի: Երկրը  
կը դառնայ: Կատղերը կը փայլին. մոմերը կը վա-  
սին: Խոտերը կը բուսնին:

ան ցի իմաց ցից! ի առարտի դա նյութ ցայ  
արից իմ արևմատոց ցողով ցայ!

## ԺԲ

Ճարպն ու մոմը. Ճամբայ մը և գետ մը.  
կառք մը և նաւ մը: Կատղեած և մեր ազգա-  
կանները. խօսքն ու գիրը. կատուն ու վագը.  
շունն ու գայը. եշն ու գոմէշը. բոյնն ու տունը.  
աղջիկն ու ծաղիկը. ծոյլն ու ժանդը. քունն ու  
մահը. գարունն ու պատանին. ծերն ու ձեռը.  
պարտիզպանն ու դաստիարակը. բաղեղն ու տղան.  
պղինձն ու ոսկին. տգէտն ու գիտունը. հեղն ու  
գոռողը. հրեշտակն ու սատանան. բարին ու  
վատը:



**ՊԱՐՁ ԶՐՈՅՑՆԵՐ**

ՈՉԻԱԾՐ

Օր մը գաշտն էին ոչխարն ու իր գառնուկը  
հօտին հետ։ Արեւ տաք էր, գառնուկը շատ  
ուրախ էր և կը ցատկուեր։

Գառնուկն ասդիս անդին կը վազէր, վեր  
վար կ'երթար կուգար։ Ակը քանի մը մա-  
ցառներու մէջ ընկաւ։

Բայց երբոր գառնուկն իր մօրը քովլս դառ-  
նաւ ուղեց, չկրցաւ դուրս ենել, ինչու որ փու-  
շիր չէին թողուր։ Այն ատեն գառնուկն սկսաւ մայել, ոչխարն  
անոր ձայնը լսեց և վաղեց որ օգնէ։ Շատ աշ-  
խատելին ետեւ գառնուկը մացառներուն մէջն  
քաշեց հանեց։ Գառնուկը նորէն այն մացառներուն քովլս  
չգնաց։

**ՄԻՃՐԱՆ ԵՒ ԻՐ ՇՈՒՆՔ**

Ո Միճրան պղտիկ շուն մ'ունէր, անոր անունը  
Ա պղուկ էր։

Ա պղուկ կարմիր ու ձերմակ էր և մաղերը  
փափուկ ու գռուզ էին։ Իր պոչն ալ երկայն  
ու թաւ էր։

Ո Միճրան գուրս ելաւ գետին եզերքը պարտե-  
րս համար, Ա պղուկն ալ ետեէն գնաց։ Ա պ-  
ղուկ խենդի պէս կը ցատկէր և չըս դին կը  
պաղվզէր։

Ո Միճրան քանի մը ծաղիկներ տեսաւ գետա-  
փին վըայ, շուշաններ էին, ուզեց մէկ հատ  
բրցնել ու մօրը տանիլ։ Գաւաղանն երկնցուց  
բայց չհասաւ, գաւաղանը կարճ էր։

Ո Միճրան նեղացաւ, ասոր համար փայտը շու-  
շաններուն նետեց։ Ա պղուկն, որ գետափին վըայ  
էր, ջուրը նետուեցաւ և փայտին ետեէն գնաց,  
բայց շուշան ծաղիկ մ'աւած ետ գարձաւ։

Ճ'արպիկ և ուշիմ Ա պղուկը տեսաւ որ Ո Միճ-  
րանն շուշանը կ'ողէր և գաւաղանն առնելու  
հոգ չըրաւ։

## ԳԵՐԳ

Տղայ մը կար որու անունն էր Գևորգ։ Օր  
մը մարդ մը նոր փայլուն դանակ մը տօւաւ ա-  
նոր խաղալու համար։

Պատիկ աղու մը համար լաւ խաղալիկ մը չըր  
պյն, բայց Գևորգ գոհ էր և ասդիս անդին կը  
վագել այլ և այլ բաներ կտրելով։ Ա երջը պար-  
տէզը հասաւ և կեռասենիի մը կեղելը կտրեց։

Երբոր հայրը տուն գալով իրիկունը աեսաւ  
որ կեռասենին կտրեր են, հարցուց։ Ա “Ո՞վ  
կտրեց իմ աղուոր ծառս!”

Գևորգ լսեց իր հօրն ըսածը, անոր քովը  
վաղեց ու պոռաց։

— Հայր իմ, չեմ կրնար սուտ խօսիլ. ես  
կտրեցի։

Հայրը ցաւեցաւ որ ծառը կտրեր էր, բայց  
շատ ուրախ եղաւ որ իր որդին ճշմարիար կը  
խօսի։

Գևորգ բարի տղայ մ'էր որ սուտ չըր խօսեր։  
Եթէ ստախօս տղայ մը ճշմարիտ ալ խօսի ի-  
րեն չեն հաւատար։

## Ա.ՄԱ.Խ.Օ

Տես արել կ'ելնէ. այսօր օդն աղւոր պիտի  
ըլլայ։ Ա առեալիները հաւնոցէն դուրս ելան։  
Թառչունները կ'երգեն ու ճիւղէ ճիւղ կը ցատ-  
կեն։ Ամեն բան չորս դին թարմ ու փայլուն  
կերևի։ Այնպէս չէ։

Գործաւորները դաշտը դացին. ոմանք պիտի  
հերկեն, ոմանք ալ պիտի բրեն։ “Սայէ հովհան-  
իր շունովը։ Բալուրը կ'երթայ որ ողնարները տուն  
բերեւ։ “Դարրինը կ'ըսկի կ'ոանը զարնել և քիչ  
քիչ ամեն մարդիկ կ'արթըննտն։”

Հիմակ օրհասարակ է։ Որչափ տաք է օդը.  
արել կ'այրէ, բայց ծառերուն շուքին տակ զով է։  
Մէկ քանի կովեր գետինը նստած են. մէկ  
քանին ծառին տակը կեցեր են ուր շատ զով է։

Մէկ քանին գետակը գացին ջուր խմելու համար։  
Բանսորներն իլենց գործը ճգեցին և տունը  
գացին. Հիմակ սեղանը նստած պիտի ըլլան կե-  
րակուր ուտելու։ “Սայէ ազարակի տունը։ Անոր  
մէջ բնակողն ազարակապան կը կոչուի։”

## ՕՐՃԱՍՄԱՐԱՆ

## ԻՐԻԱՌՈՒՆ

Հիսա արեւը մարը մտաւ և քիչ ատենէն  
մութը պիտի կոխէ: Մշակները դաշտէն տունը  
գարձան: Առվերը մարզին վրայ խոտ չեն ուտեւր.  
իրենց գլխուն տնակը դացին և հիմա բակը կըս-  
պատէն:

Եննա բակը դնաց որ կովերը կթէ: Եհա-  
դար լեցուն կաթով կը դառնայ:

Պետրոս կուղէր քիչ մը կաթ խմել: Հա-  
ւերը թառն ելան. շունը դրան առջև նստած  
է և հացի կտորին կըսպասէ:

Չունը բոլոր գիշեր տունը պիտի պահպանէ  
որ գող մը չմոնէ տունը: Լուռ կեցիր. կը լսեմ,  
ինչպէս կը հաջէ. մեր շունը շատ լաւ շուն մ'է:

## ՄԵԴՈՒ

Եայէ սա մեղուն ծաղին վրայ. սես ինչպէս  
թերը կը թոթուէ և մանը թաթիկներովը կը  
բանի: Եհա, ուրիշ ծաղի մը վրայ թռաւ: Ես-  
թէն կաշխատի:

Հիմակ ուրիշ ծաղկի մ'անցաւ. ո՞չափ ժիր  
է. և ոչ լոսկէ մը նոյն տեղը կը կենայ. կերեկի

58 որ շատ դորձ ունի և կը ջանայ դործը կատա-  
րելու:

Հիմա պարտիղն միւս ծայրն երթանք:

Ալ տեսնե՞ս սա յարդէ պզտիկ տուները, որ  
բնաւ սլատուհան չունին, այլ միայն նեղ դուռ  
մը: Ասոնք են մեղուներուն տուներն որ փեթակ  
կըսուին:

(945) Երբ դարունը կը հասնի և ծաղիկները կ'ըս-  
կին ծլել, մեղուներն առտու կանուխ դուրս կ'ել-  
նեն իրենց փեթակէն: Հեռուները կը թռին և  
ծաղիկներուն անուշ հիւթը կը ծծեն:

Մեղուն երկար լեզու մ'ունի. այս լեզուն  
ծաղիին մէջ կը մղէ որպէս զի հիւթը ծծէ:  
Յետոյ հիւթը կը տանի փեթակը և մեղը կը  
շնէն:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — ՄԵՂ-ՆԵՐՆ ԷՆՆ ՀԵՆԵՆ: Ի՞նչ  
էրսունին անոնց բոուները: Ի՞նչ բանէ շնորհած  
էն: Ի՞նչո՞ւ համար գայնան մեղ-ները իանու-  
բուրը չենէն: ՄԵՂ-Ն ինչո՞վ իը ծծէ ծաղիկն  
հէ-նը:

Երբոր մեղու մը դուրս կ'ելնէ առտու, միայն  
մօտաւոր ծաղիկները չինտուեր. շատ անդամ իր  
3

փեթակէն մղոն մը հեռու տեղեր կը թռի, բայց  
իր ճամբան բնաւ չփորսինցըներ:

Երբոր յանկարծ անձեւի բռնուի, ծակ մը  
կը մտնէ պատի մը մէջ, կամ ծառի մը տերեւ-  
ներուն մէջ կը պահութափ, կամ ծաղիկ մը մէջ  
կը սմբի: Երբոր նորէն արևն երեւ, մեղուն դուրս  
կենէ և շուտով իր տունը կը թռի:

Մեղուները միայն հիւթ չեն քաղեր հապա  
տեսակ մը ոսկի փոշի, ծաղիկներուն մէջէն: Այս  
փոշին տունը կը տանին իրենց ետևի ոտքերով: Ա-  
նով մեղուի հաց կը շնեն փեթակին մէջ, ո-  
րով պատիկ մեղուները կը կերակրին:

Այս փոշիով մօմ ալ կը շնեն, և մոմով  
շատ մը մանր խղիկներ կը պատրաստեն, ամենն  
ալ նշյան ձևն ունին և իրարու կապուած են վա-  
յելուչ կերպով:

Անուշ մեղուով կը լեցընեն այս խղիկները:  
Այս մեղուով լցուած մօմէ խղիկներն բջիջ կը  
կուտին:

ՀԱՐՑՈՒՆՔ. — ՄԵՂՈՒ մը շատ անդամ ո՞-  
լու հեռու հը լուէ: Ի՞նչ ի՞նէ երբոր անձրւէ  
բունուէ: ՄԵՂՈՒ հիւնէն զար ի՞նչ ի՞ն +անէ:  
Ի՞նչ ի՞նէ անուշ: Ո՞րիշ: Ի՞նչ է բջիջ:

Օրին մէկը խղունջ մը սողաց մտաւ փեթակի  
մը մէջ: Բողոր մեղուներն անոր չորս կողմն ա-  
ռին զարմանալով: Ջէին կրնար հասկրնալ թէ  
ի՞նչ կ'ուզէր այս կենդանին, որ իր տունը կոնակն  
աւած կը քալէր:

ՄԵՂՈՒՆԵՐՆ իրենց բողոր ճիգը թափեցին որ  
խղունջը դուրս հանեն, բայց պարապ տեղն աշ-  
խատեցան: Ա երջապէս ուրիշ հնարք մը դտան:  
Մոմով գոցեցին խղունջին պատեանին բերանը,  
այնպէս որ խեղջ կենդանին չէր կրնար շարժիլ:  
Վիշ ատենէն մեռաւ և անկից ետքն իրենց  
գործին արգելք չեղաւ:

ՀԱՐՑՈՒՆՔ. — Օ՛ր հը ի՞նչ ընկաւ գէնապէն  
մէջ: Ի՞նչ ըրին մեղունեցը: Երբոր վեցան յա-  
ջուկը ի՞նչ միջոց բանեցացըն:

#### ԿԱՐԱՊ

Ընտանի կարապը շատ սկրուն կենդանի մ'է:  
Առուակի ու ընակի վըայ կ'ախորմի լողալ: Երբ  
գեռ պղտիկ է սիրուն չերեկիր, բայց երբոր մէծ-  
նայ ձիւնի պէս ձերմակ է:

Կարապը մաշտոներու և խոտերու մէջ կը շի-

նէ իր բոյնը: Զոր փայտերով ու պրտուներով կը  
շնէս բոյնը և անոր մէջ իր հաւկիթները կ'ածէ:

Երբոր ձագուկները հաւկիթէն դուրս կ'ելնեն  
շուտ մը ջուրը կը վազեն: Պէտք չունին լողալ  
սորիիլ, բնական կերպով դիտեն:

Տեսած ես կարապին ոտքերը, լողալու յար-  
մար են: Բոյր թռչուններն որ ջուրը կը սիրեն  
և անոր մէջ կը լողան մաշկակապ ոտքեր ունին,  
բնչպէս կարապները, բաղերն և ուրիշ շատ թռ-  
չուններ ունին:

Բոյրն ալ լաւ կը լողան. բայց հաւերը, վառ-  
եակներն ու ճնձղուկները չեն կրնար բնաւ լողալ  
վասն զի կարապին ու բաղին պէս մաշկակապ  
ոտքեր չունին:

Կարապն երկար վեղ ունի և անով կրնայ  
իր կերակուրը գտնել առանց ջրին տակն երթա-  
լու, ինչպէս որ բաղերը կ'ընեն: Կարապը հուն-  
տեր, տերեներ և ջրի բոյսերու արմատներ կ'ուտէ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ գոյն ունի հարազը: Ո՞ւ  
իւ չնէ եւ բոյնը: Ի՞նչ չնուած է բոյնը: Եւ բոյ-  
հաւինեն ենին հարազին Յադուինելու չնչ չը-  
նէն: Կարապն ի՞նչ դժուակ որդեց ունի: Ո՞ւ եւ  
ի՞նչ գետակ լուսուն նոյն որդին ունի: Ի՞նչ բանի  
իւ ծառացէ հարազին երկար չիպ: Ի՞նչ ի՞ն-որէ:

## ԴԱՅԼ

Գայլը շատ կատաղի կենդանի մ'է. քիչ մը  
շունի և քիչ մ'ալ աղուէսի կը նմանի: Իր որջն  
անտառն է, մարդու բնակութենէ հեռու: Վ-  
մառը թռչուններ, որսի միս և ուրիշ կենդա-  
նիներ կ'ուտէ: Բայց՝ ձմեռը անտառէն կ'ելնեն  
գայլերն որ կերակուր վնասուեն: Վյն ատեն խումբ  
խումբ կ'ըլլան և երբոր անօթի են շատ յան-  
դուգն ու կատաղի կը դառնան: Վյնչեւ անդամ  
գիւղեր կը մոնեն և գառնուկներ, ոչսարներ, կո-  
վեր և ձիեր կը յափշտակեն կ'ուտեն:

Սաստիկ ձմեռուան ատեն, երբոր զետինը  
ձիւնով ծածկուած է, սոսկալի ոռնալու ձայն  
մը շատ անդամ կը լսուի գիշերուան հանդարտ  
ժամանակը: Հետեւեալ օրը երբ գիւղացիք կը  
նային որ կով մը կամ ձի մը կորսուած է կը  
հասկրնան որ գայլն անտառէն եկած է:

Վնդամ մը Ուուս ազնուական մ'իր կնկան  
հետ քառաձի բալսիրով ճամբորդութիւն ընե-  
լու ատեն խումբ մը գայլեր իրենց վրայ կը յար-  
ձակին: Վեծ վտանգի մէջ էին, վասն զի գայ-  
լերը գիրենք պատառ պատառ պիտի ընէին: Վ-  
սոր համար առաջ ձի մը և ապա ուրիշ մը

Գարձակեն և դայլերուն կը թողուն որ ուտեն  
և իրենք նոյն միջոցին ժամանակ կը գտնան վախ-  
չելու:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Պայշ ո՞ կը նույնանիներուն ի՞ւ  
նմանի: Ո՞ւ ի՞ւ շնէ ե՞ւ ո՞ւզ: Ի՞նչ է՞ստի: Զը-  
մուն ի՞նչիւ ի՞րաւամ ժայլըր: Երբեմ ո՞ւ ի՞ւ-  
նան կերպարը վիպաւելու: Շատ անդամ ժէլը-  
ռան լուսան ժամանակ ի՞նչ ի՞ւ լու-ի: Ուստի  
աղջուական միք ինկան հետ ի՞նչիւ աղջուեցա-  
անդամ ճը ժայլըրէն:

—

### ԹԱՐԺԱԿԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Աղքատ մարդ մը թութակ մ'ունէր: Այս  
թութակը սորմեր էր ըսելու. “Ատոր վրայ տա-  
րակոյս չկայ:” Անակ այս խօսքերն ըսել զի-  
տէր, և շատ անդամ բոլոր օրը կը պոռար կամ  
կը սուլէր. “Ատոր վրայ տարակոյս չկայ. — Ա-  
տոր վրայ տարակոյս չկայ:”

Ամեն հարցմունքի թութակը նոյն պատաս-  
խանը կուտար. “Ատոր վրայ տարակոյս չկայ:”

Օր մը ակըն առաւ զայն և շուկոյ տարաւ

որ ծախէ: “Ո՞վ ծախու կ'առնէ իմ թութակս”  
կը պոռար մարդը, “քսան ոսկի կ'աժէ թու-  
թակս:”

Մարդ մը լսեց քսան ոսկին, զարմացաւ ու  
թութակին դառնալով ըսաւ. “Պապկայ, միթէ  
դուն քսան ոսկի կ'աժե՞ս:

— Ատոր վրայ տարակոյս չկայ” պատասխա-  
նեց պապկան: Աւարդը այս պատասխանէն այն-  
չափ ախորժեցաւ որ թուչունը գնեց ու տունը  
տարաւ:

Վիչ մ'ատեն անցնելն ետե՛ զղջաց զայն  
ծախու առնելուն վրայ և երբ օր մը վանդակին  
քովը կեցեր էր, ըսաւ. “Խենդ չի՞ որ այնչափ  
ստակ ծովը նետեցի պապկան գնելու համար:

— Ատոր վրայ տարակոյս չկայ” պոռաց թը-  
ռունը: Եւ այս անդամ թութակն իրաւունք  
ունէր:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Թաւուանին ի՞նչ ի՞սու առվվէր  
էր: Իր ակըն ո՞ւնադ սորակ պահանջեց անոր հա-  
մար: Աւարդն ի՞նչ ըսաւ նուուակին: Ի՞նչ պա-  
տասխանէց նուուակը: Այս ասուն ի՞նչ ըսաւ մար-  
դը: Երբ գնեց և զղջաց ի՞նչ ըսաւ: Թաւուան  
ի՞նչ պատասխանէց: Այս անդամ նուուակը . . . :

—

Երկրիս մէկ քանի կողմերն ընդարձակ տեղեր  
կան որ անաղար կը սուին։ Այս անապատնե-  
րուն մէջ ոչ տուն, ոչ առու և ոչ ծառեր կան։

Չորս կողմը միայն աւաղ, քար, ժայռ կը  
տեսնուին։

Եթեոր Ճամբորդն այս անապատներէն անցնիլ  
ուզէ, պէտք է որ Ճամբուն համար ամեն պէտք  
եղածն իր հետն առնէ։

Պէտք է ջուր, կերակուր առնէ այնչափ որ  
իրն և իր ուղեկիցներուն համար շատ օրեր բա-  
ւեն։

Այս ընդարձակ անապատներուն մէջ ձի մը  
չկնար բեռ կը ել. բայց Աստուած մարդուն ու-  
րիշ կենդանի մը տուած է որ այս գործին յար-  
մար է։

Այս կենդանին ուղտն է։

Երբոր նաւաստիներ նաւով ծովուն վըսց կը  
Ճամբորդեն, պէտք է որ նաւն ամեն հարիսւոր  
եղած բաները պարունակէ։ Եւ որովհետեւ ուղտն  
ալ անապատին մէջ նոյն բանն ընելու պարտա-  
ւոր է իր տիրոջը համար, անաղարի նաւը կո-  
ւուած է։

Երբոր ուղտը բեռնաւորել ուղեն՝ ծունկ կը  
դնէ, և երբոր Ճամբորդիւնը լմննայ և հան-  
գըստանալու օրը գայ ուղտը նորէն ծունկ կը չո-  
քէ որպէս զի բեռն իջեցնեն։

Ուղտը կրնայ շատ ժամանակ քալիլ առանց  
կերակուրի, և Ճամբայ ենելէն առաջ, բաւական  
ջուր կը խմէ որպէս զի շատ օրեր աւեէ։

Օաշմանալու չեթէ որ Արաբացին իր ուղ-  
տը կը սիրէ և անոր գովեստներ կ'երգէ։ Ձին իր  
տէրը կոնակը կ'առնէ կը տանի, կովն անոր կաթ  
կուտայ և ոչխարը հագուստ ընելու համար բուրդ։  
Բայց Արարացիին համար ուղտն այս ամեն բա-  
ներուն տեղը կը բռնէ։

Անապատի ժողովուրդին կաթ և ուրիշ հար-  
կաւոր եղած բաները կը մատակարարէ։ Մեռ-  
նելէն ետք՝ ուղտին միար կ'ուտեն, և իր մազե-  
րով հազուստ կը շնեն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Անաղարին մէջ ի՞նչ կը գետ-  
նո՞է միայն։ Ի՞նչ բան չկայ։ ԴՎաճինը անա-  
ղարին մէջ հետոն ի՞նչ պէտք է օրանի։ Ո՞ր ի՞ն-  
դանին ի՞ր բերու կը ի՞նչ։ Ի՞նչ համար “անա-  
ղարի նաւը” կը ի՞րո՞ւ։ Ի՞նչ կ'ընէ երբոր բեր-  
ունաւորի ու բերու առանու։ Ո՞րո՞ւ ջուր կը  
ի՞մէ ճամբայ ելնելէն առաջ։

ԹԱՆ ՄՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քանի մը տարի առաջ պղտիկ տղայ մը, որ  
հաղիւ ութ տարեկան էր, ահղ մը կ'երթար:  
Դամբան երթալու ատեն, կաղ, աղտոտ ու ան-  
պիտան շուն մ'առջևն ելաւ և սփառ անոր ե-  
տեէն ցատկակով երթալ:

Եթէ գէշ տղայ մ'ըլլար այս շան քարել  
պիտի նետէր, բայց մեր ըստած տղան միշտ բա-  
րեփրտ էր և խելօք:

Ուստի տեսաւ որ շունը ծեծեր են ու խեղճը  
բարեկամ մը կը փնտոէր: Տղան թողուց որ շունն  
իր ետեէն դայ մինչև տունը:

Երբոր պղտիկ տղան հարցուց իր մօրն որ ար-  
դեօք հրաման կուտայ որ շունը տունը մանէ,  
խեղճ կենդանին կարծես թէ հասկրցաւ որ ինչ  
կըսէն:

Հատ տիսուր կ'երեւէր և փոքրիկ տղայք սկսան  
լաւ երբոր անոր լայն պայծառ աչքերը տեսան  
որ գութ կը շարժէին:

Մայրն որ իր զաւակաց սորվեցուցեր էր բա-  
րի ըլլալ, խեղճ, կաղ ու անօթի շունը վանտել  
չտուաւ: Թարգուց որ լուայարանն երթայ և տղաք  
անոր քիչ մը հաց ու ջուր տուին խմելու, և

մաքուր յարդ որ անոր վրայ պառկի:

Անդանին ամեն կըցածն ըլլաւ որ իր երախ-  
տագիտութիւնը տնեցոց ցոյց տայ: Ասդին ան-  
դին կը ցատկակով և իր պղտիկ բարեկամներուն  
ձեռքը կը լլէր:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Տղան եղանակն եկո՞ղ շունն  
ինչ վնասի մէջ էր: Ի՞նչ աղերի ընէց ենէ լար  
լրացաւ մ'ըլլար: Այս աղանդ ինչ ընաւ: Ի՞ր հայրն  
ո՞նպէս ընդունեց շունը: Ի՞ր շնորհակալունիւնն  
ինչպէս ցցուց շունը:

Տղաք Թաօփ անունը տուին շան, որ իրենց  
միրելի բարեկամն եղաւ:

Ճիմակ պատմեմ ձեզի թէ ինչպէս բարեկամ  
եղաւ: Խրենց հետ դպրոց կ'երթար, և չար տղաք-  
ներն անոնց քովէն կը վոնտէր երբոր կը տեսնէր  
որ իր փոքրիկ տէրերուն վնաս պիտի հասցընեն:

Երբոր տղաք դպրոց մտնէին, Թաօփ կը դառ-  
նար և հաւերուն հետ բակը կը կենար: Ալ նա-  
յէր որ հաւերը չփախչին և չդողցուին: Զար  
տղայ մը չէր կինար քար նետել հաւերուն երբ  
որ Թաօփ հոն էր:

Երբոր դպրոցին արձակուելու ժամը դար

տղզց մայրը կ'ըսէր . “ Յօնի , ատենն եկաւ որ  
երթաս տղաքը դպրոցէն բերես : ”

Յօնիպէտ շատ ժամանակ անցու մինչև որ  
Յօնի այս խօսքը հասկըցաւ , բայց վերջապէս  
սորվեցաւ , և երբոր լսէր այդ հրամանը շուտ  
մը դպրոց կը վաղէր :

Այո՞ , աւելի մեծ ճարպիկո թիւն ունէր Յօնի :  
Անձրեռտ օրեր հովանոցը բերանը կ'առնէր և  
Դպրոց կը տանէր որ իր փոքրիկ տէրերը չժրջուին :

Երբեմն փողցի տղաք կ'ուզէին հովանոցը բերա-  
նէն առնել , բայց Յօնի շուտ շուտ կը վաղէր  
և անմնաս տեղը կը հաննէր :

Այսպէս այս շունն որ ատեն մը կաղ և ան-  
պիտան էր , իր պղտիկ բարեկամներուն կը ծա-  
ռայէր և երախտագէտ էր :

ՀԱԲՑՄՈՒՆՔ . — Տնայ+ ի՞նչ անուն պուտէն շան :  
Ի՞նչու ի՞նչնց բարեկամ եղաւ : Ի՞նչ ի՞լուր  
հայրը ելքո՞ր աշխախո՞ր ապէնը հասնէր : Ո՞ւիշ  
ի՞նչ ճարպիկունիւն ունէր :

## ԿԵՆԴԱՆԻ ՆԵՐ

Վան կենդանիներ որ բնութեամբ ընկերական  
են , խումբ խումբ կ'ապրին , ինչպէս ոչխարը ,  
շունը , ձին , կովը , որ վայրենի տեղերէ քաշուե-  
լով ընտանի եղած են , մարդու հետ կ'ապրին  
և շատ օդտակար են : Վան կենդանիներ ալ որ  
վայրենի են , չեն կրնար ընտանենալ և վնասա-  
կար են , ինչպէս առիւծը , կինծը , վագրը : Պէտք  
չէ որ չարչարենք ընտանի կենդանիներն որ մեզի  
շատ ծառայութիւններ կ'ընեն :

ՈՉԽԱՐԾ . — Ովկարն է՞ն կուտայ մեզ : Շուրդ :  
Է՞ն է՞լսո՞ն ավարէ ճը բուլը բուրդը : Գեղմն :  
Է՞ն է շնունդ բուրդը : Ասուի , ծածկոց ,  
օժոց , չուխայ , զգեստ , ձեռնոց , գուլպայ և ու-  
րիշ շատ օդտակար բաներ :

Բուրդէն դադ ուլէշ է՞ն էլսուպաննանդ ավա-  
րէն : Իր մորթէն կաշէ կը շնենք , իր միսով կե-  
րակուր կընենք . իսկ իր կաթէն՝ պանիր :

Աաշուն է՞ն էլսունդ : Աօշիկ ու մուճակ , փոկ

ու գօտի, համեա ու թամբ, գրքի ծածկով և  
ուրիշ բաներ:

Ավագանին մը մոցին ովկ իաշ էլենի: Խսաղախորդը:  
Ովկ իաշ էն մունակ էլ շնի: Առշկակալը:  
Ի՞նչ էլուուի ովկարին յաբուկը: Գառնուկ:  
Ի՞նչ էլուուի ովկարը: Խոս:  
Հաս մը ովկարներու էն անուան կուգաս: Աս:  
Ի՞նչ էլ իւլու անոնց քայ հակող մարդը: Ա-

վեւ:

—

21

Զին ազնիւ ու օդտակար կենդանի մ'է: Ան-  
գարտ է ու աշխատասեր: Ուրիշ մնա ըներ և  
մարդուն կը ծառայէ: Ուաելու համար ուրիշ  
կենդանի մը շապաններ բնաւ, ինչու որ խոս ու  
գարի կ'ուտէ:

Ըրդէն տեսանք որ կատաղ գայլին դէմ չկը-  
նար ինքզինքը պաշտպանել: Անայ վազել ու  
փախչել, բայց գայլն աւ կրնայ վազել:

Զին իր տէրը կը սիրէ և շուտով անոր կը  
վարժի:

Օ ինուոր մը սիրական ձի մ'ունէր որ զինք  
շատ կը սիրէր և շատ վտանգներէ սպատեր էր:  
Ա կը չապէս այս զինուորը պատերազմի մէջ կը

պանուի ու ձիէն վար կիյնի: Երբ քանի մ'օր  
ետք իր մարմինը գտան, տեսան որ հաւատա-  
րիմ կենդանին զեռ անոր քովը կը կենար: Այս  
քանի մ'օրուան մէջ ձին իր տիրոջը քովէն չէր  
հեռացած: Առանց կերակուրի ու ջուրի, անոր  
մօտ սպասեր էր, և գիշակեր թռչունները վորն-  
տեր էր: Միթէ այս ձին ազնիւ կենդանի մը չէ:

ՀԱՅՑՄՈՒՆՔ. — Ձին էնչ ուեսակ կենդանի է:  
Անմաս է: Ի՞նչ բան կ'ուտէ: Ո՞վ կենդանին  
ուն զննար կ'ուտէլ: Պատրամէ զննուորին պարագա-  
նելու: Ո՞վագի այսէն անոր գովը կ'օշա:

21. — Ի՞նչ բանի էլ Բարժածուի Յին: Մեղ  
կրելու և սայլակ ու կառք քաշելու:

Ձի ճ էնչուի էլ լուն ասյալի կամ կառուի:  
Փոկու ու երկաթի շղթաներով:

Ձիուն զայ եղած ժոկին ու օղակներն էնչ էն:  
Իր կազմաձքը:

Ի՞նչ էլուուի Յիուն կանանի եղած նստարանը:  
Թամբ:

Հաղա զայն զարշլու համար փոկի: Երասանակ:  
Հաղա երտանակին միացած և բերանն եղած  
էրինը: Սահճ:

Պարտին Յի ճը ճնկ իւ իրաց-է: Ամրուկ:  
Ունել է նկ բանի իւնայ ծառայել Յին: Խր  
մերթէն կաշի, և իր երկայն մազերով ու պոչովը  
սատրներ կը շինուին:

Մինէ էնուրէն+ անոր Թօը: Ջէ. բայց կան  
երկիրներ ուր անոր միոր կուտեն և զամբիկն  
կաթն իբրև մնունդ կը գործածեն:

—

ԿՌԱ.

Կոմի ամենէն շատ աշխատով ու տոկուն կեն-  
դանին է: Դաշտին մէջ այն կաշխատի և ա-  
գարակին ամենէ օգտակար սպասաւորն է: Առ-  
զագործին գլխաւոր գանձն է: Այն կը հերկէ  
հողը, այն կաթ կուտայ, այն կը պարարէ հողը,  
այն լաւ միս կուտայ, և հեղ, ընտիր կենդանի  
մէ:

—

ԿՈՎ. — Կոմին ճնկ էնունէն+: Ապթ, մա-  
ծուն ու սեր:

Եւ էնուն ճնկ իւ շնու-է: Ամրագ ու պանիր:  
Ի՞նկ անուն քաղը և այն մարդուն ո՞յ էնի  
իւ ժախէ: Ապթնավաճառ:

Կոմին բնակած առելին անունն էն է: Պամ:  
Առիւ մող ո-ընելը բաներ կո-դայ: Ապշի, եղ-  
ջեւր և միս:

Եղջերով ճնկ իւ շնու-է: Ամատր, դգալ,  
գանակի կոթ, կոճակ և թաս:

Ի՞ն է եղջերտոն: Առագարան մը, պղնձէ  
շինուած:

Ի՞նը համար էղջեր իւրու-է: Ի՞նըու որ ե-  
րաժշտական առաջին նուագարանները եղջերէ  
շինուեցան:

Ի՞ն էրու-է հորահասակ ինչ ճը: Որթ:

ՈՒՐՏԸ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ. — Ուրուցին ու իւլին  
շատ՝ ո՞յ էնուն էրը Թով ու առելու-միս էն-դան:  
Խողը, հաւը, բաղը, սազը, հնդկահաւը, նա-  
պատակը և ծագարը:

Սողուն ո-ընելը ճնկ բան էնունէն+: Ապշի և իր  
կարծր մազերը կամ ստելը որոցմէ խողանակ կը  
շինենք:

Առունյն ո-սից իւ շնու-է: Աբնդանիներու որմ  
բակէն ու մորթէն:

Երբ հաւերը էնուն էն ճնկ իւրան մող  
ո-ուրելու: Աւկիթ:

Ի՞ն էրուն մողուն ճնկ իւրադասնու-է Ախոր.  
5

Նոյնպէս փետուրներն որով անկողին ու բարձ կը շինենք :

ԱՌԵՊԱՏՈՒԵ զէւսպն սուսէց իւ շնուի : Պղղիկ որդի մը մանած թելերէ :

Ի՞նչ է ճուղառիւ : Ակնդանիներու մազու մորթը :

Գրապահի իսուլը շատ անգամ լնէց իւ շնուի : Իշու կաշիէն :

Ի՞նչ է ժեպուշէ ժէնը : Սագի մը թեէն առանուած փետուր մը :

Ի՞նչը իւ Հարէ ճրագը : Ճարպով, եղով, կազով :

Ո-րէլ ի՞նչ բան իւ շնեն + ճարպի իամ եղէ : Աճու :

Աշնէ լաւ ճագներն սուսէց իւ շնուին : Արմէ, որ մեղուներուն գործն է :

ԱՌԵՊԱՆԵՐԻՆ ո-րէլ ի՞նչ իշտանան + ԱՌԵՐ :

### ՍԵԽ Ա. Ր. Յ.

ԱՀ. Արջա անտառներու մէջ կապրի : Դիրաւ ծառերու վրայ կը մագլի և շատ անգամ իր բնակարանը կընտրէ ծառի փապարի մը մէջ :

Արջա շատ կը սիրէ վայրի պառւղներ, որ առատ կը գտնուին անտառին մէջ :

Կոյնպէս մեղը կը սիրէ արջը և վայրի մեղուներուն փեթակները կը գողնայ : Վայրի մեղուները գոգաւոր ծառերու մէջ կը շինեն իրենց փեթակներն և արջը մեղըն հոտն առնլով՝ փեթակները կը գտնէ :

Երբոր փեթակ մը կը գտնէ, ծառէն վեր կենէ և ժամերով կը կրծէ ու կը կրծէ ծառին կեղեր մինչև բաւական լայն ծակ մը բանալն որ թաթն անոր մէջ մտնէ :

Այն ատեն՝ մեղուներուն խայթոցը բանի տեղ չդնելով՝ արջը ծակին մէջ կը խոթէ թաթն և մեղըն հետ թջեցի կտորներ դուրս կը հանէ : Այնչեւ որ արջը խեղճ՝ մեղուներուն պաշարը չատցընէ անկից չհեռանար :

Երբոր ձմեռը կը հասնի՝ արջը խոռոչի կամ փոսի մը մէջ կը սքի խիտ ծառերու տակը : Անոր մէջ խշտեակ մը կը շինէ տերեներով և ուտերով, և երբոր ձիւն վագի, ձիւը զի՞ք կը ծածկէ և անոր մէջ հանգիստ կը հանգչի : Աչքը կը դոցէ և բոլոր ձմեռը կը քնանայ :

Երբոր գարունը գայ նորէն աչքը կը բանայ և կըսկի թափառիլ անտառներուն մէջ :

Մարգիկ անտառը կ'երթան արջ որսալու :

Անոր մորթը կուզեն առնելոր վերարդիու, ծած-  
կոց ու մուշտակ շինեն: Անոր միզն ալ կուտեն  
և իր ճարպով եղ կը շինեն:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ո՞ր էր չնաէն ԱԵ- ԱՅԸ: Ո՞ր էր հաստատէ իր բնակարանը: Ի՞նչ էր ո՞ւշեց-  
է: Ո՞ր էր գոյնէ ժղը: Ի՞նչ էրնէ գելահնէր և  
գողնալու- համար: Զեւոն բնաշխէ հանցնէ: Եթէ  
կարելնայ ունեն: Մարդէն ո՞ր արշ կորսուն: Ի՞ր  
ճարպէն էն և չին:

— Խնան զնի պատ մնան ի  
ին դժուաց ու նախան մասն առան մ  
ժութէ օդան ուղար այս այցելու

«Օպյլ առայ մը կըսէր որ մը իր բժշկին. —  
“Խնաւ շեմ աշխատիր, վասն զի միշտ հիւանդ  
եմ:” Շմիշին անոր պատասխանեց. — “Աւե-  
լի ճշմարիտ բան մը խօսած պիտի ըլլայիր եթէ  
ըսէիր. Այլա հիւանդ էմ, վասն զի բնաւ չէ  
աշխատիր: Աղէկ զիտցիր, ծուլութիւնն, որ ա-  
մեն չարեաց պատճառն է, հիւանդութիւններ  
ալ կը բերէ:”

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ էրնէր ծոյլ աղայ ճը:  
Ի՞նչ պատասխան պատասխան էմիլը: Ի՞նչ գե-  
շունէննէր և պատմուել ծոյլ աղայ ճը:

ՊԶՑԻՆ Ա. ՁԱԿԱՆ ՈՒ ՊԵՊԷԿԸ

Վարժուհի մը աղւոր պէպէկ մը ընծայ տուեր  
էր վեց տարեկան աղջկան մը: «Քանի մ'օր ետք՝  
վարժուհին պղտիկ աղջկան տունը գնաց որ նայի  
թէ պէպէկին հետ կը զուարձանայ: Իսյց երբ  
որ հարցուց թէ ուր է պէպէկը, ըսին իրեն որ  
պղտիկը կրակը նետեր էր զայն: Այն ատեն վար-  
ժուհին աղջեկը կանչեց և անոր ըսաւ. “Իմ  
պղտիկ սիրուն աղջեկս, ինչո՞ւ համար պէպէկդ  
կրակը նետեցիր:” Աղջեկը արտսուք թափելով  
պատասխանեց. «Ի՞նչ ընեմ, ես անոր ըսի որ  
զնոք կը սիրեմ, և ան ինձի պատասխան չտուաւ:”

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ պուա- վարժուհին  
պղտիկ աղջեան: Ի՞նչ համար աղջեկը պէպէկը  
ինչո՞ւ նետեց էր:

ՄԱՄՈՒԿՆ ՈՒ ՇԵՐՄԱՍԸ

Օր մը մամուկը շերամին հետ խօսքի եկաւ:  
Մամուկն ըսաւ. “Ի՞նչ է այս իմ քաշածս  
մարդերու երեսէն: Իմ տունս աղւոր կը հինեմ  
և մարդիկ աւելը կ'առնեն և բոլոր շինածս կ'առ.

բեն. ի՞նչ խենդ ու անգութ են: Հապա դու,  
շերամ, որ զցուելի միջատ մ'ես, դու միայն սի-  
րելի ես անոնց. քու հինածդ ինամօք կը ժողվեն  
կը պահեն թէւ իմ շինածէս աւելի հաստ է:”  
Ներասը պատասխանեց. “Լ'աղաչեմ այդչափ  
մի բարկանար. ամեն մարդ դիտէ որ շատ ճար-  
պիկ հինող ես, ամեն մարդ կը խոստովանի որ  
շատ նուրբ թելերով կը բանիս ոստայնդ, բայց  
ինձ ըսէ ի՞նչ օգուտ ունի, մինչդեռ իմ շինած  
թելրա ամեն տեղ օդտակար ու յարդի են:”

Օդտակարութիւնը արժեքի փորձաքարն է:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ինչ ի՞ն գանձադէր ճանո-  
նէ: Առրտերուն համար ի՞նչ ի՞ւսէր: Ի՞նչ ի՞ւ-  
սէր չէրտանի: Այս ի՞նչ պարագանէց:

### Ս.ՌԻՒԹՆ ՈՒ ՄՈՒՆՔ

Օր մը անտառի մը մէջ քնացեր էր առիւծը:  
Վիանի մը մուկեր սկսան խաղալ և ատեն ա-  
տեն առիւծին վրայ ելնելով կը վազվզէին: Ա-  
ռիւծն անոնց ձայնէն արթնցաւ. մուկերը փա-  
խան, մինակ մէկ հատ մուկ չկրցաւ փախչել և  
առիւծին թաթին տախն ընկաւ:

Առիւծն այդ մուկը պիտի սպաննէր, բայց  
այնափ աղաչեց ու պաղատեց կենացը խնացելու  
որ առիւծը թողուց մուկն որ ազատ երթայ իր  
տեղը: Այն ատեն երախտագէտ մուկն ըսաւ.  
Աղնիւ առիւծ, յուսամ որ օրին մէկն առիւծ  
պիտի ունենամ այդ բարութեանդ փոխարէնը  
հատուցանելու:”

Առիւծը խնդաց և չհաւտաց բնաւ որ անանի  
պղտիկ կենդանի մը պիտի կարենայ իրեն օգտա-  
կար ըլլալ:

Հատ ժամանակ չանցաւ՝ երբ առիւծը հաստ  
շուանով շինուած ցանցի մը մէջ ընկաւ: Վիա-  
նի մը որարդներ այս ցանցը փուեր էին անտա-  
ռին մէջ: Առիւծը պարապ տեղն աշխատեցաւ  
ցանցէն դուրս ենելու և սկսաւ կատաղաբար  
մռնչել:

Պղտիկ մուկն անոր մռնչիւնը լսեց և շուտ  
օդնութեան վազեց: Առեկն սկսաւ իր սուր ակա-  
մաներով ցանցը կրծել և, երկար ատեն աշխա-  
տելէն եաւ՝ յաջողեցաւ չուանը կտրել և առիւծն  
ազատել:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Առաջիւն ի՞նչ ի՞նչէն առիւ-  
ծին ժնանալու առէնը: Ի՞նչ ըստ առիւծն էր որ  
աղնեցաւ: Առաջն ի՞նչ ըստ երբուչ դեռաւ ոք

առիծը զենք պիտի սպանել : Ի՞նչ ըստ հունի  
Երբոր արյակուց աս : Ինչու համար ձեւապեցաւ  
առիծը : Եթե հարոյց էր պարսպը հուկը : Ի՞նչ  
էր շուցընէ այս առաւը :

## ՍԻՐՈՒՆ ԳԱՌՆՈՒՆԸ

Ընտանիք մը կար որ շատ աղքատ էր : Այս  
ընտանիքը կերակուրի ու հագուստի համար տան  
մեջ եղածը ծախեր էր և մինակ սիրուն գառնուկ  
մը մնացեր էր : Այս գառնուկը տղոց սիրելին  
էր և իրենց մայրը՝ մոտածելով որ պիտի ստի-  
պուի այն ալ ծախելու՝ շատ կը տրտմէր :

Ա երջապէս չուզելով միտքը կը դնէ ծախու-  
հանել գառնուկն, որու անունն էր Շամանէն :  
Պէտք էր մասվաճառը կանչել . տղոց մայրը չէր  
կրնար անոնցմէ մին դրկել որ մասվաճառը կան-  
չէ . ուստի ինքն անոր գնաց, սիրտը կտրած, և  
Շամափիկը ծախելու համար սակալիկց :

Երբոր տղաք գառնուկին հետ կը խաղային,  
մասվաճառն ու իր սպասաւոր տղան դուռն եկան :

“Շարի լցո, Ա առվառէ խաթուն, ըստ  
բարձր ձայնով մը : Ո՞ւր է գառնուկն, եկայ որ  
առնեմ տանիմ :”

“Ի՞նչ պիտի առնէ տանի,” հարցուց տղոց  
մէկը, մօրը քովը վաղերով, և ահ ու դողով ա-  
նոր երեսը նայեցաւ :

“Ենդին գնա, սիրական տղաս,” ըստ Ա առ-  
վառէ տիկինը, տղան կամացուկ մը անդին հրե-  
լով :

“Եյս իմ գառնուկս է հիմա, Ա արոլոս,” ը-  
ստ մսավաճառին տղան, զուարթ ձայնով մը,  
և գնաց գառնուկին մօտ որ չուանով մը կապէ :

“Չէ, քու գառնուկդ չէ, մերն է,” ըստ  
փոքրիկ տղան, անոր առջել կենալով :

Բայց տղան զանի անդին հրեց, Բամպիկին  
վկղէն չուան մը կապեց և սկսաւ քաշել խեղճ  
կենդանին : Ողորմելի գառնուկն սկսաւ մայել  
տրտում տխուր :

Գառնուկին ձայնը տան տիկնոջ պիրտը շար-  
ժեց և սաստիկ այլայլեցաւ : Վկէ մ'ետք՝ բոլոր  
տղաք անոր չորս դին առին և լալով աղտնեցին  
որ սիրուն գառնուկը չծախէ :

“Կաղաշեմ, ըսէ մանչեղ որ քիչ մը կենայ”  
ըստ Ա առվառէ տիկինը վշտալի ձայնով մը մա-  
վաճառին :

Երբոր սպասաւոր տղան իր տիրոջ ձայնը լսեց՝  
կեցաւ, գառնուկը չքաշեց, և ասոր վրայ մայելը  
գաղրեցուց խեղճ կենդանին :

“Աիրական զաւակներս, ըստ տղոց մայրը  
սրտաշարժ ձայնով մը, ևս հիմա շատ աղքատ  
եմ և չեմ կրնար ձեր հօրը աէս շահվէ, երբոր  
դեռ ողջ էր: Բարեխիրտ մսավաճառը Բամպիկի  
համար ստակառութիւն ինձի, և այս ստակով հայ  
պիտի առնեմ որ ուտէք:”

“Չէ, չէ, չէ, պոռացին տղայք: Մենք չենք  
ուղեր որ Բամպիկը ծախսեն: Մեր գառնուկն  
է, և պէտք չէ որ ծախսես, մայր: Եւելի աղէկ  
է որ անօթի մնանք քան թէ գառնուկը ծա-  
խսնք:”

Պարագ տեղը տիկին Առվառէ ջանաց հաս-  
կրծընելու իր տղոց որ գառնուկը ծախսելու ստի-  
պուած է: Որչափ այն կը խօսէր որ համոզէ,  
այնքան տղաք ոտք կը կրխէին որ Բամպիկը ը-  
ծախսուի:

Աերջապէս տիկին Առվառէն ստակը ետ  
տուաւ, ըսելով մսավաճառին. “Չէմ կրնար,  
պարոն, հիմա ծախսել գառնուկը: Արիշ ան-  
գամի մնայ, պիտի ջանամ որ քէչ մատեն ալ  
դիմանամ:”

Ասավաճառն, որ ամեն բան դիտեր էր, շատ  
զթաց այս զժբաղդ ընտանիքին վսայ, և երբ  
տիկին Առվառէ ձեռքն երինցոց որ առած  
տակը ետ տայ, ան ըստաւ. “Ոչ գառնուկը կու-

զեմ և ոչ ստակը: Իրաւ է որ ես մսավաճառ  
մ'եմ, բայց եմ ալ վատվածի միջութ ունիմ: Չէմ  
ուղեր տղոց սիրական գառնուկը յափշտակել:  
Բամպիկը քեզմէ ծախսու պիտի առնեմ և տղոց  
պիտի տամ:” Պարագ պիտի որ առն ու առ  
Այսպէս խօսելու ատեն՝ մսավաճառը շատ այ-  
լայլած էր և աչքելու լիցուեցան:

Այն ատեն Բամպիկն ազատ ձգեցին, և երբ  
պղտիկ տղաք անոր չըրա դին առին և սկսան շո-  
յել շատ ուրախ ու զուարթ էին:

Բանի մը բարեխիրտ բարեկամներ Առվա-  
ռէ տիկնոջ օգնեցին և անկից ետք այնքան տա-  
ռապանք չքաշեց:

ՀԱՅՄՈՒՄՔ. — Այս ինչը այսիպուած էր  
գատեաւէլ ծախսելու: Ինչը համար ովրաց կրտ-  
րած էր: Աշ գեաց շատիւն առկարիելու համար:  
Տղու ինչ ինչէն երբոց հայլանաւն ու իր մանչ  
եկան: Ինչ ըստ մանչ Բամպիկն օւր երմալը:  
Ինչ պարագան գուտաւ կարօւս: Երբ հօրը  
ովրաց բոլցովն շարժեցան: Ինչ ըստ ուրց  
սպանի համար: Աերջապէս ինչ ըստ Առվա-  
ռէ պիկինը: Ինչ ըստ մսավաճառը:

ԱՐՄԱԿԱՆ ԵԽ ԵՌԻԺԸ

Արագիլ մը շատ ծարաւի էր, կուժ մը տեսաւ ու գնաց որ անկից քիչ մը ջուր խմէ: Գուր կար կուժին մէջ, բայց այնչափ քիչ էր որ խեղճ արագիլն իր կտուցին ծայրն անդամ չկրցաւ թրծել:

“Պէտք չէ յուսահատիլ, ըսաւ արագիլն ինքնիրենը. ով որ կամք ընէ ձամբայ մը կը գտնէ:”

Ու զիսուն մէջ յանկարծ հնարք մը ծնաւ: Արովչետև չէր կրնար ջրին հասնիլ, մտածեց որ ջուրն իրեն հասցընէ:

Արագիլն քար մ'առաւ կտուցովն և կուժին մէջ նետեց. վերջն ուրիշ մը, նորէն ուրիշ մը առաւ, և երբոր քարերը կուժին մէջ ընկան, ջուրն սկսաւ վեր ելնել:

Արագիլն իր աշխատանքին պտուղը վայելեց, և ջրէն խմեց, այնպէս որ եթէ այս հնարքը շմածէր ծարտուէն պիտի մեռնէր:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Արագիլն ո՞ր գնաց ջուր էլեպուելու: Առ-ժին մէջ ըստ ի՞նք: Ինչո՞ւ վարա-խել: Ի՞նչ ըստ ինձնիցն: Ի՞նչ հնարդ մատ-ժեց: Ի՞նչո՞ւ ըստը բայց այսուց:

ՇՈՒՆ ՈՒ ԻՐ ՏԵՐԸ

Արիտասարդ մը կուզէր իր շունը գետը նետել ու խղզել: Պղտէկ նաւակ մը կը մտնէ, շունն ալ հետը կառնէ և ափունքէն կը հեռանայ: Եշրոր հօսանքին մէջ տեղը կը հասնի շունը կը բռնէ և յանկարծ գետը կը նետէ: Խեղճ շունը ջրին տակը կ'երթայ կը կորսուի, քիչ մ'ետք երեսը կ'ելնէ և յուսահատութեամբ բոլոր ձիզը կը թափէ որ նաւակին հասնի: Բայց ամեն անգամուն որ նաւակին կը մօտենար՝ իր աէրը թիակովը կը հրէր: Այս կոխը՝ շան ու տվածջը մէջ այսպէս կը շարունակուեր, երբոր աէրը՝ համբերութիւնը հատնելով, երկու ձեռքով թիակը կը բռնէ և շան զիսուն սաստիկ կը զարնէ, բայց նոյն միջոցին՝ ոտքը կը սահի ու ինքն ալ զետը կ'ինայ: Այս ատեն տեսարանը կը փոխուի: Հաւատարիմ շունը գետին տակը կ'երթայ, իր տէրը կը բռնէ և գետեզը կը բերէ, թէկ քիչ մնաց որ հօսանքը զինք պիտի տանէր:

Այսպէս շունն իր տիրոջ մարդասիրութեան օլինակ մը կուտայ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Եշրուառարդ ո՞ր ներեց էր շունը: Խոշո՞ւեցա՞լ առնը: Ինչո՞ւ և ինչո՞ւ գերն ընկառ երեսաւորդը: Խոդուացա՞լ:

ՀԱՅԵ ԲԱՍԻ ՊԱՌԵՎ

ով զանց զանց ով զանց ով զանց  
Օր մը տղայ մ'իր դաստիարակին հետ դաշ-  
տերը կը պարտէր: Տունը դառնալու վրայ էին՝  
երբոք՝ կէսօրին մօտ՝ գոյգ մը մուճակ տեսան դաշ-  
տին ծայրը: Գործաւոր մը քիչ մը հեռուն կաշ-  
խատէր և այն մուճակներն այն տեղը հաներ  
դրեր էր:

Տղան շարասիրութենէ զրդուած՝ իր բարի  
գասափարակին լսաւ. “ Եկէք խաղ մը խաղանք  
այս գործաւորին: Իր մուճակները ցանկապատին  
մէջ պիտի պահեմ, և երբոք կէսօրին ճաշի եր-  
թայ պիտի չգտնէ, մանք ալ պիտի խնդանք: ”

Վզնուամիտ դաստիարակը պատասխանեց. “ Ե-  
ւելի լսաւ խաղ մը կրնաս խաղալ այս մարդուն.  
առեն մէկ մուճակին մէջ հինգ ֆրանքնոց մը  
դիր, և պիտի տեսնես թէ ինչպէս պիտի գոհ  
և երջանիկ ըլսայ. դու ալ պիտի ուրախանաս:  
— Իրաւոնք ունիք, ” ըստաւ աղան: Ուստի  
գնաց երկու հինգ ֆրանքնոց դրաւ խեղճ գոր-  
ծաւորին մուճակներուն մէջ:

Կէսօր մօտ էր. տղայ ու դաստիարակ գացին  
ցանկի մը ետին պահութեցան և առանց տես-  
նուելու սկսան նայիլ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Դաշնո՞ւն ի՞ն հաղպատէր: Ի՞նչ  
պէսան: Առաճակներն ոյնունն էին: Ի՞նչ լարո-  
նին մատածէց պղան և նիզո՞ւ համար: Դաստիա-  
րակն էնի առաջարկից: Տղան ընդունեց: Ի՞նչ  
ըստա: Ո՞ր ժամուն:

Երբ կէսօր եղաւ, խեղճ բանւորն իր գործը  
թողուց և գնաց իր մուճակները հագնելու. բայց  
որչափ զարմացաւ երբոք իր ոտքին տակը բան  
մը զդաց:

Վուտ մը կը ծոփ, կը փնտուէ և հինգ ֆրանք-  
նոց մը, յետոյ ուրիշ մը կը գտնէ: Այս տես-  
նելուն սաստիկ սիրաը կ'այլայլ, աչքերը կը լե-  
ցուին և ծունկի գալով կը պոռայ. “ Աստուած  
իմ, դու զբիշիր ինձ այս անամենեալ օգնութիւ-  
նը: Պիտի որ կինս ու զաւակներս հսկալու  
համար ստուկ չունեի, և այս գումարը ոտքիր  
ինձի: (Օրհնեալ ըլլաս, Աստուած իմ: ) ”

Դաստիարակն ու աշակերտը չերկեցան բան-  
ւորին. այլ երբոք իր տան ճամբան բռնեց ու-  
րախ զուարթ, դուրս ելան: Այն ատեն աշա-  
կերտն իր բարեսիրտ դաստիարակին վեզէն պղուե-  
լով՝ պրտաշարժ ձայնով մ'ըստա.

“ Անորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ”

ձեզի որ այդպիսի ընտիր դաս մը տուիք ինձի:  
Բնաւ երկու հինգ ֆրանքնոցը պիտի շմոռնամ:  
Նիմակ բոլորովին հասկրցայ որ՝ երբ բարիք կը-  
նէ մարդ, ամենէ քաղցր ուրախութիւնը կըզգայ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ-ո՞ր ի՞նչ ըստ- եց ի՞նչ-  
օր զարկաւ: Ի՞նչ- այլու ի՞այլայլ: Ի՞նչ ի՞լէ:  
Կոյն մըզն ո՞ւ ե՞ն դասորիարակ ո- աշակէրտ:  
Այս վեցնն ի՞նչ ըստ- դասորիարակն:

—

## ՃԵՐՄԱԿ Ա.Բ.Զ

Նիւսիսի պաղ երկիրները միշտ ձիւն կայ հո-  
ղին վրայ: Ամառն անգամ ցուրտ է, ինչու որ  
սառցցի խոշոր կտղներ ծովուն վրայ կը ծփան:

Կյա տեղն է Բեւեռային Արջին տունը:  
Նողը չէ ցուրտը. ինչու որ Աստուած անոր  
խիտ մուշտակէ վերարկու մը տուած է որ տաք-  
նայ: Խնչպէս որ դու տաք օդն ու արեւ կը սի-  
րես այնպէս ալ Շերմակ Արջը կը պիրէ կծու  
օդը:

Քեզի պէս սառոցին վրայ չսահիր, ինչու որ  
ոտքին ներբաններն երկայն մոզերով ծածկուած

են: Այնպէս յուշեկ կը քալէ որ կարծես թէ  
զյդ մը մուշտակէ կոչեկ հաղած է:  
Արջը ծովու մօտ կը բնակի, վասն զի կը սի-  
րէ ջրին մէջ լողալ: Ան-ալ շատ որս կը գտնէ  
ուժելու:

Դաշի համար կ'աշխատի փոկ մը (Հայոց հայն)  
բոնել: Ասոռոցին վրայ կը պարափ մինչև որ ծակ  
մը կը գանէ ուր սառը հալած է:

Արջը գիտէ որ փոկը սովորաբար այն տեղն  
գլուխը վեր կը հանէ: Ասոր համար կը նստի  
ու կը հսկէ: Վիշ մ'եւաք՝ փոկին կը գլուխը  
ծակին դուրս կ'երկի: Արջն անոր վրայ կը ցատ-  
կէ, ջրէն դուրս կը քաշէ, պատառ պատառ կը-  
նէ և կ'ուտէ:

Երբեմն ձուկի մ'ետեկն կը վազէ արջը ջու-  
րը նետուելով և այնչափ շուտ որ ձուկը չփա-  
խած կը բռնէ: Երբեմն ալ սատկած կիտի հարր  
մը կը գանէ և զայն կ'ուտէ:

Երբոր արջը ծովափին վրայ ձուկ չգտներ  
այնպիսի աեղեր կ'երթայ ուր ձիւնը հալած է,  
և հատապտուղ կ'ուտէ: Եթէ շատ անօթի ըլ-  
լայ, մինչև անգամ ծովեղը բուսած խոտերով  
կ'ապրի:

ՀԱՐՑՄԱԿ. — Ո՞ւ ի՞ն ի՞ն Բեւեռային

Եւթէ: Ինչո՞ւ համար յո՞ւդակն զվայիտար: Ինչո՞ւ  
համար ասուոյցին վրայ լահեր: Ինչո՞ւ համար ժո՞ւ-  
չո՞ւն հօր իւ բնակի: Ո՞ր սո՞րելքո՞ն աս-էլ իւ սի-  
էէ: Եւթո՞ր ժո՞վլքէ վրայ կերտի՞ո՞ր չշահար սո՞ր  
իւշնայ և ինչ ի՞ս-պէ:

### ՏՈՒՆ ՄԸ

ԴՈՒՐՍԻ ԿՈՂՄԸ. — Անհն առաջ դան ճը-  
մո՞ւ իւ շնէն: Հիմունքը:  
Ո՞ր իւ շնէն: Հողին տակը:  
Ինչո՞ւ համար հիմուն հողին դանիւ իւ դնէն:  
Որպէս զի տունը հաստատուն ըլլայ և պատե-  
րուն տակը ջուր չերթայ:

Ճիմուն վրայ ինչ իւ շնէն: Պատերը:  
Ի՞նչ բանէ իւ շնո՞ւին պատերը: Քարով  
կամ աղիւսով և շաղախով:  
Եւնէ +ար ս- աղկ-ս չփան-ին ինչ իւ դորժ-  
ածէն: Փայտ, երբեմն երկաթ:  
Ի՞նչ է այն դեղ ս-սից +ար իւ հանէն:  
Քարահամնք:

Անկ-ս ինչ բանէ շնո՞ւած է: Արակի մէջ  
պլրած կաւէ ու մոխիրէ:

Շաղախն ինչով կը շնո՞ւէ: Աիրով ու աւազով  
կամ հողով, որ ջրի հետ կը խառնեն:  
Ի՞նչ է ինը: Հնոցի մէջ այրած քար է:  
Ինչո՞ւ համար աղայ ճը կրնայ բանալ դո՞-  
մը, զրդ դաս աղայ վեն կրնայ վլրցնէլ: Ա ասն  
զի իր ծխնիներուն վրայ զիրաւ կը դառնայ:  
Ինչո՞ւ իւ գոյցն դո՞ւ-ը: «Սիրով կամ դուրն-  
փակով:

Պատու-հաններն ինչո՞ւ շնո՞ւած էն: Փայտէ  
շըջանակներով, որ ապակիով ծածկուած են:

Ինչո՞ւ համար ապակիով իւ ծածկէն: Որպէս  
զի սենեակը լոյս առնէ և հովէն ու անձրեւէն  
պահպանուի:

Աղակին ինչո՞ւ շնո՞ւած է: Աւազով կամ գայ-  
լախազով ու կալաքարով, զոր իրարու հետ կը  
խառնեն:

Ինչո՞ւ համար պատու-հանները՝ միշտ բանալու-  
է: Որպէս զի ցորեկը թարմ օդ մտնէ:

Եւթո՞ր պատերը շնո՞ւին, դան կադարն ինչով  
իւ գոյցն: Պրշակով ու տանիքով:

Տանիքն դանին ինչ իւ դնէն: Դերաններ:

Ի՞նչ է իշխնդը: Լայն աղիւաներ, կաւէ շե-  
նուած:

Շադ անդամ իշմեններն ինչո՞ւ գոյցն-ած էն:  
Յարդով:

Պապին "ը հասը պատիւէն առէլ մեր իւ բար-  
յրանայ: Օքսանը:

Ի՞նչէ այս: Առոիը տունէն վեր հանելու  
համար է:

Ասա Ա վերաբեր տամբ մեր սակա զար զար  
ու բանագ զար սակ սար տապահած ու ու  
ամոց նաև համար մաս մաս ու նամակ  
ՃՄՄԹՌՈՒԴԵ ՈՒ ԱՌԵՒԾԵ :

Խաղաք ու ու համար մաս մաս մաս մաս մաս մաս

Եփիկէ մէջ մարդ մը ճամբորդելու ելեր էր:  
Երբոր ընդարձակ դաշտէ մը կանցնէր հետուէն  
առիւծ մը տեսաւ: Առիւծն ալ զինք անսաւ  
և սկսաւ կամաց կամաց անոր ետևէն երթալ:

Երբոր ճամբորդը շուտ քալէր, առիւծն ալ  
շուտ կը քալէր. երբոր կանկ առնէր, առիւծն  
ալ կանկ կ'առնէր: Մարդը զիտեց որ առիւծը  
մինչեւ իրիկուն իր ետևէն պիտի երթայ, և երբ  
մութը կրիէ իր վրայ պիտի յարձակի:

Չպիտի կընար առիւծն փախչիւ, վասն զի  
առիւծը իրմէ տւելի շուտ պիտի վարդէր: Այս-  
պէս հնարք մը մտածեց որ զանի խարէ:

Ճարձը բարի մը վրայ ելաւ, որու տակը խո-  
շունկ փոս մը կար: Գիշեինը պատ կելով՝ ինքը  
զինքը ժայակ մ'նաին պահեց, ուր առիւծը չեր  
կընար զինք անսնէլ: Ա երջը ճիւղ մ'առաւ ժայ-

ուերտուն մէջէն, անոր վրայ դրաւ իր զինարին  
ու վերարկուն, այնպէս որ մարդու նմանի բանով  
ու Ետքը՝ ճիւղը ժայուին վրայ տնկից որու ե-  
տին ինք պահուըտած էր:

Քիչ ատենէն առիւծը կամաց կամաց վեր  
ելաւ: Երբոր վերարկուն ու զինարիը տեսաւ ա-  
նոնց վրայ ցատկեց, և փոսին մէջ ընկաւ ու  
մոռաւ:

Ճամբորդը պահուըտած տեղէն ելաւ և շուտ  
միր տունը հասաւ: Խաղաք ու խաղաք զինք ու  
զանք առնաւ մարդ նախաց ու խաղաք զինք ու  
զանք առնաւ: — Ճամբորդն ինչպատճեն հետ-  
ուուէն: Ի՞նչ ըստ առիւծը: Ի՞նչուէ առնար  
մոռաւ: Ճամբորդն աղադելու համար ինչ հնարին  
դոյջածեց: Ո՞ւր գնաց այդ հնարին դոյջածեցը  
լու համար: Ճեղուն վրայ ինչ որապէ: Ի՞նչ ը-  
ստ առիւծը ելեւը լանոնի առաստ: Ի՞նչ եղան  
առիւծը: Ճամբորդը: զի զողը մայս միջ  
առն միջակ զինք ու զանք միջակ զինք ու զանք

ՆՍՊԱՍՏԱԿԱՆ ՈՒ ԿՐԹՈՅՆ Հայութիւն

այց ու վայում ունի զանք ու զանքապարա: զինք  
Եպապաստիկ մը կը պարծենար միշտ որ շատ  
շուտ վազող է: Անդամ մը կրիային հետ մըրս  
ցումի ելաւ և սկսաւ առջեւէն վազվել, այն մի-

ջոցին որ իր հակառակորդը՝ կրիայն, իր տունը կոնակն առած՝ ծանր ծանր կը քալէր:

“Ասպաստակը կէս ճամբուն վրայ կեցաւ որ նայի թէ կրիայն ուր մնաց և սկսաւ ըսել խրնդալով. “Հա, հա, բարեկամ, թէ որ կարծ ոտքերդ քիչ մ'աւելի շուտ զարժես, աշխարհիս ծայրը պիտի հասնիմ մինչև որ դու դաշտին ծայրը հասնիս:”

Կրիայն խօսք մը ըստաւ, բայց շարունակ քալեց:

“Իրաւ որ, ըստաւ անամօթ նապաստակը, եթէ երեք ոտքով ալ քալեմ քեզմէ աւելի շուտ պիտի հասնիմ: Լալծեմ լսւ կ'ըլլայ թէ որ թեթև քուն մը քաշեմ: Եթէ դու նշանին անգամ մօտենաս, բաւական է որ ես մէկ երկու հեղ ցատկեմ ու քեզի պիտի հասնիմ:”

Ուստի նապաստակը խոտին վրայ երկնցաւ և շուտ մը քնացաւ, այնպէս որ լսեց կրիսյին ոտքին ձայնն երբոր իր քովէն անցաւ, չտեսաւ զանի երբոր առաջ կ'երթար, առանց ետին նայելու:

Յանկարծ նապաստակն արթնցաւ ու ցատկեց. պատրաստ էր սլաքի պէս նետուիլ ու նշանին հասնիլ: “Եղն միջոցին պոռաց. “Ո՞ր է կրիայն:

“Եստ եմ”, պոռաց ձայն մը դաշտին ծայ-

րէն. ծանր բայց շարունակ քալողը մրցանակն առաւ:

ՀԵՐՑՄՈՒՆՔ. — Անդամ մը նապաստակն ուղուհետ մրցունի ելու: Ո՞վ անցաւ: Ի՞նչ ըստ երբոր ետին նայեցաւ: Ի՞նչ պարտախանեց կը այս: Այն արքէն նապաստակն ի՞նչ ըստ ժամանակն անցընելու համար: Արիայն ի՞նչ ըստ: Ասպաստակն ի՞նչ պոռաց երբոր արքինցաւ: Ի՞նչ պարտախան առաւ:

ԱՐԱԴԱԳՈՐԾՆ ՈՒ ԺՐԱԳԱԿՈՒԽԱԾ

“Բաէ նայիմ, Վրիստինէ քոյրս, թաշկինակդ լմնալու վրայ է, պոռաց Ենիկ, որու թեթև մատերը կարծես թէ իր կարին վրայ կը թըռթուէին:

“Չէ վայվեր, պատասխանեց փոքրիկ հանգարաց Վրիստինէն՝ առանց աչքը վեր վերցընելու. հազեւ թէ մէկ կողմը լֆեցի:

“Ո՞չիկ կողմը, ըստ Ենիկ՝ այնպիսի ծիծաղով մը որ ախորժելի չէր: Հապա՝ մէկաեղ սկսանք կարելու մեր թաշկինակները, և ես լուրդ կողմը կարելու վրայ եմ:

“Պիտեմոր ծանր եմ,” հառաչեց Քրիստինէ:  
“Միշտ այդպէս կըսես,” պոռաց Անիկ:  
“Բայց պիտի ջանամ ժիր ըլլալ և ձեռքէս  
եկածն ընել,” ըստ պզտիկ աղջիկը դերձանն  
ասեղին անցընելով, և իր կարը շաբունակեց:  
Աքանի որ այսպէս շուտ կը կարեմ, պոռաց  
Ենիկ, ստոյգ եմ որ ճաշի զանդակը չղարկած  
իմ թաշկինակն պիտի լմնցընեմ: Ուստի կրնամ  
քիչ մը պարտէզն երթալ պարախլ և նայիլ թէ  
արդեօք վարդելը ե՞ր են: — այսպէս կարն  
աթոռին վրայ նետելու նիկ թռաւ գնաց:

Քրիստինէ ալ կը փափաքէր թարմ որ ծծել  
և ծաղկինելը ակնել, բայց կ'ու զէր որ առաջ  
ձեռքի գործը լմնցընէ: Գլուխը ծռեց և շա-  
րունակ կարելով իր թաշկինակին երկրորդ կոքն  
աւապեց, քյոլ պարտէզն չդարձած:

“Ե՛հ, դու ժրաջան պզտիկ աղջիկ, պոռաց  
Անիկ, պարտէզէն դառնալով, միտքդ զիր որ  
ինձի չես կընար հասնիլ: Դեռ ժամանակ ու-  
նիմ, խուցս պիտի երթամ և նոր պատկերս պա-  
տէն պիտի կախեմ:”

Անիկ ուրախ զուարթ նորէն գուրս ելաւ.  
Քրիստինէ իր կարը շաբունակեց. իր թաշկինը  
նաևին երրորդ կողմն ալ լֆեր լմնցուցեր էր գեռ  
քյոլը սենեակը չմտած:

“Աւելի աղէկ չըլլար որ գործդ լմնցընես, քյոլ  
իմ, ըստ Քրիստինէ: Աէսօր մօտ է և ձաշի  
զանդակը պիտի զարնէ:

“Ո՛հ, փոյթս է, ես երկու վայրկենի մէջ  
կնամ լմնցընել կարս. մինակ կուզէի կարդա-  
եղօրս ըստած պատմութիւնը, որ շատ զուարձա-  
լի է ըստ:

Խեղճ Քրիստինէ ձայն չհանեց. անդադար ու  
հանդարտ ասեղը շարժեց ու շարժեց: Խսկ Ան-  
իկ այնքան պաշարուեր էր իր գիլքովն որ իր  
կարը բոլորովին մոռցաւ, և երբ ճաշի զանդակը  
զարկին՝ այն ատեն սթափեցաւ:

“Արդեօք ճաշի ատեն է, պոռաց Անիկ:  
Ո՛հ, սկրելիս, իմ թաշկինակս դեռ չլֆեցի.  
Հասկա: Քո՞նկդ:

“Ճիմա լմնցուցի իմն,” ըստ Քրիստինէ,  
թաշկինակը կամաց կամաց ծալելով:

“Ճիշտ այս ալ նայառապահին ու կը այն ա-  
ռակին դարձաւ,” մտածեց ինքնիլեն Անիկ, որ  
թէև յանդուզն ու մնապարծ էր, բաւական  
խելք ունէր և այս բանս իրեն դաս մ'եղաւ:

Թնէպէտև արագ շարժողը կրնայ ատեն մ'ա-  
ռաջ երթալ, բայց հանդարտ ժրաղլուխ աշխա-  
տողը վերջապէս կը յաջողի:

ՀՈՐՑՄՈՒՆք. — Երիս- +ոյր ի՞նչ գործ կ'ընէին։  
 Ո՞վ ա-ել շ-ո՞ և էտրեր։ Ի՞նչ էտրծեր ընէւ  
 այն։ Վրէտորինէ որլոտ գործ ըրտա- +ոյրը լուսր-  
 յուծ։ Աննի ժամանակ ո-նիմ ըսելով ի՞նչ ըրտա-։  
 Երե բարյա-։ Վրէտորինէ որլոտ գործ ըրտա- էր։  
 Աննի գործի նորուա-։ Կարդալու առենն ի՞նչ  
 անցա-։ Վրէտորինէ գործն ա-արդրե՞ր էր։ Աննի  
 ի՞նչ մարդեց։

## ՏՈՒՆ ՄԷ

ՆԵՐՑԻ ԿՈՂՄԸ. — Տան մը ներսի ովին ինչպէ  
 ին։ Սենեակներ, սանդուղներ, անցքեր։  
 Խնչու համար այլ և այլ սէնէակներ ին։  
 Վասն զի աղէկ չէ մեզի համար մի և նոյն սե-  
 նեակը կերակուր եփել, ուտել և նստիլ։  
 Ի՞նչ ի՞սուս-ի այն սէնէակն ս-ո՞ ի՞ւրակո-ր ի՞ւ-  
 թի։ Խոհանոց։

Հապտ գնանալու սէնէակներ։ Սնջարան։  
 Կերակո-րի սէնէակն։ Սեղանատուն։  
 Եսորելու սէնէակն։ Խօսացան։  
 Ո՞ն և ամեն լու սէնէակն։ Արակը։  
 Տան ներիւ գործուած սէնէակներն ի՞նչ ի՞ւ-

առ-ին։ Մառաններ։

Ի՞նչ բանի և գործառնուին։ Պահնի, եղ,  
 փայտ, ածուխ պահելու։

Եսյն կարգին մշջ եղած սէնէակներն ի՞նչ ի՞ւ-  
 առ-ին։ Դասիկոն։

Սէնէկն սէնէակ ս-ուից կանցնեն։ Դոնէ կամ  
 անցքէ։

Դասիկոնէ դասիկոն ինչով ի՞ւնեն։ Սանդզով։  
 Ի՞նչ են սանդուղները։ Փայտէ կամ քարէ  
 շնուռած խել մը աստիճաններ։

Յապանի ինչով լուս-ած է։ Սովորաբար փայ-  
 տով, որ տախտակի ձևով կտրուած և իրարու-  
 կցուած են։

Խահանոցի յապանի ինչով լուս-ած է։ Աղիւսով։  
 Սէնէակն մը վլըն մասն ի՞նչ ի՞ւսուի։ Ձեղուն։  
 Սէնէակն մը յապանի մնչով ի՞ւ ծածկնեն։ Օ-  
 թոցով, որ բուրդէ կը շնուրի։

Պատրերն ինչով ծածկուած են։ Օճեփով, որ  
 կիրի, աւազի ու մազի խառնուրդ մ'է,

Սոչորաբար ծեփն ինչով լուս ի՞ւ դնեն։ Փայտէ  
 բարակ շերտերու վրայ որ կցորդք կ'ըսուին։

Օճեփուած պատրերն ի՞ւ ծածկնեն։ Երբեմն կը  
 գոցեն նկարներով, երբեմն դունաւոր թղթերով։

Յորէկը ի՞նչով մա-ն ի՞ւ պահուին սէնէակ-  
 ները։ Փեղկերը գոցելով։

Պէշէրն ինչ ծառայէն իւղիւր : Հովէ,  
աղմուկէ ու գողէ պահպանելու :

Պէշէրն ինչպէս իւ ըստասոցէն + մէր պահուը :  
Զէթով, մոմով, քարիւղով, կազով :

Ասոյէ ուր չէ հարող ուսոնէլ մինչ որ չպահուէ : Կազը :

Ինչո՞ւ հաճար : Ինչու որ օդի նման մարմին  
մ'է :

Ինչո՞ւ չնուածէ է : Տեսակ մածուխէ ելոծ  
շողի է, որ երկաթէ տուփերու մէջ կը տաք-  
ցընէն :

Ի՞նչպէս պահուը իւ բերեն : Երկաթի խողո-  
վակով, որ հողին տուկը կը դրուի :

Ուրէլ ի՞նչ իւ բերուէ պահուը հաղացի խողո-  
վակով : Պուր :

### ԽՇԱՑՆՆ ՈՒ ԿԱԼԱՌԱՍԻՌԵՆԵՐԸ

Ետենօք իշխան մը կար որ երբեմն իր տէ-  
րութեան զիսաւոր բանտերը կը պարտէր :

Օրին մէկը՝ բանտին բակը հինգ հատ կա-  
լանաւոր տեսաւ, որոց դաստակներէն շղթայ ան-  
ցուցեր էին, և աշխատելու կ'երթային :

Իշխանը հրամացեց որ քիչ մը կենան և ա-

պա անոնց զատ զատ հարցուց թէ ի՞նչ պատ-  
ճառաւ բանտ մտեր էին :

Եռաջինն ըսաւ որ յանցանք մըրած չէ, և  
թէ զիսաւոր վկան սուտ խօսեր էր իրեն դէմ:

Երրորդն ըսաւ որ դատաւորն իրեն դէմ ով  
ունենալուն դատապարտուեր էր :

Երրորդն ըսաւ որ զինք սիսալմամբ յանցա-  
ւոր դատեր են :

Չորրորդն ըսաւ որ զինքն ուրիշն տեղն ա-  
ռեր են :

Ուստի ամենքն աղաւեցին թաղաւորն որ ներէ  
և զիրենք բանտէն հանէ :

Ա երջը թաղաւորը հինգերորդ մարդուն դար-  
ձաւ ու հարցուց . “Հապա դուն ինչո՞ւ համար  
բանտ մտեր ես :

“Եփառն, պատասխանեց մարդը, քսակ մը  
դողսայ, և չեմ համարձակիր ձեզմէ ներորդու-  
թիւն ինդիրելու :

“Ուրեմն, ըսաւ իշխանն, դու արժանի չես  
այսպիսի պատուաւոր մարդերու հետ բնակիլ, որ  
կըսեն թէ բնաւ յանցանք մը չունին :”

Յետոյ՝ բանտապահին դառնալով ըսաւ .

“Եյս մարդուն շղթաները քակէ և թշլ  
տուր որ աղատ երթայ : Իր յանցանքին վրայ  
նոր յանցանք մը չաւելցուց սուտ խօսելով :”

ՀԱՐՁՄՈՒՆՔ. — Ի ՀՅԱՆը հինգ կալանառունեցն  
ո՞ւ պէսս: Ի ՀՅԱՆ հարցոց անոնց: Աւազն  
մարդն ինչ ըստ: Երեւութէ: Երբութէ: Չոր-  
շորդը: Ի ՀՅԱՆ ինչուցին ասոնք: Ճինչերուդն  
ինչ ըստ: Ի ՀՅԱՆՆ ինչ պատասխանեց: Բանդա-  
պահն ինչ հրամայեց: Ի ՀՅԱՆ համար:

## ԱՌԱԽՈՎ

Առիւծը կը կոչուի “կենդանիներուն թագա-  
ւորը”: Ա պյենի ու յանդուգն է և շատ ուժեղ:

Անձ առիւծները շատ հեռու, վայրի լո-  
ներն ու Ափրիկէի դաշտերը կը բնակին:

Ասիայի մէջ ալ առիւծներ կը գանուին, բայց  
Ափրիկէի առիւծներն աւելի զօրաւոր և մեծ են:

Յորեկ ատեն շատ քիչ դուրս կ'ելնէ առիւծը.  
բայց երբոր արելը մարը մտնէ, առիւծն իր քար-  
ացը կը ձգէ և որսալու կ'երթայ: Թաեթև ու-  
քով յառաջ կ'անցնի և քալելու ատեն ձայն  
Հաներ:

Երբոր ամեն կողմը հանդարա է, իր սոսկալի  
ձայնը կը լսուի. զիշերուան մէջ որոտումի պէս  
կը դոռայ:

Երբոր զիւղի մը մօտ է, շուները կ'ըսկսին  
հաջել. ձիերը, կովերն և ուղտերը սոսկալով կը  
փախչին, ինչու որ կը ճանշնան առիւծին մոըն-  
չեւնը: Մարդիկ իրենց բնակարանին չըրս դին  
կրակ կը վառեն և ջահերը կ'օրորեն որպէս զի  
այն ահարկու կենդանին վախցընեն:

Բայց առիւծին հոգը չէ: Ը իսուակ արջառը  
գտնուած տեղը կ'երթայ և մէկ վայրկենի մէջ  
ձի մը կամ կով մ'իր ահռելի ձիրանին տակ  
կիյնայ: Ասոր համար Ափրիկէի բնակիչներն ի-  
րենց հօտին ու արջառին մէկ մասն այսպէս կը  
կորսընցընեն:

Իրաւ է որ առիւծը իրիկուն չեղած իր քար-  
ացըն չելներ, բայց երբոր անօթի է յորեկն ալ  
կը թափառի դաշտերը, ուր վայրի էշեր ու վե-  
թեր շատ կը գանուին:

Ասոնք հեռուէն կ'առնեն առիւծին հոտը, և  
երբոր անոր ձայնը կը լսեն, անապատին մէջ  
կայծակի պէս կը վազեն որ չբոնուին:

Այսպէս ահ ու դողի մէջ կը շուարին և ո-  
մանք առիւծին պահութած տեղը կուգան: Այն  
ատեն առիւծը կը պառկի, իր աչքերը կը շողան,  
և մէկ անգամ ցատկելով որսին վրայ կ'իյնայ:

Առիւծն երկայն կարծր բաշ մ'ունի, և իր  
մորթը բաց դեղին է:

Սատակ առիւծն արուեն աւելի վոքը է և  
բաշ չունի:

Ըստառին խորերը կը շմէ իր բնակարանը,  
և այն տեղ կատրի իր կորիւններով: Այս անոր  
որ մատակ առիւծին քարայրին քովէն կ'անցնի:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ էր կու-է առե-ծը:  
Ի՞նչ էր էր էր է: Ո՞ր է ծե առե-ծէ բնա-  
կարանը: Ո՞ր էր ի՞նչ առե-ծէ էր է: Առ-  
էր ո՞ր առ-է էր է: Ի՞նչ էր մ-ս կենդանի էր է  
էր սոսկան: Ա՞րդի ի՞նչ էր առե-ծը հալս-  
ծելու համար: Ի՞նչ համար էր մ-ս սոսկան  
դուրս էր է: Ո՞ր էր մ-ս նիւն լոյս էր էր առ-  
է: Ի՞նչ էր էր է: Ա՞րդան առե-ծն ար-է-էն  
ի՞նչ բանով էր առ-է-է:

Վ. Ա. Պ.

Հնդկաստանի մէջ լնդարձակ անտառներ կան  
խոսերով ու մացառներով լեցուն: Ապրն ա-  
նոնց մէջ կը հաստատէ իր որջը: Գիշեր ցերեկ  
իր որսը բռնելու պատրաստ կը գտնուի:

Ապրին մօրթը գեղեցիկ սև շերտերով ծած-  
կուած է:

Թաէն շատ աղլոր է վագրն իր շերտաւոր  
մօրթով, բայց ուրիշ կինդանիներուն մէջ ամե-  
նէն կատաղին ու վտանգաւորն է: Արդիկ ա-  
նորմէ աւելի կը վախնան քան թէ առիւծէն:  
Առիւծը դոհ կը լայ, երբոր կշտանայ, բայց վագրն  
անկուշտ է: Ամեն հանդիպած կենդանիները  
կ'ըպաննէ և շատ անգամ ահուելի կոտորած  
կ'ընէ:

Վագրը կամացուկ մ'անտառին մէջ կը սահի,  
այնպէս որ անշուկ իր որսին կը մօտենայ: Այս  
ատեն արագ ոստումով մ'իր որսին վրայ կ'իյ-  
նայ և զայն գետին կը տապալէ:

Վագրը ձիուն պէս չվագեր, այլ ոստումներ  
կ'ընէ՝ ամենէ արագընթաց ձիէն շուտ:

Երբոր բանակ մ'անտառին մօտ գտնուի, մար-  
դիկ միշտ արթուն կը հսկեն, վասն զի վագրն  
երբեմն անոնց վրայ կը յարձակի: Երբեմն մարդ  
յափշտակելով տարած է, և չեն կրցած ազա-  
տել:

Վագրը շատ լաւ կը լողայ: Երբոր որսորդ-  
ներու հանդիպի և գետի մօտ գտնուի՝ իմոյն ա-  
նոր մէջ կը նետուի և՝ անվախ լողալով միւս  
եզրը կը հսկնի: Այս կերպով շատ անգամ որ-  
սորդներուն ձեռքէն կ'աղատի: Հնդկաստանի մէջ  
վագրը կ'որսան վիզերով և շուներով:

ՀԱՐՑՄՈՒՆք . — Ո՞ւ իւ բնակի վագր : Ի՞նչ  
առցելու-նե-ն իս վագրը ու առէ-ձէն մէջ :  
Վագրին հունին գոյնն ինչ է : Ինչ համար հար-  
դին վագրին առէ-ձէն իւ վագրան առն նէ առէ-ձէն :  
Ի՞նչպէս իւ բնակ էր որու : Ա՞սրդու վաց իւ  
յարշտակ : Ուսուրդին յեւ-էն ի՞նչպէս հաղործ էր-  
բեն : Ի՞նչպէս կորսան զայն :

## Ի՞նչ

Ի՞նձը , որ կատուի ցեղէն է , խիստ գեղեցիկ  
կենդանի մ'է : Ծաէ Ասիա կը գտնուի և թէ  
Ափրիկէ : Վագրին չափ մեծ չէ , բայց աւելի  
շնորհալի ձև ունի և իր գեղին մօրթը սև բի-  
ծերով ծածկուած է :

Հնդկաստանի մէջ ինձը ծառէ վագր կը կո-  
չուի , ինչու որ կատուի պէս ծառէն վեր կընայ  
ելնել և թուփէ թուփ մազիլ : Այսպէս ան-  
տառին մէջ շատ կենդանիներ կը բռնէ , որոց շնո-  
րինար համնիլ վազրն ու առիւծը :

Լրբոր որսորդը ինձի մ'ետեէն իյնայ , ինձը  
թուփերու մէջ կը պահութի , բայց շուները խո-  
աերուն մէջն վազելով զայն կը գտնեն և դուրս  
կը հանեն : Լրբոր իր պատսպարուած տեղէն

գուրս կ'ելնէ , կը ջանայ փախչել ծառէն վեր ել-  
նելով :

Այն տեղ շուներէն ապահով է , բայց որ-  
սորդին հրացանեն ազատ չէ : Որսորդն ալ շատ  
շմտենար ինձին վախնալով որ իր վըայ չյար-  
ձակի , հապա հեռու կը կենայ և հրացանով  
նշան կ'առնէ :

Լրբեմն շուտ մը կը զարնուի և կը մեռնի ,  
բայց թէ որ մինակ վերաւորուի , որսորդին վըայ  
կը ցատկէ և շատ անդամ իր ակռաներովն ու  
ճիրաններովը կըսպաննէ :

Ի՞նձն ալ աղուէսին պէս վառեակները կը օկրէ  
և գիշերներն հաւնցներու բոլորտիքը կը պարտի :

Լրբեմն ինձը կ'ընտաննեցնեն և երբ ընտելա-  
նայ շատ զուարձալի է : Ի՞նձու կորիւնները սի-  
րուն , շնորհալի են և պղտիկ կատուներու պէս  
իրարու հետ կը խաղան :

ՀԱՐՑՄՈՒՆՔ . — Ալնդանիներու ո՞յ ցեղէն է ին-  
չը : Ո՞ւ իւ գանուէ : Ա՞սրդին ինչպէս ծածկուած  
է : Ի՞նչ էր կողէն զայն Հնդկաստանի մէջ : Ի՞ն-  
չը : Ի՞նչ է նուն ինչ մ'երբար որոնուր իւ պէսնէ :  
Ուսուրդին գնապու-էլու երան ի՞նչպէս ի՞րսպան-  
նէն : Ի՞նչ է ո՞ւ-պէ երբեմն :

ՓԻՂ.

Չկայ կենդանի մ'որ փիղէն խոշոր ըլլայ: Ա'եծ  
դըւս ու ականջներ ունի, երկու ժանիք, որ է  
չշառկ, և երկայն քիթ մը, որ իր ուղած կող-  
մը կը դարձնէ, և գետնէն ամենէ բարակ բա-  
ներն, ասեղ մ'անգամ կը վերցընէ: Այս քի-  
թը, կամ պարփճ՝ իր ձեռքն է, որով բերանը  
կը տանի իր կերակուրը, ծաղկներ կը ժողվէ,  
չուաններ կը քակէ, գուռները կը բանայ ու կը  
գոցէ բանալիով: Պատիճն այնքան ուժով է որ  
կրնայ առիւծ մը, ձի մը ճզմել և ծառն ար-  
մատէն հանել:

Փիղերը խումբ խումբ կ'ազրին, առջեւէն ծե-  
րերը կ'երթան, մէջ տեղէն պղտիկներն ու տկար-  
ները: Աը սիրեն գետերուն եղերքն ու հովիտնե-  
րը: Հնդկաստան, Վահա կը գտնուին փիղեր:

Ա'արդիկ կ'որսան փիղը և կընտելացընեն: Այն ատեն շատ խելք, հըու և օդոտակար կեն-  
դանի մը կը դառնայ: Բեռ կը կրէ, փոյտեր  
կը շարէ, ծառայի պէս տան և շուկոյի գոր-  
ծեր կընէ:

Հին ատեն փիղն կռնակը աշտարակներ կը  
շնին և անոր մէջ զինուորներ լեցընելով պա-

տերազմի կ'երթային մարդիկ, ինչպէս հիմակ  
Հնդկաստանի մէջ զահաւորակ գնելով վրան  
վագր որսալու կ'երթան:

Փիղն իր տէրը կը սիրէ, երրոր իրեն խնամք  
տանի. բայց երրոր զարնէ կամ ծեծէ, ոխ կը  
պահէ: Աը սիրէ նաև երաժշոութիւն, անուշ  
հոտեր և պտուղներ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Փիղն Է՞նցպէս հենդանի է: Ի՞-  
չին Է՞նչ անուն ունի և անուլ Է՞նչ չընէ: Ա'ե-  
նանի Հաղոցը: Ի՞նչ հարժով էր համբորդեն գիշե-  
րը: Ո՞ր էր գանուել վիլը, և ո՞ր հովերը էր քնա-  
նէ: Ի՞նչ քնութեան ունի: Օդուակա՞ն է: Հին  
ապէն Է՞նչ չընէն: Չա՞ր է վիլը: Ի՞նչ էր սի-  
րէ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — ԱՇԽԱՏԱ

# ԵՍԽԱԳԻՏՏԵԼԻՔ

## ՄԱՍՆ 2

### ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍ

1. Պղտիկ տղայ եմ, հետաքրքիր եմ, չորս դիմ կը նայիմ, շատ բաներ կը տեսնեմ, բայց չեմ զիտեր թէ ի՞նչ են:

2. Աչա դլիսուս վրայ կայ երկինքը, ոտքիս տակը հողը: Կան բաներ որ կեանք չունին, չեն շարժիր և ուր որ են անդ կը կենան. կը տեսնեմ բաներ ալ որ կեանք ունին և կրնան մէկ աեղջ ուրիշ տեղ շարժիլ:

3. Ասոնք զարմանալի կ'երևն ինձի. գեռ աշակերտ եմ, կ'ուզեմ սորվել, կ'ուզեմ մոիկ ընել ծնողքիս և վարժապետիս տալիք դասերը:

### ԱՍՏՈՒԾԾ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

4. Մեր տեսած ամեն բաները առարկայ կ'ըսուին: Եւ ուք տեսակ առարկաներ կան: Առաջին տեսակները կեանք ունին և ամեն կողմը կրնան քաւել երբոր ուղեն, ասոնք ինդանիներ կ'ըսուին. երկրորդ տեսակներն անոնք են որ հողին վրայ կը բուռնին — այսինքն ծաղիները, խոտերը և ծառերը — ասոնք բանիներ կ'ըսուին.

Երրորդ տեսակէն են կենդանութիւն, շունչ չունեցող բաները — ինչպէս երկինք, երկիր, քարեր, ջուր, տուներ, կարասի, հաղուստ և ուրիշ շատ բաներ — ասոնք ալ անինդան առարկաներ կ'ըսուին և իրենց դրանուած աեղջն չեն կրնար շարժիլ:

5. Ասառուած սանեղծած է ամեն բան, թէ կենդանի թէ անկենդան արարածները: Նա ըրաւ արեց, լուսինը, աստղերը, մեր բնակած երկիրը կամ աշխարհը, ծավը, խոտերն ու ծառերը և բոլոր կենդանիներն որ երկրի վրայ կ'ապրին, օդին մէջ կը թոխն, կամ ջրի մէջ կը լողան: Ասոր համար Աստուած ԱՐԱՐԻՉ կ'ըսուի, այսինքն ամեն բան ընող:

6. Աստուած անահեսանելի է. թէև չտեսնուիր, բայց ամեն տեղ է. ինք ամեն բան զիտէ ու կը տեսնէ: Նոյնպէս Աստուած բարի ու արդար է, ամեն կենդանի արարածներուն մնունդ ու օդ կուտայ: Մեր պարտքն է սիրել զԱստուած և մեղի ըրած բարիքին համար միշտ չնորհակալ ըլլալ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Դու ի՞նչ է՞: ի՞նչ գիտես: 2. Ի՞նչ է ուեւնելու բոլորդիւն: 3. Տէսածդ կը հասկնան: 4. Գունչ ուեւնել առարկայ իսր: 5. Ո՞չ ըբած է բոլոր արարածնեւնը: 6. Կը ուեւնելու Աստուածը:

### ԱԵԽԳԱՍՆԻՔ

1. Ամեն ասլորով արարած կենդանի կ'ըսուի: Կենդանիները կ'ապրին շոնչ աւնելով ու կերակաւը ուտե-

լով։ Կերամկուրն իրենց մնունք կուտայ։ Եթէ մնունք չգտնեն անօթութենէ կը մեռին։ Կան շատ կենդանին որ զգայարանք ունին, այսինքն կը տեսնեն, կը լսեն, կը հոտուըտան, կը ճաշակեն և կը ջշափեն։

2. Պէտքն ալ աչք ունի բայց չկրնար տեսնել։ զգայարանք չունի, ինչու որ անկենդան առարկայ է։ Աստուած տուած է կեանքը կենդանիներուն։ Մարդ մը կրնայ դէմքով ու աչքով պէտէկ շնել, կրնայ հաղուեցընել, բայց անոր կեանք չկրնար տալ։ Միշտ ան կենդան առարկայ մը կը մնայ, ոչ կ'ըզգայ և ոչ կը շարժի։

3. Շատ տեսակ կենդանիներ կան, մեծը կայ, պղտիւ կը կայ երկրիս ամն կողմը. ոմանք հողի վրայ կ'ապւին, ոմանք ջրի մէջ, կենդանեաց գլուխն է ճարդ։

4. Ալբանները մաղէ, բուրդէ կամ մուշտակէ մորթով ծածկուած են և հողին վրայ կը քալեն չորս տուքով. ինչպէս ձին, կովը, շունը, ոչխարը, կատուն և ուրիշ շատ տեսակներ այս կարգէն են։ Չոքուուանէ կ'ըսուին այն անսասուններն որ չօրս ոտք ունին։ Կան անսաններ որ մինակ մէկ օմբակով ոտք ունին, ձիուն պէտ։ Կան ուրիշ կենդանիներ ալ որ երկուքի ճեղքուած պնդակ ունին, ինչպէս կովը, ոչխարը, խոզը, եղջերուն. ուրիշ կենդանիներ ալ կան որ մինակ մէկ բթածատ և ձիրաններ ունին, շան պէս, կատուին պէս, առիւծին և արջին պէս։ Մարդիկ կով ու ոչխար կը մորթեն ուտելու համար. անոնց մորթէն կաշի և մուճակ կը շնուուին։ Կովին ու ոչխարին բուրդը կը գզին և գերձանի պէս կ'ոլորեն և այս գերձանով ընափր հաղուեցներ կը հիւեն։

5. Թթւաններն պղտիւ սիրուն կենդանիներ են։ Պես

առւրներ ու թեկր ունին որով օդին մէջ կը թուին և շատ հեռու տեղեր կ'երթան առանց յոդնելու։ Թուչուններն ալ ունին երկու սրունք ու ստքեր, որով կրնան հողի վրայ քալել կամ ծառերու ոստերուն վրայ թառիլ։ Կան թուչուններ որ շատ պղտիւ են, ինչպէս Ճնազուկն ու սարեկիկը, կարմրալանջն ու ցախարեկը, որ մամուռէ և ուրիշ բաներէ պղտիւ կոկիկ բոյներ կը շնեն ծառերու ու թուփերու վրայ։ Աղաւնին, աղուուն որ որին մեծ տեսակ թուչուններ են, նոյնպէս հաւերն որ տուներու մէջ կը գտնուին և սերմեր կը հաւաքեն կ'ուտեն։ Սաղեր, բագեր ու կարապիներն ալ թուչուններ են որ ջուրի մէջ կը լողան և երկու մաշկակապ ոտք ունին, որով կը շարժին լողալու ատեն։ Ամեն թուչուն հաւկիթ կ'ածէ իր բոյնին մէջ. երբոր ատեն մ'անոնց վրայ նստի ու տաքցընէ ձագուկներ կ'ենեն. ասոր կ'ըսեն թիւել։

6. Զուկերն ալ ջուրի մէջ ապրող կենդանիներ են։ Շատեր կան որ կաշի ունին փայլուն թեփերով. նոյնպէս ունին լողակներ որով ջուրին վրայ կը կենան։ Զուկերը կրնան շատ շուտ լողալ և իրենց որսին վրայ կը վաղին։ Քանի մը ձուկերը խիստ մեծ են, մարգէն շատ աւելի մեծ։ Բայց ուրիշներ ալ պղտիւ են, ինչպէս տառեխներն և անձրուկները, որոնք թէ ծովու և թէ դեսի մէջ խումբ խումբ կը լողան։

7. Ուրիշ կարդ կենդանիներ ալ կան որ առջան կը կոչուին, բայց մեր երկիրները շատ շեն տեսնուիր։ Սուզուններն, ինչպէս օձերն ու իծերը, յստակ փայլուն կաշի ունին, ձուկերուն պէս, և մեծ խոսերու ու ճահիճներու մէջ կը սողան։ Քանի մը սողուններ, ինչպէս դորսն ու քարաթոշը, ոտքեր ունին, որով կրնան 10

քալել կամ ցատկել = Գործերը սիրուն սողուններ են, որ կը ցատկրածն և շատ անդամ մարդերու կամ լճակներու մօտ կը գտնուին :

8. Միջամբներն ուրիշ կարգ կենդանիներ են որ ամեն տեղ կը գտնուին : Ճամաներ, մժղուկներ, մեղուներ և թիթեռնիկները միջամաններ են որ ամառ օրեր առաջիս կը թռչուին և երբեմն ոմանք մեղեց շատ նեղութիւն կը պատճառեն :

9. Այս կարգի կենդանիներէն զատ՝ ուրիշ այսպիսի պղտիկ կենդանիներու, տեսակներ ալ կան որ աչքով չեն տեսնուիր, բայց գոյութիւն ունին և իրենց բնութեան համեմատ կ'ասրին ջուրի կամ ուրիշ նիւթերու մէջ. ասոնք կ'ըսուին կենդանիներ, որ միայն գործիքով մը կրնան տեսնուիլ և այս գործիքն ալ կ'ըսուի հանրացոց : Բոլոր երկիրը մծ ու պղտիկ կենդանի արարածներով կը վլխտան . չգիտենք թէ շատերն ինչ բանի օգուտ ունին : Մեծ մասը, խոտ, բոյս, տերեւ, սերմ և պտուղ ուտելով կ'ասրին, ոմանք կ'ասրին պղտիկ կենդանիներ սպաննելով և ուտելով : Պղտիկ գառ մը կենդանիներ կան որ մարդու խնամքով կ'ասրին, ինչպէս են, ձին, կովե, խողը, էշը, շոնք և կատուն : Ասոնք ընդունի կենդանիներ կը կոչուին և մեղեց շատ օտտակար են : Չորս ոտքով կենդանիները աբրու դանի կը կոչուին : Թռչուն մը չորքոտանի չէ, ուստի Երկորունիկ կ'ըսուի : \*

(\*Այս դասերը աալու, ատեն գասատուն պէտք է որ կենդանիներու պատկերներ ցոյց տայ աշխերաներուն և անոնց դլաւոր յատկութիւնները համառօտ բացարկէ :)

ՀԱՐՑՄՈՒՆՔ . — 1. Ի՞նչ է կենդանի . ի՞նչեւ է առաջնի : 2. Մարդու կը նայ իւնաւ առաջ պէտիկ ճը : 3. Ո՞ր է ապրին կենդանիները . արդուն ի՞նչ է : 4. Ի՞նչ ունակ անսառներ իւն : Արման օդուակար էն ամրդուս : 5. Ի՞նչ էն նույնանները . յէշէ մէկ տանի մէկ և մէկ աղջիկ նույնաններ : 6. Ի՞նչեւն յարկերը . ի՞նչ ունին : 7. Սույնաններն ի՞նչ են . բուլըն ալ կը սովորն : 8. Ո՞ր է կենդանիները մէջատ կ'ըսուին . օդուակար էն աղիներ : 9. Կենդանիներն ի՞նչ են . ապագ է՛կերէն : առջրաբար ի՞նչ սորտերը կ'ապէցն կենդանիները :

### ՄԱՐԴՈՒՆ

1. Մարդը կենդանիներուն մէջ ամենէ ընտիր և բարձր տեսակն է, իր զօրութեան և ճարտարութեան կողմէ : Եթէ աշխարհի վրայ բնակող բոլոր մարդիկը մէկսեղ առնենք մարդկացին աղջ կը կոչենք : Հայր մ'ու մայր մը . իրենց զաւակներով ընտանիք կը կազմն : Շատ մ'աղշգակից ընտանիքներ մէկսեղ գալով օեւ կը շինեն, ցեղերն ալ ժողովուրդ և աղջ : Մարդիկ բանաւոր արարածներ են, կը խորհին, կը խօսին, կարող են ամեն անսառներու վրայ իշխել : Զեն քալեր անոնց պէս, այլ երկու ստքի վրայ կը կենան, թերը, ձեռքեր ու մատեր ունին, որով կը կրնան գործել ու աշխատիլ : Թաւու կամ մուշտակի մորթ չունին : Մերկ է իրենց կաշին և ծածկուելու համար հաղուստի կարօտ են : Բայց կարող են իրենց ձեռքով զգեստ շինել և էրջեցներ գործածել, որով տուներ, կարասիներ և ուրիշ շատ

օղտակար բաներ կը շնուի : «Սոյնպէս իրենց կերակուրն եփելու և ցուրտ ժամանակ տաքնալու համար կրակ կրնան վառել :

2. Մարդիկ առանձին ապրիլ չեն սիրեր : Ընտանեաք կ'ապրին կամ ուրիշ աղդակիցներով, նոյնպէս կ'ուզեն որ դրացիներ ունենան : Կամ մարդիկ որ դաշտերը կը բնակին իր ճիշճեներու մէջ, բայց շատ մարդիկ չէւլցն ու ժառանչը կը բնակին : Գիշեր քիշ տուներ ունեցող տեղ է . ժառանշ աւելի շատ տուներ կամ և երկար փողոցներ : Այն քաղաքն ուր թագաւորը կը նատի կամ կառավարութիւնը կը գտնուի՝ հայրականութ կ'ըսուի : Կոստանդնուպոլիս Թուրքիայի մայրաքաղաքն է, որ Պոստորի եզերքը շնուռած է : Թաղաւորի մը կամ իշխանի մը տունը պատրաստ կ'ըսուի :

3. Մարդիկ զիւղերու և քաղաքներու մէջ կը բնակին որ իրարու օդնեն, խօսակցին ու տեմնուին : Այսպէս մէկաեղ ապրին ընկերուան, ըլլալ կամ ընկերուանք ապրիլ է : Նոյն երկրին մէջ բնակող բոլոր մարդիկ՝ այն երկրին բնակչները կ'ըսուին և աշխ մը կը կազմին : Աշխարհիս մէջ շատ երկիրներ ու աղդեր կան :

4. Ամեն մարդ երկու անուն ունի, մէկն իր առաջանք անունն է, միւսն իր մականունը : Աւաղանի անունը՝ որ առաջ կը գրուի, մկրտութեան ատեն կ'ընդունի, իսկ մականունը բոլոր ընտանիքին կամ ցեղին վերաբերող անունն է : Երբոր կ'ըսենք, Յովհաննէս Արքայի անունն աւաղանի՝ երկրորդն ընտանիքի անունն է :

5. «Նոյնպէս ամեն մողովուրդ աղդային անուն մ'ունի, որով ուրիշ աղդէ կը տարբերի : Այս աղդային անունը կ'առնենք այն տեղէն ուր ծնած ենք : Եթէ

Հայաստանի մէջ ծնէինք, Հայաստանցի պիտի ըսուենք . եթէ Պօլսի մէջ Պօլսեցի . եթէ Իզմիրի մէջ Իզմիրցի : Հայուղէն անունն ընդհանուր անուն մ'է որ մեր ազգին Հիմնադրին անունէն առած ենք :

6. Կան մողովուրդներ որ Ճերմակ մորթ ունին, կապոյտ կամ սև աշեր, և գեղին կամ խարտեշ կամ սև մաղեր : Կան ժողովուրդներ ալ որ սև մորթ, սև մաղ և սև աշեր ունին : Բայց բոլորն ալ մարդ են և նոյն կաղմուածքն ունին . փոյթ չէ թէ իրենց մորթը Ճերմակ կամ սև ու դրափ տեսքը տարբեր ըլլայ : Պէտք չէ բնաւատել կամ նախատել այն անձերն որ մեր զոյնը չունին կամ տպեղ կերպարանք ունին, այլ պէտք է մարդասիրութեամբ վարուիլ ամենուն հետ :

7. Մեր մէկ ձեռքը աջ կ'ըսուի, միւսը ձախ : Ամեն տղայ ու աղջիկ գիտե թէ ո՞րն է իր աջ ձեռքը : Այն ձեռքն է որով խաչ կը հանենք, ուրիշի ձեռքը կը թովուենք, կը դրենք և ձախ ձեռքէն աւելի շատ կը գործածենք : Նոյնպէս մէկ աջ ու մէկ ձախ ոտք ունիք, մէկ աջ ու մէկ ձախ աշք, աջ ու ձախ կողմէ : Մեր ձախ կողմն այն է որու վրայ կ'ըզգանք մեր սրտին զարնելը : Ամեն մարդ գիտէ թէ ի՞նչ է ուրիշի մը աջ կամ ձախ կողմը կենաւը :

8. Կենդանիները կը հանդչին ու կը հանանան երբոր յոցնած են : Երբոր քնանան կը պառկին ու աշերը կը զոցեն և քնանալու ատեն հանդիսան կը վայելին : Սակայն՝ կան կենդանիներ, ինչպէս ձին, և ուրիշ շատ տեսակ թռչուններ, որ ոտքի վրայ կը քնանան, և ոմանք ալ, ինչպէս նապաստակը, բայց աչքով կը քնանան : Քնանալու յարմար ժամանակը գիշերն է, երբոր կը մթանայ : Երբեմն քնանալու ատեն կ'երազնիւ : Բայց

Երազները սնուաի և աննշան բաներ են որ մոքէ կ'անցանին : Երբոր կենդանիները չեն քնանար, կ'ըսենք որ ո՞ւ ըստն են :

9. Ամեն կենդանի, մարդէն զատ՝ հում կ'ուտէ իր կերակուրը : Կովի ու ռջակարը դաշտին վրայ կ'արածին խոսով, և գիշակեր անսասուններն են որ իրենց սպաննած կենդանիներուն միմն անմիջապէս կ'ուտեն : Նոյնպէս թռչունները՝ թռչլու ատեն՝ մանր ճճիներ կը ըըռնեն կը կլին : Մարդիկ թարմ բոյսերով կամ հում միսով չեն կընար ապրիլ : Մինակ հասուն պտուղներ կամ հասած բոյսեր կ'ուտեն, առանց մասսուելու և նակ իրենց սովորական կերակուրը կը պատրաստեն, կ'եփեն և կ'ուտեն, երբոր իրենց ճաշակին յարմար է և սննդարար : Մարդիկ կ'ուտեն եփելով կովու միս, հորժու միս, ոչխարի միս, խողի միս, նապասպակի, ճազարի, սագի, հնդկահաւի՝ վառեկի, աղաւնիի միս և ուրիշ ցամաքի կենդանիներու միս : Նոյնպէս մարդ կ'եփէ ու կ'ուտէ ձուկ : Մեր գլխաւոր սնունդը հաց է, որ ցորենի ալիւրէ շնուած է :

10. Երբոր կենդանիներն աղէկ են և ասդիս անդին շրջելով կ'ուտեն ու կը խմն, կ'ըսենք որ +աւարով են : Երբեմն այնքան տկար կ'ըլլան որ չեն կընար ճաշել, կամ սովորական կերակուրն ուտել, այն ատեն քառարուղ են : Մարդիկ շատ դիւրաւ անհանդիսար կ'ըլլան, այլ և այլ ցաւեր կ'ունենան և կը հիւանդանան : Այն ատեն քիշիկները կ'աշխատին հիւանդները բռւմել, պատուիրելով որ իրենց ուտելիքը փօխեն, կը թութիւն ընեն կամ դեղիր առնեն : Պէտք չէ դեղը մերժել երբ որ հիւանդ ենք, վասն զի բժշկուելու մէկ միջոցն ալ դեղն է :

11. Ամենէ սովորական հիւանդութիւններն են ջերմէրը որ շատ անդամ մահ կը պատճառեն : Ստէպ ջերմը յուրանէ յառաջ կուգայ : Երբեմն անոնք որ յուրա առած են դէշ կը հաղան : Երբոր հովի առջև կը նստինք քրտնած՝ հաբբութ կ'ըլլանք, նոյնպէս երբոր թրջած հագուստ կամ խոնաւ մուշախիներ հաղած ենք : Պէտք է զգուշանալ այս բաներէն : Զերմ և որիշ հիւանդութիւններ շատ անդամ մեր վրայ կուգան երբոր կը նստինք սենեկի մը մէջ որու օդն ապակիանած է : Միշտ պէտք է մաքուր օդ ծծել և կարելի եղածին չափ առև ունենալ, առողջութեան համար : Յօդաշան՝ որ շատ նեղութիւն կուտայ՝ մարդու, և երբեմն սրունքը կը կարկանձ, հողէ յատակ ունեցող խոնաւ տուներ բնակելէն յառաջ կուգայ : Խոնաւութիւն, անմարսութիւն և դէշ օդը մեր առողջութեան երեք դշնամիներն են :

12. Կենդանիներ կան որ երկար ժամանակ կ'ապրին, կան այնպիսիներ ալ որ քիչ ժամանակ կ'ապրին : Շուները մինչև տամբ չորս ատան հինդ տարի կ'ապրին, և կան ձիեր ալ որ քսան տարի կեանք ունին : Իսկ պզտիկ թռչունները միայն քանի մը տարի կ'ապրին, և շատ միջամտներ ալ միայն մէկ տարի : Մէկ քանի միջամտներ միայն ժամ մը կ'ապրին : Փոքրիկ ճճիներ արեւուն մէջ քիչ մ'ատեն կը թութուն և ապա զետինը կ'իյնան կը կորսութիւն :

13. Ամեն կենդանի արու կամ էտէ, և իրենց պէս ձագեր ունին : Այս ձագերը կը մեծնան, կը ծերանան և իրենց ձագուկները կարդաւ կը թողուն : Ասոր կ'ըսեն ուրուսացէ սերունդ ապրիլ : Մարդիկ շատ կենդանիներէ աւելի կ'ապրին : Կան այր ու կին որ մինչև ութմուն տարի կ'ապրին, բայց շատեր ալ մասնիցութեան ատեն

կը մեռնին հիւանդութենէ : Երբ կեանքը դադրի՝ մարմինն անկենդան առարկայ մը կը դառնայ :

14. Մարդիկ բանաւոր արարածներ կ'ըսուին, ինչու որ խելք ունին որով իրենց տեսածն ու ըրածը կը դատեն : Ստորին կարգի կենդանիները չեն կարող մարդու պէս մտածել, խօսիլ: Բնաշդումի հետեւլով կ'ընեն ամն բան, և բնազդն ալ տեսակ մ'անմշակ խելք է :

15. Մարդիկ ալ մանկութեամ ժամանակ տղէտ են, վասն զի շատ բաներու նշանակութիւնը չդիտեն : Զդիտեն թէ որչափ մեծ է աշխարհը և ինչ ձեւ ունի : Տղափ կը կարծեն թէ երկիրը սեղանի պէս տափակ է, բայց պիտի սորվին որ դնդակի պէս կլոր է, ինչպէս որ ուրիշ շատ օգտակար բաներ սորվելու են եթէ միշտ դպրոց գան, աշխատին և դասատուին ըստածները ուշագրութեամբ մոփի ընեն :

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Մարդ ինդունէ՞ է . ի՞նչ դարբերական ունի միա վէնդանինէն . ի՞նչ է ընդունէտ, ցեզ, ժողովութ . արդիկ բնական նեւ արտուեստական հաճուուր ունին . ի՞նչ է չենէն : 2. Ո՞ւր է բնակն մարդիկ . ի՞նչ դարբերական ունին : 3. Մարդիկ ինան միակ ապրէլ . ինչու : 4. Ի՞նչ է անուն, ի՞նչ անկանուն : 5. Ազգ մ'արդէլ ողէտ ի՞րացնէ ի՞րացնէ : 6. Ամեն մարդիկ նոյն ժողով ունին և նոյն կորպարանէւ : 7. Ի՞նչ է աջ ու ձախ : 8. Ամեն ինդունէ պատկինծ կը ժնանայ . ի՞նչ է երաշ արեւել : 9. Ամեն ինա քանիկ նոյն պեսակ կերպինը ի՞սուրէ . ի՞նչ է մարդու ինքան : 10. Ի՞նչ է առաղջունին . ի՞նչ առաջուն ունին բժիշկները : 11. Ի՞նչ էն սովորական հիւանդութիւնները . ի՞նչ յառաջ կուրժան . ի՞նչ պէտք է ընել առաջ մաւլու համար . ուսուից կուրժայ յօդացուը : 12. Կենդանիներն որչու ի՞սուրէ :

մէկ ժանի ինդունինինը առարիւն ըսէ : 13. Ի՞նչ է սերունդ . անին ծնունդն ի՞սուրէ . ի՞նչ է մեռնիւր . ի՞նչ է ըլլայ մարմինը : 14. Կենդանիները կը մտածեն . որը բանաւոր կ'ըսուի . ի՞նչ է բնաշդը : 15. Մարդիկ ինդուն իը ծննին . ի՞նչ պէտք է ընել բան սորվելու համար :

### ԴԱՏԱԿՈՒԹԻՒՆ. — ԹՈՅԸ

1. Երբոր ամառը դաշտերը կը պարտիմ, շատ աղոր ու ախորժելի բաներ կը տեսնեմ: Մարդերուն վրայ թարմ խոտեր կը տեսնեմ, որ զարնան ծաղեկներու և մարգարիտներու հետ խառնուած են . կովերն անոնց վրայ կ'արածին : Կը տեսնեմ մեծ ծառեր ու թռիքեր որ ծածկուած են տերեւներով . կը լսեմ թռչուններուն զռարթ երգերը . ոստերուն վրայ կը թռոթուն կամ իրենց պզտիկ բոյներուն մէջ կեցած կը ճռուողեն : Կոյն պէտ կը տեսնեմ արեն որ փառաւոր կերպով կը փայլի և ամեն բանի լոյս ու տաքութիւն կուտայ : Կարելի է որ ոչխարներու հօտեր ալ տեսնեմ որ անուշ գալարին վրայ կը ձարակին, իրենց զառնուկները չորս կողմը կը ցատկրուեն, և հովիներն ալ իրենց շոներով անոնց վրայ կը հսկեն որպէս զի շկորսուին :

2. Բայց ասկից զատ՝ դեռ շատ բաներ կան գուրսերը, ինչպէս տաշրակայրէր և բլունէր : Կան նաև ջուրի հիւանդներ, քերաբներ՝ որ հովտին մէջէն կը հսկին : Մէկ քանի խորունկ տեղեր լինէր կը գտնուին որ ջուրէ լնդարձակ աւազաններ են . ուրիշ տեղեր ալ կը

տեսնուին հանձնաւը ու հարգեց, որ պղտիկ ջրչեղներ  
տնին: Մէկ քանի բարձր բլուրներ որ դաշտին վրայ  
կը տեսնուին լւա կ'ըսուին: Բլրակներուն և լեռներուն  
մէջ ժայռեր կան:

3. Ազարակներէն և գիւղերէն կուղան մեր կերած  
շատ մը բաներ: Նախ՝ դաշտերը իւ հերին ու ականեր  
կը բանան հողագործները տեսակ մը մեքենայով որ իսկ  
կ'ըսուի: Այս խոփը կը քաշեն եղներ կամ ձիեր, առ  
տօքն կապուելով: Քովէն կը քալէ ծախն, որու աշխա-  
տանքը շատ աւող ջարար ու զուարձալի է, ինչու որ  
մշակը բոլոր օրը թարմ օդ կը ծծէ և երբեմն այնքան  
զուարթ կ'ըլլայ որ դաշտին վրայ արօրը քծելու ատեն  
կ'երգէ կամ կը սուլէ:

4. Երբոք դաշտերը հերկուին, ուրիշ մարդ մը որ  
ուրանառ կ'ըսուի՝ շատ մը ցորեն կ'առնէ և կ'ըսկի ցա-  
նել ակօսներուն մէջ իր ձեռքովը: Ասոր կ'ըսեն լոր  
ու ցան ընել, և երբոք այս զործը կը լմնայ ուրիշ  
մարդ մը կուղայ դափանով մը, որ վարի կողմը երկա-  
թէ ակուսներ ունեցող տափակ զործիք մ'է, և զայն  
ձիու մը կապելով կը քշէ դաշտին վրայ, որպէս զի  
ակօսները գոյէ և սերմը ծածկէ հոռլին տակ:

5. Այսպէս սերմը հողին տակ գոյուելէն ետեւ՝ ան-  
ձրե կը վաղի, սերմը կը թրջէ և հողը զայն Ճնշելով  
կը թուլացնէ: Յեայ սերմը կ'ընձիւղի: Նախ ամեն  
մէկ սերմ պղտիկ ծիլ մ'ունի, բայց արևուն ջերմու-  
թենէ ընձիւղը կը մեծնայ և կանաչ ցողունի ձեռվ կը  
բուռնի: Ապա աւելի կ'աճի, կատարը ցորենի հասի մը  
կ'ունենայ, որ արեէն կը հասուննայ և կը գեղինի: Երբ  
որ կտրելու ժամանակը դայ ցորենը կը հայեն մանվաղով:  
Գարնան ժամանակ ցորենը կը ցանեն, որ ամառը կ'աճի,

երբոք արել շատ տաք է, իսկ աշնան կը հնձեն: Աշ-  
նան՝ ծառերուն տերևներն ալ կ'ըսկին թափիլ, և չմեռն  
այնքան ցուրտ է որ շատ բան չբուժնիր: Չմոր չեւն  
կը վաղի և հողը կը ծածկէ ու չթողուր որ սառի:

6. Աշնան մէջ հունձի օրերն ախորժելի ու երջա-  
նիկ օրեր են: Հնձողները գաշտերը կ'ելնեն ցորենը  
կտրելու: ԱՌչափ գործունեայ և զուարթ են. իրենց  
մանդաղվը կը ծոփն և հասկերը կը կտրեն. ետեւէն  
մարդ մը կուղայ և որաները կը կապէ: Այս արցակներն  
ետքէն սայլերու վրայ կը դնեն և աղարակին հալրայն  
կը տանին:

7. Գարին, վարսակը և հաճարը ցորենի տեսակէն  
են և նոյն կերպով կը հնձուին: Երբոք ցորենը կալո-  
րայն կը տանին զայն կը ծեծեն որ խարը ցորենէն դա-  
տուի: Վերջը ցորենը կ'առնեն ալօրին կը տանին որ  
ալիւր ընեն. ալիւրէն ալ հաց կը շնեն ուտելու հա-  
մար:

8. Ցորենէն զատ՝ ուրիշ շատ բաներ կը բուռնին  
դաշտերն և մարդուն օդտակար են: Ինչպէս շեպանախն-  
յորն, որ կարգաւ կը տնկեն արաերուն մէջ և երբոք  
մեծնան դետարդոյս կետնախնադրներն արմատէն կը հա-  
նեն: Ուշու ու բակլայ և ուրիշ ընդեղէն արտերու ու  
պարտէղներու մէջ կը ցանեն, որ պատիճներու մէջ  
ցողունին կատարն ու երկու կողմերը կը բուռնին: Պա-  
տիճներն այն պատեաններն են որոց մէջ բակլան ու ու-  
լուն կարդ կարդ կ'երեկին:

9. Պարունակներ են ինձորը, տանձը, կեռասն ու սա-  
լորն որ պարտէղի մէջ մանկուած ծառերու վրայ կը  
հասնին: Նարինջն ու խաղողն ալ պտուղներ են, որ  
տաք երկիրներ կ'աճին: Իսկ հաղարջն ու մորն մանր

միրզեր են որ թուփերու վրայ կը բումին։ Հաղարջին  
թուփերն սուր փուշեր ունին սատերուն վրայ։

10. Այս ամեն բաներն որ երկրի վրայ կը բումին,  
թէ արտերու, թէ պարտէ զներու մէջ, թէ լշակներու  
մօտ բայց կ'ըսուին։ Բոյսերը նարմ ու կնդանի են երբ  
որ կ'աճին, գրած են երբոր կը թումին և չեն մեծ-  
նար։ Բայց բոյսերը չեն կրնար տեղէ տեղ շարժիլ  
կենդանիներուն պէս։ Ուր որ աճին այն տեղ կը մնան։  
Սակայն երբոր ծաղկիները թաղաներու մէջ տնկենք,  
այն ատեն կրնանք այդ թաղաները մեր ուզած տեղը  
դնել, երբեմն սենեակներու մէջ, երբեմն պատուհան-  
ներու մէջ, որպէս զի արեւոն լոյսն անմնց վրայ զարնէ։

11. Բոյսերը կ'ապրին հողէն հիւթ ծծելով արմատ-  
ներուն միջոցաւ։ Հիւթը արմատէն կ'անցնի բունը կը  
հասնի և անկից բոլոր ձրւերուն վրայ կը տարածուի։  
Այս խոնաւ հիւթէն զատ՝ բոյսերն օդէն և արեւէն պէտք  
ունին որ սճին։ Երբոր ձմեռը դայ և ցուրտ հովը փչէ,  
հիւթը բունէն վար կ'իջնէ կամ տունկին կոճը մեծ-  
ցընելու կ'օդնէ, մինչեւ տերեները կը թափին և մերկ  
կը մնան մինչև գարուն, որու ջերմութեամբը նորէն  
տունկերը կը կենդանանան և նոր տերեներու բոլղոջ-  
ներ կ'արձակին։ Բայց կան տունկեր որոց աերեները  
ձմեռն ալ չեն չորնար և չեն թափիր և ասոնք կ'ըսուին  
հարաւալու։ Կան բոյսեր որ սերմ կը թողուն և անով  
ուրիշ նոր բոյսեր կը ծլին։ Խնչպէս կենդանիները նոր  
սերունդներ ունին, նոյնպէս ունին և բոյսերը։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Երբոր ամառն արտուրէւ իւ պար-  
ագին չեւ ուենես. ուրիշ. այս բաներուն ո՞վ իւնդան-  
նիւն հուրուց. հովիւն չեւ չեւ։ 2. Երբոր ամելէ բուր-

ուրն երթանք ուրիշ չեւ բաներ չեւ ապէն. չեւ է  
լուկ, լեւ։ 3. Երբերը եղի ուրելիւ կուրուն իւնդիւն։  
չեւ է հուկին էրքը։ 4. Ցանոն չեւ չեւ։ չեւ կը ցո-  
նի. ուրիշ չեւ չեւ։ 5. Անյուշ չեւ գուրու ունի։  
ուրեմ չեւ չեւ։ ցրենին շնչելու եթեալու համար ինչ-  
է. ցրենին երբ իւ ունեն. երբ չ'անի. երբ կը հըն-  
նին. չնայեն կ'երւին հուրերը յըրու ժամանակ. ինչու հա-  
սուր։ 6. Ի՞նչպէտ իւ հույն ցրեն։ 7. Ուրեմ չեւ որդուի+  
իւն. չնայեն կը շատին ցրեն իւրեւն. հայն ինչու կը շե-  
նակ. 8. Դուշերու գշ ուրեմ չեւ չեւ։ կը բառունին. չեւ  
է պատրին։ 9. Անառան մէկ ունի պատրին։ 10. Ի՞նչու-  
նան կուրուն այն բաներուն ու երիւն վրայ կ'անին. կ'ը նորը  
— իւնդունին։ 11. Բոյսերն ամելու համար  
չեւ բաներու ուրիշ ունեն. երբ կը մունին. բուրունին կը  
շընուն. չեւնին հշուտուր բոյսերն. առան ուրունդ ունին։

## ՓԱ.68.—ՆՎ.Ռ.

1. Շատ տեսակ փայտեր կան։ ումանք կոշտ են, ո-  
մանք ընտիր։ Երբոր ծառերը շատ տարիներ ապրելով  
մեծնան ու հասուննան, այն ատեն մարդիկ զանոնք ար-  
մատէն կը կտրեն, ձրւերը կը քշտեն և բուներէն կամ  
կոճկերէն փայտ կամ ատաղձ կը շինեն։ Վերջը՝ կան  
մարդիկ որ փայտը սղոցներով կը կտրեն, երկայն կտրու-  
ներ ու գերաններ կը հանեն և ապա աթոռներ, սե-  
զաններ, տուներ, սայլեր և ուրիշ շատ բաներ կը շի-  
նեն։ Ասոնք կ'ըսուին արտոն հարցու։ Մեծահասակ ծա-

ուր են եղեխնը, ուռին, թեղօջն, ոփին, նօձին, աօսին։ Կահենին շատ ընտիր փայտ մ'է որ օտար երկիրներէ կը բերեն և անոլ աղոր սեղաններ, աթոռներ և ուրիշ կարասիներ կը շինեն։

2. Ծառերն ալ շատ համով պտուղներ կուտան։ Ծառերուն տեսքը շատ զմայլելի է և ամառուան տաքին զովարար հովանի ունին։ Երբեմն մինակ պարտէզներու և դաշտերու մէջ կ'աճին, երբեմն ալ խումբ խումբ կը բունին արտերու և անդառներու մէջ։ Ծառերն ալ միւս բոյսերուն պէս կ'աճին, հիւթն իրենց արմատէն վեր ենելով կոճղին և ասպա ճիւղերուն կը հանին։ Ամեն ծառ կեղեղով պատած է. այս կեղեղը կը պահպանէ ծառը և մեծնալու կ'օգնէ։ Եթէ ծառի մը կեղեղը մլասուի՝ ծառը կը տկարանայ և քիչ ատենէն կը չորսայ։ Ուստի պէտք չէ որ տղաք ծառերուն կեղեները քերթեն ու կտրեն, վասն զի անոնց մեծ մլաս կը պատճառեն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Գանի՞ ուսուկ դայր կա. ի՞նչո՞ւ է և միւեն առարկը. ի՞նչ է դուրս ծուկ. անուսունէ տանի մը ժամանէր. ի՞նչ է կոճղին։ 2. Ո՞ւսից ի՞ն տաղին+ պարուզները. մո՞ր կը բառանին. ի՞նչո՞ւ է կ'աճին. շառնի ի՞նչն ի՞նչ օշտուր սոնի։

—

Ա. ՆԱԽՆԴԱՍՆ Ա.Ա.ԱՐԿԱՍ.ՆԵՐ — քըրեր, ԹԵՐԹՎԱՐ, ՔԵՐԵԾՈՒԽ, ԿԱՏ, ԱՂԻՒՄ, ԱՊԱԿԻ, ՄԵՏԱՂՆԵՐ.

1. Փողոցներուն սալայատակները +արեւով կը շինուին. նոյնպէս շատ տուներ ու պատեր քարերով շինուած հնա-

շատ քարեր գետնէն կը հանուին փորելով, կամ ժայշներ ու լեռներ կտրելով։ Քարեր խորտակելու համար վառօդ ու տապար կը զործածեն և ապա այլ և այլ ձևեր տալու համար կը տաշեն։ Այս տեղն ուր քարեր կը կտրեն կամ փորելով կը հանեն կ'ըսուի գործականութ։

2. Կան քարեր որ կարծր և հաստատուն են, կան նաև քարեր որ կակուղ ու գիւրաբեկ են։ Կարծր ու պինդ քարերն շէնքի աւելի յարմար են, վասն զի աւելի երկար կը տեեն։ Կակուղ քարերը ջուրէն կը մաշին և անոնց մասերն աւազ կը դառնան։ Ծաղկեցրը աղոր փայլաւն աւազ կայ որ ժայռերէն կը փշրի երբ որ ալիքներն անոնց կը զարնեն։ Ծատ քարեր դժմահար են, այսինքն այնքան թանձր են որ անոնց մէջէն բան չերկիր։ Բայց կան քանի մը քարեր ալ որ նախացին են ու շողուն, և անոնց մէջէն կրնանք տեսնել որպէս թէ ապակի ըլլային։ Թէրթաւուրը տեսակ մը կապոյտ քար է, որ կաւերու մէջ կը դտնուի և բարակ բարակ կտրելով տուներու տանիքին վրայ կը դնեն և Խոկ երբ որ թերթաւարը յղկուի դպրոցի տղոց համար դժմահար կ'ըլլայ։

3. Քարածուիլ սկ նիւթ մ'է, որ սովորաբար երկրին խորերը կը դտնուի և զայն կը հանեն գետնափոր փոսեր կամ ականներ բանալով։ Այս ականներուն յատակը հաները կան, ուսկից քարածուիլ կը փորեն և մեքենայով վեր կը հանեն։ Քարածուիլ մեծ մասով բուսային նիւթերէ եղած է, որոց վրայ հող ընկնելով ճնշուած և երկար ատեն գետնին տակը մնացած է։

4. Քարածուիլ շատ տեղ կը զործածուի իրբեւ այնէւէ, որով մարդիկ կերակուր կ'եփեն, կը տաքնան, և ուրիշ բաներու համար կը զործածեն։ Ամենէ մեծ տ-

Ֆուխի Հանքերը Անկլոյ մէջ կը գտնուին : Քարածուա  
խէն զատ՝ մարդիկ փայտածուի ու փայտ կը դործածեն :

5. Կառը կակուղ նիւթ մ'է որ երկրի մէջ կը գըտ-  
նուի . անով կուժ , բարջ , պնակ և ուրիշ բաներ կը  
շնուին : Բայց այս ամանները գործածելու համար նախ  
հնոցի մէջ կ'եփեն կ'ապակին որպէս զի յղկեն : Երբոր  
լմնան կաւելնաւ կը կոչուին . յախտակը տեսակ մ'ըն-  
տիր կաւեղէն է , որ կաւէ ու դայլախազէ կը շնուի :  
Զենք կարող կաւեղէն ամանի մէջէն տեսնել , ինչպէս  
որ կը տեսնենք ապակին մէջէն , ինչու որ դիմահար  
է : Շատ առարկաներ կամ նիւթեր դիմահար են :

6. Աղբանէն ալ կաւէ կը շնուին : Կաւը աղիսի  
ձեռվ կը կտրեն և մեծ հնոցի մը մէջ կ'այբեն : Երբոր  
աղիսները կը պաղին՝ տուներ և պատեր շնելու հա-  
մար կը տանին կը դործածեն : Աղիսը քարին պէս  
պինդ չէ , բայց քար չգտնուած տեղեր շատ կը գործ-  
ածուի : Աղիսներն ալ որով տուներու պշրակները կը  
ծածկեն կաւէ է :

7. Առաջն պայծառ , ողորկ նիւթ մ'է : Աւազ ու  
աւշան (սոսո) կրակով կը հալեցնեն և ապակի կը շն-  
նեն : Երբոր տաք է , ապակին կակուղ կ'ըլայ և դիւ-  
րաւ տափակ թերթի ձեւ մը կ'առնէ : Իսկ երբոր այդ  
թերթը պաղի , ապակի կը դառնայ : Պատուհաններու  
համար մանր կտրուեր կը կտրեն : Ապակին աղւոր թափ-  
անցիկ նիւթ մ'է , դիւրաբեկ կամ դիւրաւ կտրուող :  
Պիլօրն ալ ապակիի ընտիր տեսակն է , որով բլշակ ,  
մանր բաժակներ և ուրիշ ամաններ կը շնեն ,

8. Շատ բաներ կան որ Գրտուէ շնուած են . տե-  
սակ տեսակ մետաղ կայ : Մետաղները զետնին տակէն  
կը փորեն կը հանեն , մայուերու մէջ կը դտնուին և

առվորաբար հողով . և մայուուտ նիւթերով խառնուած-  
են : Այս ատեն ասոնք հանաժուր կ'ըսուին : Հանածոյքը  
հնոցի մէջ կը դնեն և մետաղը մաքուր գուրս կ'ելնէ :  
Երբոր պաղի , դործածելու յարմար է : Մետաղները  
պինդ , ծանր են և փայլութիւն ունին : Անոնցմէ մէկ  
քանին կաւելէ են , այսինքն երբոր կուանով ծեծուին կը  
բարակնան առանց կոտրուելու : Գլխաւոր մետաղներն  
են , ոսկի , արծաթ , երկաթ , պղինձ , կապար , անագ  
և ղինէ :

9. Ոսկն գեղին մետաղ մ'է , քիչ կը գտնուի ու-  
սուղ է : Բոլոր մետաղներէն աւելի արժեք ունի : Ա-  
նով դրամ կը շնեն , նոյնպէս մատնի և ուրիշ զարդեր :  
Արծանը ճերմակ , աղւոր մետաղ մ'է . ասով ալ զրամ  
կը շնեն , բայց ոսկիին չափ ոսուղ չէ : Մետաղներուն  
մէջ ամենէն օգտակարը երկան է : Անով կը շնուին  
զամեր , փականք , ծխնի , կացին , մուրճ , ուռն և ու-  
թիշ շատ զործիքներ : Նոյնպէս ամաններ , սաներ և  
խոհանոցի համար ուրիշ անօթներ երկաթէ կը շնուին :  
Երբոր երկաթը շատ կարծր ընեն ուղղված կ'ըսուի , ու-  
րով գանակ , ասեղ , սուր և ուրիշ բաներ կը շնեն :  
Պինձն թուի է , որով տասնոյ գուաննոյ և զուրոշ-  
նոց դրամ կը կտրեն , նոյնպէս լայն թերթեր կը շնեն  
այլ և այլ բաներու զործածելու համար : Կապարը քիչ  
մը կապոյտ է և միւս մետաղներէն աւելի թեթև : Ա-  
նով խողովակներ կը շնեն և զանազան բաներու կը  
դործածեն : Անաշը բայց զոյն ունի և կապարէն աւելի  
պինդ է : Խոհանոցի անօթներն անով կը ծեփեն որպէս  
զի չմանգոտին : Զիւկն լայն թերթեր կը կտրեն ոչ  
միայն տանիքները ծածկելու այլ ուրիշ բաներու զործ-  
ածելու համար :

10. Երբոր մարդիկ երկու մետաղ հալեցընելով իրասու հետ խառնեն ուրիշ մետաղ մը կը շինեն։ Այս տեսակի մետաղները խառնութե՛ կ'ըսուին։ Արոյը պայծառ դեղին մետաղ մ'է՝ պղինձով ու զինկով խառնուած։ Շատ զարդեր կարասիներու վրայ արօյրէ շինուած են։ Զանգականերն ալ պղինձի ու անաղի խառնուրդէ շինուած են։ Կան զանգակներ (հնակ) որ փոքր են, տուներու մէջ կը կախեն թելերով կամ սեղանի վրայ կը դնեն, որ պէտք եղած ատեն ծառաները կանչեն։ Կան զանգակներ ալ որ խոշոր են և մարդու չափ մեծ են։ Այս խոշոր զանգակներն եկեղեցիներու զանգակատուններէն կը կախեն և զարնելով ժողովուրդը եկեղեցի կը հրաւիրեն։ Դալրոցի տղաքը գասարանները դրկելու համար ալ զանգակ կը զարնեն։ Մանր զանգակները բարակ սուր ձայն մ'ունին, իսկ մեծերը բարձր ու խորունկ հնչին մը կը հանեն որ շատ հեռուէն կը լսուի\*։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Քարերն ի՞նչ բանէքո՞ւ համար ի՞ւ ժողովածո՞ւն։ մասից և ի՞նչո՞ւ ի՞ւ հանէն։ 2. Քարերը համարո՞ւն են։ առաջն ի՞նչ է։ մո՞ւ ի՞ւ ժողովածո՞ւ դիմո՞ւն ու նախանդի բարեւելը։ ժրաւո՞ւն ի՞նչ է։ 3. Ո՞ւսի՞ւ ի՞ւ հանէն ժարովածո՞ւն։ ի՞նչ է։ 4. Ի՞նչ բանի ի՞ւ ժողովածո՞ւ։ ուրեւ ի՞նչ այրէնէ կայ։ 5. Կո՞ւճ, պի՞ու, ըսու, ի՞նչո՞ւ և ի՞նչո՞ւ ի՞ւ շինեն։ յանձնապահն ի՞նչ է։ 6. Ուրեւ ի՞նչ բա-

(\*Այս դասերուն մէջ միայն գլխաւոր անկենդան առարկաներ յիւ տուած են։ Գրասառուն կմայ ուրիշ բնական ու առուեսական առարկաներ ցայց տալ աղջ և զանմաք բացատրեւ, իրեւ մասյին ուրիշութիւն։ Ուստի կարեր է որ ամեն ծաղկոց ու նախակրթակը միշտ ութիւն։ Այլ և այլ առարկացից հաւաքածոյ մ'ունենայ մանը աղջ կը միշտ անկան և զւարցութեան համար։)

նէր ի՞ւ շինուածն իսաւէն։ ի՞նչո՞ւ ի՞ւ ծառայէն։ 7. Ի՞նչ է աղակին։ ի՞նչո՞ւ շինուած է։ դիմոցինեն է։ ի՞նչ է պէտքը։ 8. Մերապահներն ուսկից ի՞ւ հանէն։ եւսծ ուերև ի՞նչ ի՞ւ շունչ։ ի՞նչ յարկութիւն անէն։ որո՞նդ էն չլիստուները։ 9. Ուր մերապահ հալուսագիւր ու սուլ է։ ի՞նչ ի՞ւ շինուած։ հաղու արծանիւր էր երկունը ուղիւնը կապահը առաջը։ անչը շինուած։ 10. Ի՞նչ մերապ է արոյը և լուսը ի՞նչ ի՞ւ շինուած։ շնչակնեն ի՞նչ բանի ի՞ւ ծառայէն։

### ԶՈՒՐ — ՈՎԱԿԱՍՆՈՍ — ՆԱԽԵՐ — ԴԵՏԵՐ

1. Զուրը հեղուկ մարմին մ'է։ Առոփ պէս կը հասի, և մէկ ամանէ ուրիշ աման կը թափուի։ Աշխարհիս մեծ մասը ջրով պատած է, որ ընդարձակ ծովեր են և Ովկիանոս կ'ըսուին։ Ծովուն ջուրն աղի է և այնքան զան է որ չխմուիր, երբոր աղի ջուրը կամ ալ ջուրը խաշենք երկար ժամանակ և հեղուկը ցնդելով շողի ըլլայ, նիւթ մը կը մնայ որ առ կ'ըսուի, և կերակուորի համար կը գործածուի։

2. Ծովը բնաւ հանգարտութիւն չունի։ Ալիքները կը շարժին գէպ 'ի ցամաք վեց ժամ և ապա ետ կը դառնան վեց ժամու չափ։ Զուրերուն զան ու երթալը կ'ըսուի մակնիացութիւն ու ուղարկութիւն։ Քսան ու չորս ժամուան մէջ երկու անգամ ջուրերու հոսանք կը պատահի, այնպէս որ հոսանքին բարձրութիւնն ամեն յաջորդ օր քիչ մ'ուշ կը պատահի։ Կը կարծուի որ ծավու մակրնթացութիւնն ու տեղատութիւնը լուսնի միջոցաւ յառաջ կուգայ։ Ավեսն երկու անգամ,

Երբոր լուսինը նոր է , նոյնպէս երբոր լեցուն է , մակը ընթացութիւնը սաստիկ կ'ըլւայ : Ծովուն ծայրը գըտանուած ցահաքը կ'ըսուի եւր կամ ա՞ս : Ծովեզորին մէկ քանի տեղուանքը բարակ աւաղ կայ , մէկ քանի տեղուանքն ալ ժայռուտ են :

3. Կաւերը ծովու վրայ կը սահին , և տեղեւ տեղ կ'երթան երբոր առադաստները հովով կը լեցուին , և դեկավարը ղանճնք կը կառավարէ ուեկով որ : Նաւուն մէջի գործաւորները նաւուագի կ'ըսուին , որ նաւուն մէջ այլ և այլ գործեր կ'ընեն : Նաւը հրամայողը նաւառնեաց կ'ըսուի : Սոսկալի բան մ'է երբոր ծովու վրայ նաւը փոթորկի հանդիպի և ժայռերու կամ աւաղակոյտերու ղարնուի . այն ատեն նաւու հը բեկէ (նաւարեկութիւն) և երբեմն նաւորդներն ալ կը խղղուին :

4. Շաբէնաւներն ալ տեսակ մը նաւեր են որ առաջաստով չեն նաւարիեր և հովուն գէմ ալ կրնան քաւել . վասն զի երկու կողմէն անիւներ ունին և այս աշնիները շողեշրժ մեքենաներու միջոցաւ կը շարժին : Կան նաև շողենաւներ որ մեծ պտուտակով կը շարժին , որ բոլորակի շուտ շուտ կը դառնայ : Երբ նաւ մը տեղէ մ'ուրիշ տեղ կ'երթայ իւ նաւարէէ , ի՞ուլուրէ :

6. Տարին յիսուն երկու շաբթ կամ 365 օր է : Տարուան մէջ տասներկու ամիս կայ — յունվար , փետրվար , մարտ , ապրիլ , մայիս , յունիս , յուլիս , օգոստոս , սեպտեմբեր , հոկտեմբեր , նոյեմբեր , դեկտեմբեր : Յունվարի առաջին օրը տարուան առաջին օրն է կամ Ապրիլ է : Բոլոր ամիսները նոյն թուով օրեր չունին : Կան օր 30 օր են , կան օր 31 օր : Երեսուն օր ունին ապրիլ , յունիս , սեպտեմբեր և նոյեմբեր , իսկ միւսներն 31 . փետրվար միայն 28 օր է , բայց չորս տարին անզամ մը փետրուարը 29 օր կ'ունենայ , և այս տարին նահանջ դրբէ կ'ըսուի :

7. Տարին չորս եղանակ ունի — գարուն , ամառ , աշուն և ձմեռ — ամեն մէկն երեք ամիս կը տեէ : Սովորաբար դարնան ամիսներն են , փետրուար , մարտ և ապրիլ . ամառուան ամիսներն են , մայիս , յունիս և յուլիս . աշնան ամիսներն են , օգոստոս , սեպտեմբեր և հոկտեմբեր . ձմեռուան ամիսներն են , նոյեմբեր , դեկտեմբեր և յունվար :

8. Տարի մ'անցնելէն ետև , ուրիշ տարի մը կ'ըսուի և այսպէս հետզետէ կը շարունակուի : Քրիստոնեայք տարիները կը համրեն Քրիստոսի ծնունդէն , որ կ'ըսուի Քրիստոսի նուուկան : Ամբողջ Տարիւր տարին մէկ դրէ է : Արդէն տասնութ գարը լմնցած է , և հիմա մենք կը զանուինք դառնելիներէ գարուն մէջ :

այսպէս կը գրենք , 1850 , կամ 1881 , կ'ուղենք ըսել որ այսչափ տարի անցած է Քրիստոսի ծնելէն 'ի վեր :

9. Խնչ դէպք որ պատահի անոր Ճշգրիտ ժամանակ կը կ'ըսուի նուուկան : Երբոր նամակ մը գրենք , նախ կը նշանակենք մեր գտնուած քաղքին անունը , տասուն անունն ու թիւը , և տարին : Այսպէս , Իշեր , 5 յունվար 1881 կը ցուցընէ որ գրուածքը Խզմիրի մէջ եղած է յունվարի 5ին և 1881 թուականին : Երբեմն տարուան թուականին առջև Յ. Տ. դլխաղբերը կը դրսին , որ ըսել է Յամ Տեւուն :

ՀԱՐՑՄՈՒՆՔ . — 1. Ե՞րբ է առաւուր գէշերը . օրը : 2. Օրը +ո՞նք մաս կը բաժնուի . Ե՞րբ է նախաճաշէն , ճաշչանք մասնէն ժամերը . մասն Ե՞րբ է ըլլույ . 3. Օրը +ո՞նք ժամը . ժամը +ո՞նք քայլէնան . քայլէնանը +ո՞նք ըսուել . ինչուն էն համբէն+ օրուան ժամերը . Ե՞րբ կեսօր է . Ե՞րբ կետ գէշեր : 4. Կորմոր է օրուան ժամերը լսէնելը . ինչւ է ժամանակի լսէնել . բացարկէ ժամացոյցը . ինչւ բանի էլ ժամանէլ : 5. Ժամանակն առիշէ բացանուանէ ունիք . +ո՞նք օր է շաբանը . ըսէ օրերը : 6. Գունէ շաբան մէկ դրբէ է . դրբէն +ո՞նք օր է . +ո՞նք ամիս կայ դարբանան մէջ . ըսէ . ինչւ է Կաղանդը . ո՞ր ամիսներն 30 օր ունին . Ե՞րբ գետրվար 29 օր է ըլլույ : 7. Տարին +ո՞նք եղանակ ունի . համբէն . ամիս եղանակ +ո՞նք ամիս է . այսին ո՞ր եղանակն մէջն է . դիմութերէ . աւոգութերէ . ինչւ : 8. Ի՞նչւ է նուուկան . մէն+ ո՞ր նուուկանը էլ դուծածէն+ . ո՞ր ժամանակն էլ ըսէնի . հարիւր դարին ինչւ է ըսուէ . ո՞ր դարուն մէջն են+ : 9. Աստմանէ կամ Քրիստոնէի ո՞ր նուուկան էնչւն էլ դրբուէ :

1. Ամեն մարդ քիչ շատ պիտոյք ունի : Գլխաւոր պիտոյքն են հաղուստ, ուաելիք, բնակարան : Ասոնք հոգալու համար պէաք է որ մարդ աշխատի : Ավառ դանեւ կալուածքի հիմն է . աշխատանքով է որ մարդ այլ և այլ բաներ կ'ըստանայ : Ծուլութիւնը բան մը առաջ չբերեր : Ինչ որ կը տեսնենք, տուն, մշակուած արտեր, ցորեն, հաց, զիեստ, դիբք, աշխատանքի արտեր : Ամեն են և բոլոր մարդիկ աղքատ ու վայրենի պիտի մայիսն եթէ աշխատութիւն չըլլար :

2. Կան մարդիկ որ հարուստ են, տուներ և ուրիշ շատ բաներ ունին, թէպէտ ումանք չեն աշխատած սյդ բաները վաստըկելու համար, հապա իրենց նախնիքներէն ժառանգած են, կան մարդիկ ալ որ չքաւոր են, իրենց օրական աշխատանքով ապրուստ կը ճարեն : Բայց հարուստն ալ աղքատ կ'ըլլայ թէ որ չաշխատի : Աւել աղէկ է որ մարդ իր ճակախն քրտինքովն իր պիտոյքը հոգայ քան թէ յսոր գնելով ուրիշի կամ ժառանգ գութեան վրայ որ կրնայ կորսուիլ : Ուստի տղայք ալ պարտաւոր են որ իրենց աշխատանքին վստահին, որ պէտ զի իրենց պէտք եղածը հոգան, երբոր մեծան :

3. Երբոր մարդ մ'իր աշխատանքով բան մը կը հանէ, կը շինէ կամ կ'արտագրէ, այդ բանն իրն է և մէկն իրաւունք չունի զայն ձեռքէն առնելու : Ինչպէս, երբոր տղայ մը կաւ առնէ և անով գնդակի մը շինէ խաելու համար, ուրիշ տղայ մ'իրաւունք չունի զայն զալու շորթելու կամ յափշակելու : Գնդակիր՝ զայն շիրմէ շորթելու կամ յափշակելու :

Նոր տղան կալուածքն է : Կան տղաք որ վառեակներ կը սիրեն : Եթէ տղայ մը զոյդ մը վառեակ ունենայ, անոնք իր ստացուածքն են, և եթէ անոնց համար ու տելիք առնէ, կերակրէ, հաւկիթներ ստանայ և այդ հաւկիթներէն ալ ուրիշ ծիչէներ ելնեն, այդ ծիկծիկներն ալ իր ստացուածքն են : Անշուշտ կը բարկանայ եթէ չար տղայ մ'ենէ իր վառեակները ձեռքէն առնել ուղէ : Այդ չար տղան պիտի ըսէ . «Այդ վառեակներն իմ ստացուածքն են, իմն են . դու անոնց վրայ աշխատութիւն չունիս, ուստի քուկդ չեն :» Բայց եթէ չար տղան վառեակները նորէն յափշտակէ այն ատեն անոնց տէրը դատաւորին պիտի երթայ, չար տղան գէմ պիտի գանգատի և չար տղան պիտի պատճուի :

4. Ինչպէս որ տղան իր գնդակը կամ վառեակները կը պահպանէ, նոյնպէս մարդիկ իրենց կալուածքը կը պահէն : Ամեն մարդ իրաւունք ունի իր ստացուածքը պաշտպանել, վասն զի երբոր չքաւոր մարդ մը գիտնայ որ աշխատելով կրնայ ստացուածքի տէր ըլլալ և թէ ուրիշ մը չիրնար իր ձեռքէն յափշտակելու, այն ատեն աւելի սրտով կ'աշխատի որ ունեցածն աւելցընէ : Իսկ թէ որ գիտնայ որ իր աշխատութեան պտուղն ուրիշ մէկը պիտի առնէ ուտէ, այն ատեն բնաւ չպիտի աշխատի, իր բոլոր օրերը ծուլութեամբ պիտի անցընէ և շատ աղքատ վիճակի մէջ պիտի ապրի,

5. Կան մարդիկ որ տուներ ու հողեր ունին և կ'ըստին հողագործ կամ կալուածքագործ բայց որովհետեւ այս մարդիկ չեն կրնար միշտ գործածել իրենց հողերն ու տուները, ուրիշներու վարչու կուտան : Ասոնք ալ ժամանակի մը համար հասուցն կամ վարչու և Սովորաբար հողի հասոյթը կամ ան վարձը տարուէ

տարի կամ վեց ամիսն անդամ մը կը վճարոի : Կան վարձուորներ ալ որ ամսէ ամիս կամ շաբթէ շաբաթ տան վարձք կը վճարեն ,

6. Երբոր մէկն ուրիշին եղած բանն առնել ուզէ՝ պէտք է որ նախ հրաման ինտրէ կամ պէտք է որ զայն ծախու առնէ : Բնաւ պէտք չէ որ այն բանը ժաղանէ կամ բանէ կամ իտրիտունէմբ ձեռք ձգէ , վասն զի այն ատեն այդ բանը դողցած կ'ըլլայ և ինքն ալ հու կ'ըսուի : Աստուած պատուիրեց . մի զողանար , և ամեն մարդ այս պատուէրը պարաւոր է պահել : Կան տղաք որ կարծեն որ եթէ կորսուած բան մը գործնէն կրնան այդ բանը պահել : Բայց այդ զանուած բանն կորսընցնողին ստացուածքն է և պէտք է շուտ մ'անոր դարձնել առանց վարձատրութեան , եթէ զմնողը պահէ զողութիւն ըրած կ'ըլլայ :

7. Կան բաներ որ ամեն մարդու ստացուածքն են . բնութիւնը տուած է մեզի . օդն որ կը ծծենք , արևոն լոյն որ մեր վրայ կը փայլի , ջուրն որ կը խմնք և ուրիշ բաներ բնականապէս ձրի կը վայելենք : Ուրիշ բնական բաներ ալ կան որ մեր աշխատութեամբ օգտակար կ'ըլլան մեզի :

ՀԱՐՑՄՈՒՆՔ . — 1. Ի՞նչ է ուժույն . սուսցուածք + է ուժ ըլլալու համար ի՞նչ պէտք է . ծոյն ի՞նչ է շահէ . Եթ ուն բոլոր բաներն ի՞նչ արդիւնքն էն : 2. Ամեն մարդու չի-թական վիճակն նշյան է . ի՞նչն հարուստներ ի՞նն . մարդ ի՞նչ նշնէ վեց դնելու և յայռ . հարուստ մարդու աղջն պէտք է աշխատք : 3. Ի՞նչ է բոլոր մարդին բանն ու ուժ ի՞ւլլան . ենէ ժեղագի ու շինեւ , այդ որո՞ն սուսցուածքը է ի՞ւլլայ . ուրիշն այսուոր ուժուածքն էնին ի՞նչ է : 4.

Ենէ աշխատանիք ուժուածքն ուրիշը յակշատիչ ի՞նչ էնէն . Ենէ աշխատանիւ շատրւէր աշխարհ ի՞նչ կը դարձնար : 5. Հու լուստրէր ի՞նչ է . հասոյնի . Հույս + 6. Ի՞նչ բան է ժողովրիւն . Ենէ գետնէն բան ու դրանեւ իրանա պահել . ի՞նչն : 7. Ի՞նչ բան էր կը վայելենք . դայտը բնական դուրք + մ'է . աշխատանիւածք ի՞նչով օգտակար է ըլլայ :

### ԴՆԵԼ — ԾԱԽԵԼ — ԴՐԱՄ

1. Այն մարդիկ որ ապրանք ունին՝ ուրիշներուն չը ծափէն երբոր ասոնք ուղին ժնել : Մարդիկ դրամով կ'առանեն բան մը կամ կը ծախուն : Եթէ գրամ չըլլար , այն տանի սիփի ստիպուէինք պարանք մը ուրիշ ապրանքի հետ փոխել և այս բանս շատ գժուարութիւններ պիտի պատճառէր :

2. Դրամը մետաղեայ պղափիկ կտորներ են , որով սովոր կը կոխեն : Ստակի համար երեք տեսակ մետաղ կը զործածեն մարդիկ . ասոնք են ոսկի , արծաթ և պղինձ : Այս մետաղները ստակ կտրելու համար ընտրուած են , ինչու որ հազուադիւտ ու սուղ են : Ուսկին ու արծաթը բնակագին մետաղ կ'ըսուին , ինչու որ ամենէ թանկ և քիչ են :

3. Ամեն մարդ չկրնար ստակ կտրել . միայն թագաւորը կամ կառավարութիւն մ'իրաւոնք ունի ստակ կոխելու : Բայց թագաւորն իր ձեռօք չկտրեր ստակը . ինք սլաշտօնաւորներ ունի որ դրամնեոյի մէջ կ'աշխատին և

ստակ կը կրիսեն : Թագաւորն ալ ստակ կտրել տալով  
չկրնար հարուստ ըլլալ , ինչու որ այդ մետաղները զնե-  
լու պարտաւոր է որպէս զի դրամ շինէ : Այս մետաղ-  
ներն օտար երկիրներէ կը բերեն :

4. Դրամը կը որ մետաղ մէէ . անոր երկու երեսնե-  
րուն վրայ պատկեր ու բառեր կը դրոշմեն : Այս պատ-  
կերն ու բառերը կը ցուցնեն թէ որ թաղաւորին օ-  
րովք կոխուած են :

5. Ամեն երկիր նոյն դրամը չունի . Գրանսայի մէջ  
ֆրանտ , Անկլիա՝ շելքն , Աւստրիա ֆիօրն և այլն կը  
գործածեն : Թուրքիայի մէջ գործածուած դրամը լրացն  
է . զրուշը քառասուն փառայ է . Եճիրը ողջ քան զրուշ  
կ'արժէ . Հինգ մէջիտէն քանի մը զրուշ աւելին մէկ  
օսմանէան ուի է : Արծաթ մէջիտն ալ չորս մասի կը բաժ-  
նուի , որ դառնորդ Եճիրէ կ'ըսուին :

6. Պղնձէ մէկ զրուշը Ճերմակ Հինգնոցէ աւելի մեծ  
է , բայց անորմէ Հինգ վեց անգամ աւելի քիչ կ'արժէ :  
Պատճառն այս է որ պղնձն աւելի առատ է քան թէ  
արծաթը : Ամենէ սուղ մետաղը ոսկին է և այնչափ  
գժուար է ձեռք ձեր որ մէկ օսմանէան ոսկին ողջ  
հարիւր Հինգ զրուշ է : Կամ տղաք և աղջիկներ որ կը  
փափաքին տեսնել առատ ոսկի և արծաթ դրամ որ-  
պէս զի քարերու պէս հաւաքեն և իրենց դրամները  
լեցնեն : Բայց եթէ անոնք այնչափ առատ ըլլային բնաւ  
բան մը պիտի չարժէին : Եթէ ամեն մարդ ուզածին  
չափ ոսկի ու արծաթ դրամ ժողվէր , այն ատմն մարդ  
մը չէր առներ և փոխարէն ապրանք չէր ծախեր : Այս  
բանէս կ'երեւ որ դրամի նուազութիւնն է որ անոր ար-  
մէքը շատ է :

7. Երբեմն դրամի աեղ մարդի թուղթ կը գործ-

ածեն : Այս թղթերը կը բանին . անոնց փոխարէն դրա-  
մը տեղ մը պահուած է , թէ ոչ լոկ թուղթ են և  
արժէք մը չունին : Թաղթադրամը թեթև է և տեղէ տեղ-  
դիւրաւ կը տարուի : Թղթերուն վրայ գիրեր կան որ  
կը ցուցնեն թէ ինչ զին ունին և անոր տեղ ո՛րչափ  
ստակ տալ պէտք է : Ամեն մարդիկ որ թղթադրամ կը  
հանեն և պահուածը կ'ըսուին :

ՀԱՐՑՄՈՒՆՔ . — 1. Գնելու ժամկեն ի՞նչ է . ի՞նչ բա-  
նով կը ծախէնու ու իւ գնեն . Ենեւ դրամ ւըւլու ի՞նչ ընկ-  
ւու էնու : 2. Ի՞նչ է դրամը . Ի՞նչ է բարիւնու . Ի՞նչ է  
համար այդ երաշներու դրամը կը չնեն : 3. Ո՞ւ է իւրեւ  
դրամը . դրամ իրաղու հարուստ ի՞ւլու : 4. Դրամն երես-  
ներուն գրայ ի՞նչ կա : 5. Ամէն ուղ մէ և նշն դրամը կա :  
այն երեւ նշն ուղարք ստուկը կը դուժածուէ . Թուրքից  
սովորական դրամն ի՞նչ է . մէկ մէջիտն ի՞նչ է արժէ . ուիշն .  
ի՞նչ համար այսլաք սուու է : 6. Ի՞նչ համար պղնձէ  
դրամը ասեն մէկ է ճերմակ արժանի հինգնոցէն . ասելի ա-  
յնի շէր ըլլար ենէ արքէ լատ սուտը ըլլար սուին : 7. Ի՞նչ  
է նղնադրամը . Ե՞րբ այցէտ սունէ . ի՞նչ դիրսունիւն սունէ .  
որո՞ւ ի՞ստն ուղանաւոր :

#### ՊԱՇՏՈՆ ՈՒ ՍՈՌԻՏՈՒՐ

1. Մարդիկ աշխատելով ստակ կը վասարին որ  
ուտելիք , հաղուստ , տուն և ուրիշ պիտանի բաներ ծառ

խու առնեն : Եթէ շաշխատին ի՞նչ ուտելիք որ արդէն ունին քիչ ատենէն պիտի սպառի , բոլոր հագուստները պիտի մաշին և ուրիշ ամեն բաները պիտի հինան , այնչափ որ քաղաքի կամ երկրի մը բնակիչներն անօայն պիտի տառապին և թշուառ պիտի մեռնին :

2. Ամեն մարդ տիժպուած է արուեստ մը , պաշտօն մ'ընտրել և աշխատիլ : Այս բնական օրէնք մ'է : Ուստի մեղք է ծուլութեամբ անցընել օրեն և աշխատելու փափաք չունենալը : Նոյնպէս աւելի երջանիկ ենք երբոր աշխատինք քան երբոր անդորձ ենք :

3. Որովհետեւ տղաք շուկան աշխատելու կարող չեն , իրենց ծնողաց խնամօք ժամանակ մը կը կերակրին : Բայց երբոր մեծնան , ՚ի հարկէ իրենց համար պիտի երթան աշխատելու : Կան տղաք որ այնքան տղէտ են , կամ անանի զէշ բնաւորութիւն ունին , որ կարծեն թէ շատ ախորմելի բան մ'է միշտ ծնողաց խնամօք ապրիլ : Բնաւ հող չեն ըներ թէ որչափ սուղ կը նստին իրենց ծնողաց , որ երբեմն այնչափ կը վշտանան իրենց տղոց ընթացքէն որ սրտամաշուքէ կը մեռնին : Այս տեսակ տղոց այս ընթացքը շատ պարսաւելի է , և պէտք չէ որ լաւ աղաք անոնց հետեւն : Անոնք որ առողջ և ուժեղ են աղաք անոնց հետեւն : Անոնք որ առողջ և ուժեղ են պէտք է որ իրենց յատուկ ապրուստին համար աշխատին :

4. Այս ընդարձակ աշխարհ հիս մէջ ամեն մարդ կարող է օգտակար դորձ մը դտնել և ապրիլ : Կան մարդիկ որ մարմնով ուժեղ և ծանր արուեստներ բանելու յարմար են . կան այնպիսիներ ալ որ մարմնական ոյժ չունին , բայց զործունի միտք ունին և յարմար են այն պիտի դործերու որոց մէջ աւելի խելք պէտք է քան թէ ոյժ : Բայց ամեն տղայ պարտաւոր է նախ կրթուիլ և աղաք իրեն յարմար դորձն ընել : Դոկ անոնք որ չեն

կրնար որոշել թէ որ պաշտօնին աւելի ընդունակ են , պէտք է որ աւելի փորձառու մարդոց խորհուրդ հարցընեն և այնպէս գործի մը հետեւն :

5. Երբոր մարդիկ այսպէս այլ և այլ արուեստներ կամ պաշտօններ կը կատարեն որպէս զի իրենց ապրուստը ձարեն , նոյն միջոցին իրարու ալ կ'օգնեն : Դերձակիլ զգեստներ կը կարէ ու կը կարէ , կօշկակարը մուձակներ կը շինէ , որմազիրը տուներ կը շինէ , ատաշագործը կարասիկ կը շինէ , տպագրիչը դիրքեր կը տպէ , մայլաճառը կենդանիներ կը մորթէ ուտելու համար , մշակը երկիրը կը հերկէ ու կը ցանէ , ջաղացապանը յորենը կ'ալայ որ ալիւր շինէ , հացագործն աւելուն հաց կը շինէ : Թէպէտեւ բոլոր այս մարդիկ տարբեր արուեստներ կը բանին , բայց գարձեալ իրարու կ'օգնեն : Դերձակն ուրիշներուն համար ալ զգեստներ կը պատրաստէ և փոխարէն անոնց շինած բաներէն մաս մը կ'առնէ : Կօշկակարն ուրիշներուն համար մուձակներ կը շինէ և ասոնց շինած բաներուն փոխարէն շատ բաներ կը զնէ , և այս կերպով ամեն մարդ իր շինածին աւելորդ մասն ուրիշին կը ծախէ և փոխարէն առած սամակով ուրիշ բան կը զնէ : Փոխանակութիւնն ապրանք ապրանքի հետ չեն ըներ , վասն զի այս բանոց շատ անյարմար է . փոխանակութիւնը դրամի միջոցաւ կ'ըլլայ , որ այս նպատակին համար եղած է :

6. Գերձակ , մուձակագործ , ատաշագործ և ուրիշ մարդիկ որ գործածելու համար զանազան բաներ կը շինեն , արուեստառ են և մողովրդեան մէջ ամենէ շատոր մասն են : Այս մարդիկ որ ուրիշ շատ բանուրներ կը գործածեն և անոնց աշխատութեան փոխարէն ըրունէ + կը վճարեն , գործարէն կ'ըսուին : Ասոնք ալ իւ

ինց ապրանքը խանութպաններու կամ ուղղվին կը ծառեն : Երբոր խանութպանը մուշակ մը կը ծախէ , մուշակին համար իր վճարածէն քիչ մ'աւելի բան կը պահանջէ , և այս իր վաստակն է : Եթէ դրածախը հինգ զբուշ վճարէ գիրքի մը համար , և զայն վեց զբուշն ծախէ , մէկ դրոշ վաստակ կամ շահ ունի : Եթէ գործ ծախէր ու խանութպան իրենց ապրանքէն շահ չունենան , չեն կրնար ծախել , վասն զի միայն անոր վաստակնին է որ կ'ապրին :

7. Գործատէրի մը շինել տուած զեկստներն՝ շատ անգամ վաճառականները կը գնեն : Վաճառականներն ալ զանոնք օտար երկիրներ կը զրկեն , երբոր այն տեղերը հաղուալիւտ են , և երբոր ժողովուրդը կ'ուզէ զնել : Այս պէս շատ ապրանք խիստ երկիրներ կը դրկուին նաւերով : Նաւերն ալ օտար երկիրներէն այնպիսի ապրանք կը բերեն որ մեր հայրենիքը չկան : Թէյ , շաբար և որիշ շատ ապրանքներ որ ամեն որ կը գործածենք այն հեռաւոր երկիրներէն կը բերուին : Երբոր այսպէս այլ և այլ երկիրներու վաճառականներ իրարու հետ կը հաղորդակցին և առուծախ կ'ընեն այս դորձողութեան վաճառականներէն կամ առուապուր կ'ըսեն :

8. Այն քաղաքն որ շատ ապրանք ու տարազն կը հանէ Հաճառաբէր քաղաք կ'ըսուի . իսկ այն քաղաքն ուր շատ առուստուր կ'ըլլայ Հաճառաշահ քաղաք կ'ըսուի : Մանչէսթէր , Պիրմինիմ և Շէփփիլտ մեծ վաճառարեր քաղաքներ են . Լուսոն , Պոլիս , Խզմիր մեծ վաճառաշահ քաղաքներ են : Սովորաբար նաւարկելի գետերու կամ ծովերու մօտ կը գտնուին վաճառաշահ քաղաքները , որպէս զի նաւերը դիւրաւ մօտենան և ապրանքները փոխագրեն : Միւրանցներ կ'ըսուին այն չէնք բերն որոց մէջ ապրանքները կ'ամբարեն :

9. Ծառ մարդիկ օդտակար զործեր կ'ընեն ընկերութեան մէջ . ոմանք կը կրթեն , ոմանք կը զուարձացնեն , ոմանք ուրիշներուն ինսամք կը տանին : Դասաւանները գվրոցներուն մէջ տղաքը կը կրթեն , իսկ ինսամականներ ու դաստիարակներ ընտանեաց մէջ հրահանք կատան : Եկեղեցականներ ժողովրդոց կը սորվեցնեն իրենց կրօնական պարտառութիւններն և կը ջանան համոզելու որ պարկեցած կեանք վարեն : Գիրքերու հեղինակներ , լրազիրներու խմբագիրներ , երաժիշտներ , պատկերչաններ , և ուրիշ մարդիկ միտք կը կրթեն , կը զուարձացնեն իրենց նմաններն և անոնց պարապոյ ժամերն օդտակար կերպով անցընելու կ'օդնեն : Բժիշկները ժողովրդեան հիւանդութիւնները կը բժշկեն , և վիրաբոյներն անոնց վէրքերը :

10. Ամեն մարդ իր գտնուած պաշտօնին մէջ իր նմաններուն օդտակար ըլլալու կը ջանայ : Կան անձեր ալ , մեծ ու փոքր , որ ծայլ կամ դանդաղ են , և չեն ուղեր կանոնաւոր գործ ընել , և ուրիշներ ալ իրենց վաստրկած գրամը պարապ տեղ կը վատնեն : Ասմաք թշուառ և աղքատ վիճակի մէջ կ'իյնան : Այսպէս աղքատնալով ընկերութեան վրայ բեռ կ'ըլլան : Ուրիշ մարդիկ ալ անխոչեմութենէ կամ անբաղդութենէ չեն յաջողեր իրենց դորձերուն մէջ և այսպէս իրենց ըրած թաները կը կորսուին : Այս տեսակ ձախորդութեան հանդիպող անձերուն օգնել պէտք է : Կան շատ մարդիկ ալ որ ծերութեան կամ տկարութեան պատճառաւ կ'աղքատնան , այն ատեն պէտք է անոնց հոգ պանիլ և օգնել : Առեբացին մը աղքատ մարդ մ'է որ առանց ամբնալու ողորմութիւն կը խնդրէ : Այն մարդիկ որ իրենց ապրուստը ճարելու համար աշխատելու կարող

են, պէտք է որ ամինան մուրալու և աղքատներու կարդն անցնելու :

41. Աստուած այնպէս կարդաղրած է որ աշխատող ու կանոնաւոր կեանք վարող մարդոց պէտոյ+ը հոգացուին : Այս պիտօքը իրօք շատ չեն և զլխաւորապէս ասոնք են . օդ, առանք, ջուր, լեռնալին, բնակրան, ոչեսու : Ասոնցմէ մէկ քանին ձրիապէս կ'ընդունիք իսկ միւսներն աշխատելով կ'ըստանանք : Կան մարդիկ որ դո՛չ կ'ըլլան եթէ միայն կենաց անհրաժեշտ պիտօքը ձեռք ձգեն, այս է պարզ ոտելիք և կոշտ զգեստ :

42. Կան մարդիկ որ քիչով դո՛չ կ'ըլլան, կան նաև մարդիկ որ շատ փափաքներ կ'ունենան այնպէս որ անոնց համեմատ պիտոյքներն ալ կրնան աւելնալ : Պէտք է աշխատիլ և նոյն պիտոյքներն աշխատութեամբ դո՛չ ընել : Այս որ կարող է դիւրաւ ստակ շահիլ որպէս զի աւելի լաւ ոնունդ, լաւ զղեստ, լաւ բնակրան, լաւ կրթութիւն սահանայ և չաշխատիր, յանցաւոր է : Ամեն մարդ պարտաւոր է իր վիճակը բարութել իր ձարտարութեամբ և օրինաւոր աշխատութեամբ :

ՀԵՐՑՈՒՆՔ . — 1. Մարդի ի՞նչ է հորեն աշխատեւալ . ի՞նչ է պատահի, ենիւ լ'աշխատին : 2. Ամէն մարդ պարտաւոր է աշխատիլ . ի՞նչու : 3. Տղաւ շուկա, ի՞երեւն : ի՞նչ է երենց պարտը . ի՞նչ ընթաց+բանւուն էն : 4. Ամէն մարդ էր իրայ դործն ի՞նչ է . ետքեն ի՞նչ պաշտօն ընելուն էն : 5. Մարդ մը դործ ո՞ւնելով մինչ ինչն ի՞րեն օդուակար է . ի՞նչու արքիլեք արուեստներ կան . մարդ մը լու արուեստի մը հետուելով իրայ ամեն պէտոյ+ը հոդուն ի՞նչ է գոխուեակէլ : 6. Բացարքէ . ի՞նչ է արուեստաւոր և դործարէր . ըստակի ի՞նչ է : 7. Ամէն պետակ աղբանի մէ կ-

նոյն պաղցէն իբնայ եւնել . պրաւեն աղբանի իը օտակը +աղցէն ըն մէջ . ի՞նչ է աղուարուրը : 8. Ի՞նչ է վահապարէր աղցաւ . զահապարշան . ի՞նչ օդուոր անին ըներանոցները : 9. Մարդի ի՞նչ պետակ դործներ կ'ընեն . մէկ աղենին ըսէ : 10. Ամէն մարդ նոյն վիճակն սուն : երբ մարդ մը օդուարնեան արժանի է . ի՞նչ է մուրացիանը : 11. Մարդուն դիմուոր պէտոյ+ն ի՞նչ է . ամեն մարդ դո՞ն է իր վիճակն : 12. Պէտոյ+ները աղ սունին : մասից իը ծագին . ի՞նչ ընելու պարտաւոր է մարդ :

### ԸՐՅԱ-ԶՈՒԹԻՒՆ — ԶԻՇԱՆՔ — ԶՈՒՄՐՃՈՒԹԻՒՆ

1. Երբ մարդ չափէն աւելի աշխատի իր առողջութեան կը վնասէ : Եթէ մեր կարողութենէ վեր, կամ օրը շամ աշխատինք, կը տկարանանք, հիւանդ կ'ըլլանք : Ուստի պարտաւոր ենք զգուշանալ, վասն զի ամեն բանի մէջ չափաւորթին պէտք է :

2. Չափաւոր աշխատանքի համար սովորաբար եօթն ութ ժամ կը բաւէ օրը . բայց նոյն միջոցին պէտք է մէկ երկու անգամ զարդիլ, մանաւանդ կերակուրի աւեն : Պէտք է ծանր ուտել կերակուրը, և ձաշելէն եւ մե քիչ մը հանգստանալ :

3. Ոչ միայն տէրունական օրեր կը հանդստանանք, ոյլ և պէտք է պատահապէս զրօնուլ ու զուարձանալ . Աշխատութենէ ետք հանգիստը կարեսը է : Սակայն մեր զրօնանքը պէտք է որ անմեղ ըլլայ և օդատակար մեղի համար : Ամենէ լաւ զրօնանքն է բայց օդին

Հրջադայիլն ու բարեկամներու հետ խօսիլ ու կարգալը։  
Առողջութեան համար արտաքին կրթութիւնք շատ օգա-  
տակար և ախորժելի են։

4. Կան մարդիկ որ շատ ստորին ճաշակ ունին։ ու-  
զելից ըմպելվ խմելով ու դիմովալով կը գտարձա-  
նան։ Արբած մարդն իր խելքը կը կորսնցընէ և ը-  
րած դրածը չդիտէ։ Զէ կարող չխափ քալել, այլ  
կ'օրորի կամ դեաթինը կը գլորի, ամնուն զզուանք պատ-  
ճառելով։ Գինովութիւնը զզուելի մոլութիւն մ'է որ  
թշուառութեան ու աղքատութեան կը տանի։ Պէտք է  
զգուշանալ այս ախտէն։

5. Պարտաւոր ենք ամն կերպով ջանալ մեր ա-  
ռողջութիւնը պահելու։ Ասոր համար՝ ոչ միայն պէտք  
է անմեղ զմուանքով զզուարձանալ այլ և միշտ մաք-  
րութիւն պահել։ Պէտք է ամն օր լուացուիլ և մա-  
քուր ջրով մաքրուիլ։ Պէտք է մաքրու օդ ծծել և մա-  
քուր ու չոր տուներու մէջ բնակիլ։ Կարելի եղածին  
շափ իրնաւութենէ զզուշանալու է։ Նոյնպէս կարեօր  
է բնութեամբ ուրախ ու զուարթ ըլլալ և անհիմն բա-  
ներու համար հող չընել։

ՀԵՐՑՄՈՒՆՔ. — 1. Ե՞րբ վաստիոր է ըլլայ աշխատե-  
նը. ի՞նչ պէտք է։ 2. Չո՞տուոր աշխատանին օրը ունի՞ ժամ-  
էլ ունեւ. կերպակուն ի՞նչուու ունելու է։ 3. Ի՞նչ ուեսա-  
նէ ունեւ. կերպակուն ի՞նչուու ունելու է։ 4.  
Չբօսան+ պէտք է մեղէ. որո՞ն+ ի՞նչ լուագոյն զբօսանէ։ 5.  
Ուսան+ ի՞նչ բանէ մէջ ըստաբունիւն կը բնուածն։ 6. Ի՞նչու-  
նեն+ ի՞նչ էնէ մաքրուան. ուր կը ուսանէ զի՞ն+։ 7. Ա-  
շխատնը պահպանէլու համար ի՞նչ կարևոր մէջունիր կը ի՞ն։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ — ՆՇԱՆԱԵՐ — ԿԱՐԳԵՐ

1. Այն ժողովուրդն որ երկրի մը մէջ կ'ապրի առէ  
կը կազմէ։ Ըստ ազգեր կան աշխարհիս մէջ, ինչպէս  
անկլիացի ազգը, Փրանսացի ազգը, յոյն ազգը, հայ  
ազգը։ Դարձեալ երկու տեսակ ազգ կայ, բարբարոս ու  
բարեկրն։ Բարբարոս ազգերու մէջ մարդիկ կէս վայ-  
րենի են, հանգիստ տուն, հագուստ շունին և անա-  
սուններուն պէս կ'ապրին։ Բարեկիրթ ազգերը կանոնա-  
ւոր կառավարութիւն ունին, աղւոր տուներ և զեղեցիկ  
քաղաքներ ունին։ Խրենց մէջ արուեստները, վաճառա-  
կանութիւնը ծաղկած է և հանգիստ կեանք անցընելու  
համար կարող են պէտք եղած բաները ձարել։ Հողե-  
րը լաւ մշակուած են, և եկեղեցիներ, դպրոցներ, աղ-  
քանանոցներ և ուրիշ շատ բաներ պակաս չեն։ Մենք  
քիչ շատ բարեկրթ երկրի մէջ կ'ապրինք։

2. Երբոր կանոնաւոր կառավարութիւն կ'ըսենք կ'ի-  
մանանք իշխանութիւն մ'որ ազգը կը կառավարէ և ա-  
նոր օդուաղը կը մասածէ։ Եթէ կառավարող ըլլայ եր-  
կրի մը մէջ, ագէտ ու շար մարդիկ բարի ու խաղա-  
ղանէր մարդերուն շարիք կը հացընեն։ Կան անանէ  
անզգամ մարդիկներ որ կ'ուղեն բոնի ուրիշն ստաց-  
ուածքը յափշտակել, ինչպէս որ խօսոր և ուժեղ շուն  
մը պատիկ ու տկար շան մը բերնէն ուկորը կը յափշ-  
տակէ։ Կառավարութիւնը պարտաւոր է արդարութիւն  
հաստատել, անիրաւները պատժել և տկարները զօրա-  
ւորին գէմ պաշտպանել։

3. Նոյնպէս կառավարութիւնը պէտք է որ ազգի մը

ընդհանուր գործերը տեսնէ և անկարգութիւններն արա զիլէ : Եթէ ժողովուրդ մ'ուրիշ ժողովուրդի մը հետ ուղէ խօսիլ կարեւոր բանի մը վրայ, երկու ժողովրդոց կառավարութիւններն այդ յարաքերութիւնը կը հաստատեն :

4. Կառավարութիւն մ'ուրիշ պարտաւորութիւններ ալ ունի. պէտք է որ ամեն մարդու կեանքը, պատիւն ու ստացուածքը պաշտպանէ և երկրին լաւութեան համար պէտք եղած բանները կարդագրէ : Այս համար պաշտօնեաներ կան որ ժողովրդեան կողմէ այլ և այլ պաշտօններ կը վարեն : Կառավարութիւնն իրաւոնք չունի ուրիշն անձնական գործերուն ու ընտանեաց խառնուելու : Այս գործերը կատարելու համար կառավարութիւնը ժողովուրդէն բառիք կ'առնէ :

5. Ամեն կառավարութիւն նոյն տեսակ չէ, ինչու որ ամեն մարդիկ նոյն բնութիւնը, նոյն հոգն ու կրթութիւնը չունին : Կան երկիրներ ուր մինակ մարդ մը ժողովուրդը կը կառավարէ և այս մարդը նոտառը կամ կայսր՝ կ'ըսուի . եթէ կառավարուղ կին է, նոտառնէ կ'ըսուի : Այս տեսակ կառավարութիւն մ'ուր իշխողը մէկ հոգի է, Թաղեառնիւն կ'ըսուի : Ուրիշ երկիրներ ալ կան ուր թաղաւորէն զատ՝ ժողովրդեան կողմէ ուրիշ մարդիկ ալ կ'ընտրուին՝ որպէս զի օրէնք շնեն և շնորհուն որ թաղաւորն ուղածին պէս ամեն բան լինէ : Այս ընտրուած մարդիկ ժողով կը կազմն և այս տեսակ կառավարութիւն, առնառը միապետութիւն կը կոչուի : Անկլենյ մէջ այս երազ կառավարութիւն կայ : Թաղաւորը կամ թագուհին մառան կազմն են, այսինքն երբ մեռնին իրենց իշխանութիւնն իրենց որդուց կը ժողուն : Կան մէկ քանի երկիրներ ալ ուր ոչ թաղաւոր կայ ոչ

իշխան, հասպա ժողովուրդը կառավարութեան գործերը անուղղակի կը նայի, իր կողմէ նախադան մ'ընտրելով և ժողովներ, որ օրէնք կը հասատեն և նախազահն վրայ կը հսկեն որ անիրաւ բան չընէ, և նախազահն ալ քանի մը տարի պաշտօն վարելէն ետև՝ կը հրաժարի և անօր տեղ ուրիշ մը կ'ընտրուի . ուսաի իր եւշ խանութիւնը ժառանգական չէ, իր որդուցն չկրնար թողուլ : Այս կերպ կառավարութիւնն ալ հասարակութեան կ'ըսուի : Գրանսայի և Զուիցերի մէջ կառավարութիւնը հասարակապետական է :

6. Ա՛վ որ ըլլայ կառավարողը՝ օքնանէք պէտք են, առանց օրէնքի կարելի չէ բարեկարգութիւն հաստատել : Դատաստանարաններ կան ուր դատերը կը տեսնուին, վասն զի թէ որ մարդիկ երենց դատերը կարենին, զօրաւորները տկարներուն իրաւունքը պիսի չհանչնային : Ամեն մարդու պարագն է դրուած օրէնքին հնագանդիլ, մանաւանդ երբոր այդ օրէնքն իր կողմէ դրուած է : Եթէ երկրի մը մէջ արդարութիւն ափրէ, եթէ մեծ ու պղտիկ իրենց պարագն ու իրաւունքը ճանշնան այն ատեն երջանիկ կ'ապրին և շատ չարիք կը պակին :

7. Կառավարութիւն մը միայն ժողովրդեան մ'ընդհանուր շահերը կը պաշտպանէ . ժողովրդեան շահն է որ իր հայրենիքը պաշտպանուի . ասոր համար բնանանէր ունի որ՝ դրսէն եթէ թշնամի զայ՝ վանն : Եթէ ժողովուրդը ծովեզեայ քաղաքներ տնի, պէտք է նաեւ ունենայ նաւելք կամ նաւառորդու որպէս զի իր առուատուրը պաշտպանէ և ծովէն եկող թշնամի՝ եթէ ունենայ, վանտէ : Երբոր աղջի մը զօրքն ու նաւատորմիլին ուրիշ աղջի մը զօրքին ու նաւատորմիլին գէմ կը կուռին

կ'ըսենք թէ այս աղղերը պարեւազն մէջ են։ Իսկ երբ  
որ աղդ մը պատերազմ չունի՝ իւալովութեան մէջ է, և  
ժողովրդեան մը համար շատ մեծ բարիք մ'է խաղա-  
ղութիւնը։ Ճատ փափաքելի է որ աղդերն իրարու հետ  
խաղաղութեամբ ապրին և իրենց մէջ վէճեր ու կռիւ-  
ներ բանալով պատերազմ ընելու չսահմանին։

8. Ազգերը նշաններ ունին օրով իրարմէ կ'օրոշուին։  
Ամեն ազդի բանակն ու նաւատորմիզը մասնաւոր նշա-  
նակ մ'ունի։ Այս նշանակն է որոշակէ։ Գրոշակը լաթի-  
մեծ կտոր մ'է զունաւոր, որ գերանի մը ծայրը կը  
կախեն։ Երբոր գրօշակը նաւու մը, բերդի կամ որ և  
է տեղի մը վրայ կը ծածանի անոր տեսակէն կը հաս-  
կըցուի թէ այս նաւը, բերդը ու տեղը որունն է։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ի՞նչ է աղդ։ անուանէ մէկ ունի-  
աղդեր։ ի՞նչ առբիւրութիւն կա բարեկելը ու բարբարու-  
ութիւն մէջ։ 2. Ի՞նչ է իւանաւոր իւսուալութիւն։ ի՞նչ  
օդուար ունի կառավարութիւն ուն. ի՞նչ է իր պաշտան։ 3.  
Ասուալութիւն ի՞նչ առեսոկ գործեր կը նայ։ 4. Ի՞նչ  
գործառարութիւն ունի։ ի՞նչ առեսոր կ'առնել ժողովրդեւ։  
5. Միասնական ի՞նչ է։ աղդի ու մէկ ժողովներն ի՞նչ  
կ'ընեն։ ի՞նչ է ժամանական իշխանութիւն։ ո՞ր պեսակ կա-  
ռավարութեան մէջ ժողովրդեւ կը իւսուալոր։ ամէն ճարդ-  
կընայ կառավարել։ 6. Օքենու ի՞նչու պէսու է։ 7. Կառավա-  
րութիւնը ի՞նչ պեսակ շահեր կը պաշտան։ ի՞նչու բանակ-  
ներ ու նաւեր ունին աղդերը։ ի՞նչ է պարեւազն։ ժողո-  
վրդեւ ենք խաղաղութեան մէջ է։ 8. Աղդերն ի՞նչ նշա-  
ներ ունին։ գլուխուր նշանն ի՞նչ է. ի՞նչ է շոշանի։

### ԸՆԿԵՐՍԱՆԱ. ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ամեն տեղ մարդիկ միասին կ'ապրին և միասին  
ապրելով այլ և այլ յարաբերութիւններ կը հաստա-  
տեն իրենց մէջ։ Այս ընկերակցութեան հիմը ընտանիքն  
է։ Ամեն մարդ դրեթէ իրեն ազգակիցն ունի։ Օքինակի  
համար, աղայ մը կամ աղջիկ մը սովորաբար հայր,  
մայր, ելայրներ, քայրեր ունի, այնպէս հօրեղայր-  
ներու մօրեղայրներ։

2. Մարդիկ իրարու հետ կը կապուին նաև իբրեւ  
շարեկամ ու ծանօթ։ Իրարու հետ կը տեսնուին, կը խօ-  
սակցին և երբ իրարմէ հեռու են, կը նշանիցին նամակ-  
ներով։ Կան մարդիկ ալ որ գործերու պատճառաւ ի-  
րարու հետ միացած են։

3. Մեծ քաղաքներու մէջ եղած մարդիկ այլ և այլ  
կարգադրութիւններ կ'ընեն որ հանդիսաւ ապրին։ Փո-  
ղոյները շակել կուտան, քարայատակ կ'ընեն, որպէս  
զի հանդիսաւ քալեն, աղտեղութիւններ ու ջուրը վեր-  
ցընել կուտան, որոնք եթէ ման փողոյներու մէջ ա-  
ռողջաւթեան վնասակար են։

4. Փողոյները լամպաներ կը դնեն, որ բոլոր գի-  
շերը կը վասին և անցնող գարձողին լոյս կուտան։  
Կայնակէս տուները ջուր կը տանին. այս ջուրերը հե-  
ռու տեղերէ կը բերեն խողովակներով։ Աւան զի գժուա-  
րին է հորեն ջուր քաշել. երբեմն ալ արտելւան հօրեր  
կը բանան և ջուրը ջրհանով վեր կը հանեն։

5. Քաղաքներու մէջ ոստիկան սպաններ կամ պահա-  
ներ կամ որ քաղաքը կը պահպանին։ Այս պահպանները

չար մարդիկը կը վնասուեն և գատաւորին առջեւ կը տառնին որպէս զի անոնց յանցանքը պատճէ : Ծառ անցամ այսպիսի մարդիկ բանալը կը նետեն : Մեծ ամօթ է մարդու մը բանա մանել իր դէշ վարմունքին համար :

6. Քարեկիրթ քաղաքները ժողովները ունին որով կը կառավարուին : Այս ժողովները ուղարկած կամ ուղարկած անդամները ժողով կ'ըսուին : Բնակիչները կ'ընարեն անոնց անդամները : Ասոնց պաշտօնն է քաղաքին մաքրութեան, բարեկարգութեան և շահերուն վրայ հսկել : Կան նաև բնակչուն խորհուրդներ, որ թալին եկեղեցւոյն, դպրոցին վրայ հսկ կը ասանին :

7. Քաղաքներուն մէջ կան հասարակաց շնորհը և առաջն քուներ : Հասարակաց շնորհըն են եկեղեցիները, տաճարները, ուր մարդիկ աղօթքը ընելու կ'երթան, հիւանդանոցներն, ուր ապիկար ու թշուառ տնանկներ կը ինսամուին, բանտերն, ուր յանցաւորները կը բանտարկուին ու կը պատմուին, կամաւրջները, թատրոնները, որ զրուանքի համար են, դպրոցներն ու վարժարանները, ուր տղաք կը կըմուին, գատարաններն, ուր դատեր կը տեսնուին, և ուրիշ շատ շնորհը ուր ժողովուրդը շահ մ'ունի :

8. Առաջն քուները մասնաւոր բնաանեաց համար են, և սովորաբար իրարու մօտ շնուած են կարդով փողոցներու վրայ : Փողոցներն ալ իրարմէ կ'որոշուին յատակ անուով, իսկ տառները թիւով : Լաւ առն մը պէտք չէ որ խոնաւ ըլլայ : Անոր սենեակները լսյն, օգաւէտ ըլլալու են և պէտք է որ արե տեսնեն : Առով չարաբ ըլլալու համար պէտք է որ առնը շատ մաքուր պահուի :

9. Ամեն առն կան կարասի ունի քիշ շատ աղլոր : Կարաբիներն են, մահակալ, անկողին, սեղան, աթոռ,

օթոց, վառարան, պահարան, ժամացոյց, հայելի, վարագոյր, բաղմոց, և ուրիշ շատ անօթներ ու անաններ : Դարրինները, հիւմները, և ուրիշ արհեստաւորներ կը շնին տան մը կարասիները :

10. Մեծ քաղաքներն ունին խանութներ, մթերանոցներ, որոց մէջ աեսակ տեսակ՝ ապրանք կայ : Այս ապրանքներէն կը տանին առներն ու գիւղերը կառքով, շողեկառքով և բեւսակրով : Կան նաև ձանր ապրանքներ զրութեակով կամ նրանցի վրայ նաւակով կը տանին : Ջրանցքը ջրի ճամբաններ են որ գետերու կը նմանին : Հողը փորելով երկայն փոսեր բացած և անոնց մէջ զետերու ջուրը բերած են : Ջրանցքի նաւակները՝ ծովունաերու պէս զեկ ունին, բայց առազատ չունին . սովորաբար ձիերը զանոնք կը քաշեն :

11. Քաղաքէ քաղաք երթալու համար մեծ ժամբաններ կան, որ շատ օգաւակար են : Եթէ ճամբայ չըլլար, պիտի ստիպուէինք գաշեերու մէջէն գժուարաւ անցնիլ տեղէ տեղ երթալու համար : Ճամբանները կարծր քարերէ շինուած են, որ կոխուելով կը պնդանան և վրան քալելու և կառքեր քշելու համար գիւրութիւն ունին : Կան ճամբաններ ալ որ նեղ են և ուղի կ'ըսուին, բայց լսյն ու մեծ ճամբաններն արանելու կամ ուղղորդ կը կոչուին : Եթր ճամբաւ մը երկու կողմէն ծառեր տնկուած են ծառաւոնչ կ'ըսեն, որմէ գիւղ մը կամ տուն մը կ'երթուի :

12. Այն մարդիկ որ ճամբայ կ'ելնեն հեռաւոր երկիրներ երթալու ուղւոր կ'ըսուին կամ ժամբար : Ասոնք իրենց բնիկ երկուն գուրս կ'երթան և կարելի է տարիներ կ'անցընեն օտար քաղաքներ : Ինչպէս քաղաքը նոյնպէս երկայն ճամբաններու վրայ ու գիւղերու մէջ

Ճամբորդներու համար բնակարաններ կան, որ ո՞լեւան  
կամ ո՞ւնդո՞ւի կ'ըսուին, իսկ այդ օթևանները բանեցը-  
նողները պանդոկառեցներն են:

13. Հաստ ծանր ու տաժանելի է ոսկով ուղեորիլը:  
Ոմանք չեն կը ճամբորդին, ոմանք կտաւով. բայց քիչ  
մարդիկ ձի ու կառք տնին, շատերն հանրակառերով կը  
պարտին: Հիմա սովորաբար մարդիկ երկուուղին կը ճամ-  
բորդեն: Երկաթուղին ճամբայ մ'ե որու մեջ երկու ու-  
ղեղ գիծ կայ երկաթի. ասոնց վրայէն կը քալեն կառ-  
քերը ձիով կամ ջայրաշարժ մեքենայով: Վայրաշարժի  
մը մղիչ ոյժը շողին է, որով հիմա շատ զարմանալի  
րաներ կ'ընեն: Երբոր վայրաշարժ մը իրարու կապուած  
կառքեր կը քաշէ կտաւշտ կ'ըսուի:

14. Ընդարձակ երկիրները նոհանքներ կը պարունա-  
կին, նահանգները հաստաներ, դաւանները ժաղաներ:  
Արտաք նահանգ է. Բասէն, Շիրակ դաւառ են: Այն  
քաղաքն որ մայրաքաղաք չէ հաստանին ժաղաներ կ'ըսուի:  
Կուսականներ կը կառավարեն դաւանները, ժաղանողեր-  
ները քաղաքները:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Մարդիկ սուանյին կ'աղբին. ընկե-  
րութեան հիմն ինչն է: 2. Արդէն ինչ լարաբերութեան ի՞ն-  
չեան մորդիկ. ինչն ըստեկամ ու ծանօթ: 3. Ար ընկե-  
րական վիճակն առելի լաւ է. ո՞ր աղաղներն առելի բարեկարտ  
են: 4. Ի՞նչն լամպուրներն. ինչն կը մասնին. ինչն է իունը՝  
ընման կը մերեն. ինչն ըստ ին մերեն որուները: 5. Ի՞նչ-  
որպահու ունին սոսիկանները: 6. Ի՞նչն է աղաղուաղետունին ժո-  
ղով. խաղական խորհուրդ: 7. Ի՞նչն առեսակ շենքեր կա՞ առգի  
ըն մեջ. առանձին գոնի մը հասարակաց վկաներ. ինչն այսուես  
կ'ըսուին: 8. Մասկառը ունեներն ինչ են. դուն ըն իսուս

ի գոնելու համար ինչ պետ է քիոնաւ. ե՞րբ պատմ ի ըստ է  
ւ առողջաւեա: 9. Կան կարասներն ինչ են. անուանել մէն  
անի հասու. ո՞րոն ի ընէւ: 10. Սորբոններն ուր է  
գրութեն. ինչն ի գոհարաբանին. ինչն է ջրանցը. ինչն ար-  
քեցունեւն անի ջրանցին նախակ շովու նաւին: 11. Ճամ-  
բեռներն օդապիար են. ինչն է անի պետուի ճամբայ կա: 12.  
Բաներն է աղջուր կ'ըսուին: մեր ի իջնէն: 13. Ինչն է  
ճամբորդեն: ինչն է երկուուղին: ջորտշուեւ. կուսական-  
ութեա: 14. Ինչն աղբբերունիւն անի նահանքը դաստիւն: օդինուի  
պատր. կուսականն ինչ է:

## ՄԻՏՐ

1. Գիրեւ որ մարդկային արարած մ'եմ, զրայտ-  
րանք անիմ և միտք: Գիտեմ որ կ'ըզդամ, կը շար-  
ժիմ, կը փափաքիմ, կը մտածեմ և կը խոսիմ: Իմ ա-  
նոնս զիտեմ, զիտեմ իմ ծնած տեղս, իմ հոյրենի-  
քիս անունը, և հիմա զանուած տեղիս անունը: Գի-  
տեմ որ աղայ մ'եմ և զեռ շատ բաներ ունիմ սորվե-  
լու:

2. Կարող եմ հասկընալ ինչ որ ինձի կ'ըսեն: Երբ  
զասատու ըստ ինձ որ ոտքի վրայ կենամ, կը հասկը-  
նամ որ պէտք է նստած տեղիս վեր կանգնիմ: Երբ  
մէկը հարցընէ ինձ թէ ի՞նչ է անոնս, կը հասկընամ  
թէ ի՞նչ կը ինդիէ, իմ անոնս կ'ըսեմ: Եթէ ծնողքս  
ինձ ըսեն, այսօր կտրա մ'ելներ խաղալու, վասն զի

անձրեւ կը վասի , կ'իմանամ որ տունը մնալս և դուրս  
չելնելս կ'ուզեն : Կը հասկընամ թէ ինչո՞ւ համար տուն  
մը դուռ և պատուհաններ ունի , կամ ինչո՞ւ համար  
մարդիկ թեթև զգեստներ կը հաղնին ամառը և ձմեռը  
տաք հագուստներ :

Յ. Կրնամ ճարածել կամ իսրահել իմ տեսածիս ու լսա-  
ծիս վրայ : Փօրձով զիտեմ որ կրակը կ'այրէ : Եթէ  
մարդ մ'ըսէ ինձ . ձեռքդ կրակին մէջ զիր , պիտի մտա-  
ծեմ ինձի ըստին վրայ և պիտի պատասխան տամ .  
Ես չեմ կրնար ձեռքս կրակին մէջ զնել , վասն զի զի-  
տեմ որ պիտի այրի և այրին ալ շատ ցաւալի ու վնա-  
սակար բան է : Խոյնակէս կրնամ մտածել որ եթէ ծո-  
վուն խորն ընկնիմ կարելի է խղուիմ : Եթէ զէշ վար-  
մունք մ'ունենամ՝ կը մտածեմ որ լաւ հետեւանք չու-  
նենար : Եթէ կառք մը յանկարծ իմ վրաս գար , շուտ  
մը վտանգին վրայ պիտի մտածէի և մէկդի պիտի քա-  
շուէի :

Գ. Կրնամ իմ ըրած դորձերուս պատճառը և անոնց  
նպատակը մտածել : Աչքը շնուրած է տեսնելու հա-  
մար և ոտքերը՝ քալելու համար . դպրոց կուզամ կար-  
գալ և օգտակար բաններ սորվելու համար . Եթէ չուր-  
վիմ , նպատակիս չեմ համնիր : Տղայ մը սառած դետի  
մը վրայ զնայ սահելու համար , բայց սառոյցը բարակ  
էր և չէր կրնար զինք վերցընել , ուստի սառոյցը կոտ-  
րեցաւ և ինք ջուրն իյնալով խղուեցաւ : Տղուն միավը  
սահիլ էր և չէ թէ խղուիլ : Դիպուած մ'է խղուիլը  
և այս դիպուածին պատճառը տղուն անխոչեմութիւնն էր :

Յ. Կրնամ հասկընալ թէ ինչ կը նշանակէ մէջներ  
դորձածել բան մ'ընելու համար : Եթէ ուղեմ առնել  
զլխարկս որ սկատէն կախուած է , պէտք է որ միջոց-

ներ զործածեմ զայն առնելու համար . դլխարկս չկընար  
ինձի դալ , ինչու որ անկենդան առարկայ մ'է և չկրնար  
շարժիլ : Եմ զործածած միջոցներս ոտքերս են որով  
զլխարկիս կը մօտենամ , ձեռքերս են որով զայն կ'առ-  
նեմ : Ապրանքներ տեղ տանելու միջոցները կառ-  
քերը , ձիերն ու նաւերն են : Եղջիկ մը դերձանի ու  
ասեղի միջոցով կը կարէ : Տղայք իրենց ծնողաց միջո-  
ցաւ կը իննամուին և զիրքերու ու դասատուներու միջո-  
ցաւ կրթութիւն կ'ըստանան :

Յ. Գիտեմ թէ ինչ է յուսաւ որ դէպք մը պիտի  
պատաշի : Կրնամ յուսաւ որ՝ եթէ ապրիմ , մեծ և ու-  
ժեղ մարդ մը և իմ նմաններուս օգտակար պիտի ըլ-  
լամ : Կրնամ յուսաւ որ իմ բարեկամներս գոհ պիտի  
ըլլան իմ վարմունքէս : Եթէ գմբաղլութիւն մը կրեմ ,  
ըլլան իմ վարմունքէս : Եթէ գմբաղլութիւն մը կրեմ ,  
կը յուսամ որ կարող պիտի ըլլամ համբերու թեամբ  
կրել : Եթէ յաջողեմ աշխարհիս մէջ , յուսամ որ դո-  
ոող և մապարծ պիտի չըլլամ :

Յ. Գիտեմ թէ ինչ է կտիւ : Կը վախնամ ու բիշին  
չարիք ընելու , վասն զի չեմ ուղեր որ ուրիշն ալ ինձի  
չարիք ընէ : Եմ խէլջս կ'ըզզայ թէ որ բանն աղլի է  
չարիք ընէ : Խոյն խայլն անհանդիստ կ'ընէ զիս  
որ բանը զէշ է : Խոյն խայլն անհանդիստ կ'ընէ զիս  
երբոր պարագս չկատարեմ , երբոր ուրիշին անիբաւու-  
թիւն ընեմ :

Յ. Կարող եմ ոքոշել բան մը ուրիշ բանէ մը՝ բաղւ  
դատելով և զգայարանքս դորձածելով : Կրնամ որոշել  
անկիւն մը քառակտսիէն , բոլորակ մը զուղահեռական  
գծէ : Եթէ մէկը կասկածի այս բանիս վրայ , կարող  
եմ հաստատել ըստիս հշարպութիւնն այդ ձեերը գծե-  
լով և անուանելով : Կրնամ նաև այլ և այլ զոյներ  
գով կրամէ որոշել : Կրնամ որոշել , թէ մարդ մը մարդ է ,  
իրաբմէ որոշել :

զլիսարկ մը զլիսարկ է : Երբոր զիբք մը կը տեսնեմ իմ աչքիս առջե , մէկը չկրնար հաւայցնել ինձ որ այդ զիբքը զլիսարկ է , վասն զի զիտեմ որ իմ տեսանելքս ու միտքս չեն խարեր զիս : Եթէ մարդ մը ձի մը ցոյց տալով բար ինձ , աշա ուղտ մը , իսկոյն պիտի հասկրնամ որ այն մարդը ճշմարիտը չխօսիր . վասն զի իմ աչքս և այն կենդանեաց վրայ ունեցած ծանօթութիւնս անոր ըստին հավառակը կը հաստատեն :

9. Կարող եմ բան մ'ուրիշ բանի մը հետ բաղդասարել և որոշել ու դադել թէ ո՞րն է ամենէն լաւը : Կրնամ իմ զմելիս ընկերիս զմելին հետ բաղդատել և ըսել թէ ի՞նչ դարձերութիւն ունին : Կրնամ զիբքս ուրիշ զիբքի մը հետ բաղդատել և դատել թէ ո՞րն է աւելի մեծը : Կրնամ բաղդատել զպրոյէն մինչեւ մեր տունն եղած հեռաւորութիւնն և ուրիշ տղու մը տան հեռաւորութիւնը զպրոյէն և ըսել թէ մեզմէ ո՞վ աւելի հեռու կը գտնուի անկից : Կրնամ երեք բան իրարու հետ բաղդատել և որոշել թէ ո՞րն է լսու , ո՞րն է լսուադյնն և ո՞րն է ամենէ լսու :

10. Գիտեմ թէ ի՞նչ տարբերութիւն կայ պարհաւառէ մը և արդիւնքի մը մէջ : Երբոր հովը սաստիկ կը փէք , ծառերը վար կը տապալին . հովուն փշելը պատճառն է և ծառերուն տապալին արդիւնքը : Եթէ մէկն ելնէ ըսէ ինձ որ ծառերը տապալիցան , վասն զի կատու մը մշակուեց , իսկոյն պիտի ըսեմ որ ճիշտ չէ :

11. Կրնամ մտքով այլ և այլ բաներ երևակայել : Կրնամ երեակայել որ ծնողքս շատ պիտի վշտանան եթէ ուսմունք չսորվիմ . կրնամ երեակայել թէ ո՞րչափ պիտի վախնայի եթէ ո՞իշերով անտառը մնայի . կրնամ երեակայել թէ մեծ զուարժութիւն է աղւոր օդով ծագ-

կաւէտ պարտէղ մը պտըտիլը : Երեակայութիւնն այօ և ուրիշ այլանդակ բաներ կրնայ տեսնել :

12. Կրնամ իմ չիշութիւնն կրթել : Կրնամ արդէն տեսած կամ լսած բանս այլել : Կը յիշեմ որ այս առաւօտ կանուխ ելայ ու զպրոց եկայ : Կը յիշեմ որ կաղանդին կաղամար մ'ընծայեց ինձ հայրս : Կը յիշեմ որ ուրախութիւն զգացի երբոր դաստառս յայնեց ինձ որ լւա աշակերտ մ'եմ , վասն զի կ'աշխատիմ :

### ՅԱՆԿ

#### ՄԱՍՆԱ

	ԵՐԵ
Պարզ նախադասութիւններ . . . . .	5
ՊԱՐԶ ԶՐՈՅՑՆԵՐ — Շիշար ու գառնուկ . . . . .	12
Միհրան ու իր շոնը . . . . .	13
ԳՀՈՐԳ . . . . .	14
Առաւօտ , օրհասարակ . . . . .	15
Իրիկոն , մեղու . . . . .	16
Կարապ . . . . .	19
ԳԱՎՈՒ . . . . .	21
Թառմակի մը պատմութիւնը . . . . .	22
ՌԱՊՈՒ . . . . .	24
Շամ մը պատմութիւնը . . . . .	26
ԿԵՆԴՐԱԿԱՆԵՐ — Շիշար . . . . .	29
ՉԻ . . . . .	30
ԿԵՐՎ . . . . .	32
ԱԼԻ ԱՐՑԾՈՒ . . . . .	34
ՇՈՎՈՒ . . . . .	36
ՊԳՈՒԹԻ աղջիկն ու պէտէկը . . . . .	37
Մանուկն ու շերանը . . . . .	37
ԱՆՈՒՅՆ ու մուկը . . . . .	38
Արքոն զառնուկը . . . . .	40
Արագին ու կուժը . . . . .	44
Շոնն ու իր տէրը . . . . .	45
Բարի գործ . . . . .	46

Ճերմակ արջ . . . . .	48
ՏՈՒՆ ՄԷ — Պուրսի կողմը . . . . .	50
Ճամբորդն ու առիմծը . . . . .	52
Նապաստակն ու կրիայն . . . . .	53
Ս.րազագործն ու ժրազլուխը . . . . .	55
ՏՈՒՆ ՄԷ — Ներսի կողմը . . . . .	58
Խշանի մը կալանաւորները . . . . .	60
Ա.ոփած . . . . .	62
Ա.ազք . . . . .	64
Ինձ . . . . .	66
Փիղ . . . . .	68

## ՆԱԽԱԳԻՑԵԼԻՔ

## ՄԱՍՆ Բ.

Ներածական դաս . . . . .	70
Աստուած եւ իր գործերը . . . . .	70
Կենդանիք . . . . .	71
Մարդիկ . . . . .	75
Դաշտ, մշակութիմ, բոյս . . . . .	81
Գայտ, ծառ . . . . .	85
Մ'ԿԵՆԴԱՆ ԵՌԱՐԿԵՆԵՐ — Քարեր, Թեր-	
Թարար, քարածովի եւ այլն . . . . .	86
Զուր — ովկիանոս — նաւեր — գնտեր . . . . .	91
Զգայարանք . . . . .	95
Գոյն . . . . .	99
Առարկաներու ձեւեր . . . . .	101
Առարկայից մեծութիմն ու չափը . . . . .	110
Խօսակցութիմ — լեզու . . . . .	112
Գրելու արուեստ — գիրք . . . . .	115
Ցպազրութին — զրականութին . . . . .	118
Համրանք — թիւ . . . . .	122
Ժամանակ . . . . .	126
Կալուածք — աշխատանք . . . . .	130
Գնել — ծախել — դրամ . . . . .	133
Պաշտօն ու առուտոր . . . . .	135
Առնդզութին — զրօսանք — զուարձութին . . . . .	141
Կառավարութին — նշաներ — կարգեր . . . . .	143
Ընկերական կարգադրութիմներ . . . . .	147
Միտք . . . . .	151



